



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22

U-55

ԱԻԵՏԱՐԱՆ

208.21
U-59

Կ Ա Մ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Հ Ա Ն Գ Ե Ր Զ

ՀԱՅԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՒ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

ՅԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒ

Զ Ա Ր Դ Ա Ր Ե Ա Լ

ՆԱԽԱԳԻՏԵԼՈՐ, ՄԵԿՆՈՒԹԵԱՄԲԵ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ
ԵԱՆՈԹՈՒԹԵԱՄԲԵ

ԱԼԷՔՍԻԱՆՈՍ Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆԷ
(ԿԷՕԶԻՒՊԷՕՅԻՒԲԵԱՆ)

Բ. ՄԱՍՆ

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱԵԱՆ

Կալաթա Գուրգուրու խան քիւ 7

1905

1904
44867



4014-2009

مهارف نظارت جلیله سنک ۵۸ نومرولی و فی ۱۲ نیسان ۳۲۱
تاریخاو رخصتنامه سبیلہ طبع اولمشدر

ԱՌ ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏՆ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԲ. ՍԱՊՊԱՂԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐԳ ՏԱՆՆ ԿԻԼԿԻԱՅ

Զօնէ նուիրէ

ԶԱՅՍ ՄԱՏԵԱՆ

ՎԱՐՈՒՅ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՓՐԿԶԻՆ

Ի ՆՇԱՆ ՈՐԴԻՍԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ԽՈՐԻՆ ՄԵՇԱՐԱՆԱՅ

ԱԼԵՔՍԻԱՆՈՍ Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

(ԿԻՕԶԻԿՈՒՅՈՅԻՒՔԵԱՆ)

Շնեալ յԱրաբկիր

Կենսագրութիւն. — Մեկնիչք և Քննադատք չեն կրցած լաւ մը ճշգրեւ ցարդ, թէ ո՞վ եղած է Ս. Մարկոսի հեղինակութիւնը կրող անձը:

Արդի գիտուններէն շատերը, կ'ըսեն թէ Նոր Կտակարանի այլ և այլ անցից մէջ նշանակուած հետեւեալ անձերը, Յովհաննէս՝ [Գործ. ԺԳ. 5], Յովհաննէս-Մարկոս՝ [Գործ. ԺԵ. 37], Մարկոս՝ [Գործ. ԺԵ. 39: Կող. Դ. 10] ևլն. միեւնոյն անձը կը կազմեն: Ընդհակառակն, ուրիշ հեղինակներ, ինչպէս են՝ Պարօնիուս [Annal., ann. 45, § 46.], Գալմէ, Տանքօ [Hist. revelationis N. T. Vindob. 1867, p. 274...], Հ. Բաթրիցի, ևլն. կը մերժեն առջիններուն կարծիքը, և կը պնդեն թէ Ս. Մարկոս Աւետարանիչ մեզի բոլորովին անծանօթ անձ մըն է, և կամ այն անձն է որուն համար Պետրոս Առաքեալ գրած է «Մարկոս որդի իմ» [Ա. Թուղթ, Ե. 13]: Ուրիշներ ալ կը կարծեն թէ այլ է Մարկոս Աւետարանիչ, այլ՝ Յովհաննէս-Մարկոս, և այլ՝ Մարկոս, Ս. Բառնաբասի ազգականը [Կող. Դ. 10]:

Սոյն կարծիքներէն և ոչ մին հիմնեալ է հաստատ փաստերու վրայ. ուստի անտեսելով զանոնք, ջանանք ընդհանուր կարծեաց հետեւելով կարծօրէն տեղեկագրելու Բ. Աւետարանչին կեանքը:

Ս. Մարկոսի թլփատութեան անունն էր Յովհաննէս, որուն վրայ աւելցաւ ապագային Մարկոս Հռովմէական անունը: Եւ ինչպէս ստէպ կը պատահի, սոյն երկրորդ անունը վերջը բոլորովին մոռցնել տուաւ անոր բուն իսկ անունը: Ս. Մարկոս եղբորորդին էր Բառնաբաս Առաքելոյն, և իր մօրն անունն էր Մարիամ որ կը բնակէր յերուսաղէմ [Գործ. ԺԲ. 12], բայց ծննդավայրին էր Կիպրոս կըղղին [Գործ. Դ. 36.]:

Մայրը՝ կանուխէն ընդգրկած էր Քրիստոնէութիւնը, և որովհետեւ ըստ բաւականի հարուստ էր սոյն ընտանիքը՝ ստէպ անոնց տունը կը հաւաքուէին քրիստոնեայք: Ս. Պետրոս ալ հաղիւ աղաւտեցաւ բանալէն հոն դնաց ապաստանելու [Գործ. ԺԲ. 12.]:

Սաւուղ ու Բառնաբաս երբ Անտիօքէ վերադարձան, բերելով իրենց հետ շատ մը ողորմութիւններ Երուսաղէմայ աղքատներուն,

րենց հետ տարին զՄարկոս ալ [Գործ. ԺԱ. 27—30.]։ Երբ Կիպրոսի հասան, հոն մէկ քանի ամիս կենալէ վերջը գնացին ի Պէրգէ Պամփիլիոյ, և անկից ուղեցին Փոքր Ասիոյ խորերը երթալ քարոզելու, բայց Մարկոս չուղեց անոնց ընկերանալ, ու ետ դարձաւ յերուսաղէմ [Գործ. ԺԳ. 13.]։ Հաւանական է որ Մարկոս տկարութիւնն ունեցած էր վախնալու այսպիսի վտանգաւոր ճամբորդութենէ մը. բայց յետոյ զգաց իր այս տկարութիւնն, և երբ Պողոս Առաքեալ իր երկրորդ մեծ ճամբորդութեանը ձեռնարկեց, Մարկոս ալ յօժաբակամ ուղեց անոր հետեւիլ [52 Փրկչի թուականին], իր քեռուոյն Բառնաբասայ միջնորդութեամբ։ Այս անգամ Պողոս Առաքեալ չուղեց զայն իր հետ առնուլ՝ քանի որ առաջին անգամուն ձգած էր զիրենք ու չէր ուղած աշխատիլ իրենց հետ։ Սոյն մերժումէն ծագեցաւ անհամաձայնութիւն մը Բառնաբասայ ու Պողոսի միջեւ, այնպէս որ հարկ եղաւ, միւս Առաքելոց կարգադրութեամբ, իրարմէ բաժնուիլ և տարբեր ուղղութեամբ երթալ քարոզելու։ Բառնաբաս Առաքեալ իր հետ օգնական առաւ զՄարկոս ու գնաց ի Կիպրոս [Գործ. ԺԵ. 37-41]։

Հոս կը կորսնցնենք Ս. Մարկոսի հետքն, ու կը դառնանք զինք 63ին ի Հռովմ Ս. Պողոսի հետ, երբ ասիկայ բանտարկուած էր, ու ետքը դէպի 66ին՝ յԵփեսոս, նոյն Առաքելոյն երկրորդ բանտարկութեան միջոցին [Կող. Դ. 10; Փիլիմ. 24; Բ. Տիմ. Դ. 11.]։

Նմանապէս Ս. Մարկոս եղած էր Ս. Պետրոսի անբաժան ընկերն [Ա. Պետ. Ե. 13]։

Ըստ Ս. հարց, Ս. Մարկոս քարոզած է Ստորին-Եգիպտոս, ու հիմնած Աղեքսանդրիոյ Եկեղեցին և եղած անոր առաջին Եպիսկոպոսը [Եւսեբ. Պատմ. Եկեղ. Բ. 16. Ս. Հերոնիմոս de Vir, illustr. c. VIII; S. Epiph. Hær. LI, 6]։ Ըստ Ս. Իրէնէոսի, նորա մահը հանդիսացած է Ս. Պետրոսի մահու ընդէն վերջը [Ընդ. Մարկ. Գ. 1.], հետեւաբար 67 թուականէն ետքը։ Կ'ըսուի թէ Աղեքսանդրիոյ բնակիչք մեծացոյցին զանիկա չարաչար մահուամբ։ Տե՛ս, Nicephor. Hist. Eccl. II, 43։

Ս. Մարկոսի մեռնելէն քանի մը դարեր վերջը, տակաւին կը պահուէր Աղեքսանդրիոյ մէջ նորա վերարկուն, զոր ամէն նոր Եպիսկոպոս կը կրէր իր Օծման օրը։

Յանուն Ս. Մարկոսի կառուցուած կայ Բիւզանդական ոճով սքանչելի Եկեղեցի մը Վենետկոյ մէջ, որու պաշտպան սուրբն է, և

որու զինանշանին վրայ գծուած է նաեւ առիւծ մը որ Ս. Մարկոսի խորհրդանշանն է։

Հարազատութիւն հեղինակին։— Ամենահին ու ամենավստահելի անձանց վկայութիւններն անհերքելի փաստ մը են թէ ստուգիւ Ս. Մարկոս եղած է Բ. Աւետարանի հեղինակն։ Ինչու որ այս անձինք՝ որոնք գրեթէ Առաքելոց դարուն մէջ, և կամ անոնցմէ քիչ ետքը ապրած են, չէին կրնար խաբուիլ և կամ խարել այնպիսի գրուածոց մասին որք նուիրական հանգամանք մը ունէին։ Արդ, եթէ ողն հեղինակաց գրուածոց միտ գնենք, պիտի տեսնենք թէ, համամիտ կը պաշտպանեն Բ. Աւետարանի հեղինակին՝ ճարագատութիւնը։

Այսպէս, Բարիաս՝ Ս. Յովհաննու աշակերտը, կը գրէ առ Եւսեբ. [Պատմ. Եկեղ. Գ. 39] «Յովհաննէս երէց կը պատմէ, թէ Մարկոս որ Պետրոսի թարգմանն իսկ եղած է, ճշգրտիւ գրի անցուց իր բոլոր յիշած բաները. բայց չհետեւեցաւ կարգաւ այն իրերուն զորս Քրիստոս ըսած կամ ըրած էր, վասն զի ինք ականջալուր չէր եղած Տիրոջ ու ոչ ալ անոր հետեւորդներէն եղած էր անձաւք»։

Նմանապէս՝ Ս. Իրէնէոս [140—202] կը գրէ [Ընդ. Հերեմ. Գ. 1; Եւսեբ. Պատմ. Եկ. Ե. 8]. «Մատթէոս գրեց իր Աւետարանը, երբ Պետրոս ու Պողոս կը քարոզէին ի Հռովմ. և հոն կը հաստատէին Եկեղեցին։ Ասոնց մեկնելէն ետքը, Մարկոս, Պետրոսի աշակերտն ու թարգմանը, գրի անցուց ինք եւս, այն բաները զորս քարոզած էր Պետրոս»։

Նոյն բանը կը կրկնէ նաեւ Կղէմէս Աղեքսանդրացի, և կը յաւելու թէ նոյն իսկ Հռովմայ հաւատացելոց աղաչանաց վրայ Մարկոս շարադրեց իր Աւետարանը, զոր երբ իմացաւ Պետրոս Առաքեալ ոչ արգելք յարոյց ու ոչ ալ քաջալերեց անոր հեղինակը [Տե՛ս Եւսեբ. Պատմ. Եկեղ. 2. 14]։

Այսպէս ալ, Որիգենէս [Տե՛ս Եւսեբ. Վերք], Տերաուղիանոս [Ընդ. Մարկ. Դ. 5], Եւսեբիոս Կեսարացի [Պատմ. Եկեղ. Բ. 15], Ս. Հերոնիմոս, Ս. Յովհ. Ոսկեր. եւլն. եւլն. որոնք միաբերան կը վկայեն թէ երկրորդ Աւետարանի հեղինակը նոյն ինքն Ս. Մարկոսն է։

Բացի այս ուղղակի փորձերէն, եթէ ամենահին Եկեղեցւոյ Հարց գրուածոց միտ գնենք, կը տեսնենք որ, միայն Ս. Մարկոսի Աւետարանին յատուկ եզոզ անցքերէն չառերն՝ անոնք յառաջ բերած են, որով անուղղակի փորձ մը կրնան սեպուիլ երկրորդ Աւե-

տարանի հեղինակին հարադատութեանը: Այսպէս, Ս. Յուստինոս [114—168] [Ընդդ. Տրիք. ՃԶ.] կը պատմէ թէ Տէրն մեր իր երկու Առաքելոց «Որդիք Որոտման» անողոսը տուաւ, որ միջադէպը լոկ Մարկոս Աւետարանին է որ յառաջ կը բերէ [Գլ. Գ. 17]:

Հեղինակին հարադատութեան ամենախալուսն ապացոյցներէն մին ալ այն է, որ երկու է՝ն հին թարգմանութեանց մէջ, այսինքն՝ Ասորականին ու Իտալականին, որոնք երկրորդ դարուն եղած են, միանգամայն կը գտնուի Ս. Մարկոսի Աւետարանը: Բայց մեք այսչափին որ ըսինք հոս, լոկ քննադատական մէկ քանի գաղափար մատակարարելու համար էր, ու ոչ թէ Ս. Մարկոսի Աւետարանին հարադատութեան մասին ո՛ր և է կասկած մը փարատելու համար, քանի որ այսպիսի կասկած մը կրօնական թէ պատմագիտական ծանր յանձանք մը կրնայ սեպուիլ:

Եղան վերջերս կարգ մը Նորադանդ հեղինակներ, որոնք ուղեցին փորձել թէ Ս. Մարկոսի Աւետարանին ԺԶ. Գլխոյն մէջ, ինչորորդ համարէն սկսեալ մինչեւ վերջը, այսինքն՝ քսաներորդ համարը, եկամուտ յաւելուած մըն է ու ոչ թէ Ս. Մարկոսի հեղինակութիւնը: Եւ այս իրենց կարծիքը գլխաւորաբար այն բանին վրայ հիմնած են թէ քանի մը ձեռագրաց մէջ չի գտնուիր, եւ թէ ոճը տարբեր կ'երևի: Բայց ասոնք պատճառ մը չեն, քանի որ, ուրիշ բոլոր ձեռագրաց մէջ այն կտորը կը գտնուի, և ի մասնաւորի ամենաընտիրներուն մէջ, ինչպէս է Codd. A. C. D.: Նմանապէս, հին թարգմանութեանց մեծագոյն մասը, և Ս. Հարց ամէնը զայն ընդունած են. ուստի և այս ամէնը լաւագոյն կ'արժեն քան ափ մը վերջին դարու քմածին յոխորտանքը:

Ե՛րբ եւ ո՛ր գրուած է.— Ս. Մարկոսի Աւետարանին երբ գրուած ըլլալուն մասին երեք են մեկնչած կարծիքը: Առաջին կարծեաց աղբիւրն է Կղէմէս Աղեքսանդրացի, որու կը հետեւին Ռէյթմայր և Ժիլլի: Ասոնց նայելով, Բ. Աւետարանը Ս. Պետրոսի կենդանութեան ատեն գրուած է [Եւսեբ. Պատմ. Եկեղ. 2. 14.], և հաւանական է որ 42—49 թուականին գրուած ըլլայ:

Երկրորդ կարծեաց աղբիւրն է Ս. Իրէնէոս, ըստ որում՝ Ս. Պետրոսի մահունէն ետքը միայն գրուած է Ս. Մարկոսի Աւետարանը, և հետեւաբար 67էն ետքը: Եւ այս կարծեաց կը հետեւին Լանկէն. Ժ. Փ. Լանտ և ուրիշ շատ մը մեկնիչներ:

Իսկ երրորդ կարծեաց պաշտպանները կը ջանան նախորդ երկու

կարծիքներն իրարու հետ հաշտեցնելու. եւ կ'ըսեն թէ երկու հրատարակութիւն պէտք է եղած ըլլայ Ս. Մարկոսի Աւետարանին: Առաջինը՝ Ս. Պետրոսի կենդանութեան ատեն Հռովմայ մէջ, երկրորդը՝ անոր մարտիրոսութենէն ետքը, Եգիպտոսի մէջ: Այս կարծեաց կը հետեւին Ռիշար Սիմոն [Hist. crit. du Nouv. Test. t. I. p. 107] Պիափինկ [Das Evangel. nach Markus. p. 6]:

Բայց այս ամէնը առանց հիման չէնքեր են: Խիստ դժուարին, այլ մանաւանդ անհնարին կ'երևի մեզ այս խնդրոյն լուծումը: Մա միայն ստոյգ գիտենք թէ, անշուշտ պէտք է երուսաղէմայ կործանումէն առաջ գրուած ըլլայ Ս. Մարկոսի Աւետարանը, որովհետեւ նա կը բովանդակէ Քրիստոսի ըրած մարգարէութիւնը. եւ այլուր ալ չենք հանդիպիր բնաւ այնպիսի անցքի մը, ուր ցոյց տրուած ըլլայ թէ երուսաղէմայ կործանումը արդէն իսկ տեղի ունեցած է: Տե՛ս. Բաթրիքի, De Evangelii, t. 1. pp. 36—51:

Գալով հիմայ սոյն Աւետարանին ո՛ւր գրուած ըլլալուն, միաբերան կը վկայեն բոլոր եկեղեցական Մատենագիրք թէ Հռովմ գրուած է: Միայն Ս. Յովհ. Ոսկերեբան կը գրէ «Մեկն. Ս. Մատթ.» թէ Եգիպտոսի մէջ գրուած է սոյն Աւետարանը, բայց Ոսկերեբան՝ սոյն կարծիքը ո՛չ իբր ստոյգ՝ այլ ի լրոյ միայն կը գրէ: Մեր Աւետարանի թարգմանութեան մէջ ևս սոյն կարծիքն ընդունուած է:

Որո՞նց ուղղուած է, եւ ի՞նչ նպատակաւ. — Վերը տեսանք Կղէմէս Աղեքսանդրացու մէջ խօսքէն, թէ Հռովմայեցոց խնդրանքն էր որ Ս. Մարկոս գրեց իր Աւետարանը: Արդէն իր գրուածքին ընդհանուր իմաստէն, և մէն մի մանրամասնութենէն ակներեւ կ'երևի թէ այնպիսեաց կ'ուղղէր Ս. Մարկոս իր Աւետարանը, որոնք բոլորովին օտար էին Հրէիցմէ: Եւ ստուգիւ, մինչ Ս. Մատթէոս լեցուն է հրէաբանութեամբ, և այնպէս կ'ենթադրէ թէ իր ընթերցողները հմուտ են անոնց. ընդհակառակն, Ս. Մարկոս կը կը ջանայ բոլորովին խորշելու ամէն հրէաբանութենէ, և երբ կը տեսնէ որ իրաց բնական բերմամբ ստիպուած է ակնարկութիւն ընել հրէական սովորութիւններու, անմիջապէս կը փութայ անոնց բացատրութիւնն ալ տալու իր ընթերցողաց: Այսպէս, կը մեկնէ թէ Ի՛նչ ըսել է քաներեզես [Գլ. Գ. 17]: Տալիդա կումի [Ե. 41]: Կորթան [Ե. 11]. Աքաա [Ժ. 36]: Էլի էլի, Լաւմա Սաքաֆաւի [Ժ. 34]:

Նմանապէս կը մեկնէ շատ մը հրէական ծիսային կամ ազգային սովորութիւններն, որք անհասկանալի պիտի ըլլային օտարի մը հա-

մար: Այսպէս, կ'ըսէ թէ Հրէայք չուացուած ձեռքով հաց չեն ուտեր [Է. 3.4]. Թէ բաղարջակերաց առաջին օրը կը զենուին Հրէայք զատկական Գառնը [Ժ. Գ. 12], ևն.: Ոչ ալ հրէական Օրինաց անունը կը յիշէ, և կամ մարդարէից խօսքերով կ'ուզէ փորձել Յիսուսի ձգտարիտ Մեծիայն ըլլալը: Բացի երկու դէպքէ [Ա. 2.3: ԺԵ, 26] ուր չէզոք կերպիւ մը առաջ կը բերէ Հին Կտակարանի խօսքը: Նշանակելի դէպք մըն ալ սա է որ իր գրութեան մէջ ստէպ կը հանդիպուի յունացած լատին բառերու, ինչպէս են հետեւեալք, σπεculator [spiculator=Դահիճ] Զ. 27: φραγέλλω flagello=գանձ հարկանել [ԺԵ. 15: κοδράντης [quadrans=նախարակիս] ԺԲ. 42: ևն. ևն.: Որոնցմէ յայտնի է իմանալ թէ կռապաշտութենէ դարձող քրիստոնէից էր որ Ս. Մարկոս կ'ուզէր իր Աւետարանը, քանի որ Հրէութենէ դարձողներուն համար, բոլորովին զուրկ պիտի ըլլաին կարեւորութենէ այն բացատրութիւններն ու տեղեկութիւններն զորս տուած է Ս. Մարկոս:

Գալով այն կէտին, թէ ի'նչ նպատակաւ գրեց Ս. Մարկոս իր Աւետարանը, Կղէմէս Աղեքսանդրացոյ, մեր վերը յիշած անցքէն, ինչպէս նաև Ս. Հերոնիմոսի հետեւեալ խօսքերէն «Մարկոս, Պետրոսի աշակերտն ու թարգմանը, Հռովմ բնակող եղբարց աղաչանքին վրայ» համառօտիւ գրեց իր Աւետարանն ինչպէս ինք լսած էր նոյն ինքն Պետրոսէն, De viris illustribus, c. VIII», յայտնի կ'երեւի թէ երկու կէտ նպատակի ունեցաւ գրելու իր Աւետարանը, Նախ՝ սովորեցնելու Հռովմայեցի քրիստոնէից կրօնքի էական սկզբունքները, և երկրորդ՝ մնայուն յիշատակ մը թողուլ Պետրոս Առաքելոյն քարոզութեանը, ամբիօրեկով զայն համառօտիւ իր Աւետարանին մէջ:

Ահա այս է պատճառը որ բնաւ չի մոռար վարդապետական խնդրոց մէջ, ոչ կը պատճառաբանէ ու ոչ կ'եզրակացնէ Ս. Մատթէոսի նման, այլ պարզապէս կը ցուցնէ իրեն ինչպէս են իրենց վիճակին մէջ:

Ի'նչ լեզուաւ գրուած է:— Իսկզբան այնպէս կը թուի թէ Հռովմայեցոց համար գրուած ըլլալով Ս. Մարկոսի Աւետարանը, պէտք էր անոնց իսկ լեզուաւ, այսինքն լատիներէն գրուած ըլլար, ինչպէս կ'եզրակացնէ Պարօնիոս [Annal. ad ann. 45, § 39...]: Բայց գիտնոց ու Մեկնչաց ստուար մասը, Ս. Հերոնիմոսի և Ս. Օգոստինոսի հետեւելով, կը պնդեն թէ յոյն լեզուաւ գրուած է Ս. Մար-

կոսի Աւետարանը: Եւ յիշաւի, պատմութիւնը կը վկայէ թէ առաջին դարերու մէջ, բոլոր Արեւմտեան, և ի մասնաւորի Հռովմայեցի եկեղեցոյն կրօնական լեզուն յունարէնն էր: Յոյներ էին անոնց մասնագիրներն, և յունարէն էր անոնց սրբազան Գրեանքը, անոնց արարողութիւններն ու ծէսերը: Արեւմտեան եկեղեցոյ մէջ երեւցած է'ն հին հեղինակութիւններն, ինչպէս են, Ս. Կղէմէսի թուղթերը, Բասղէօր տ'էրմաս, Կղեմէան մեկնութիւնք, Ս. Յուստինեայ գործքերն ևն. ևն. բոլոր յոյն լեզուաւ գրուած էին [M. Milman, Latin Christianity, I. p. 34.]:


Եւ ինչ'ու պիտի դարձանանք որ Ս. Մարկոս՝ յունարէն գրած է իր Աւետարանը, եթէ այլուստ գիտենք թէ, Յովսէպոս եւս իր գործքերն այս լեզուով գրեց Հռովմայեցոցմէ հասկցուելու համար, թէ Ս. Պողոս ու Ս. Իգնատիոս ալ, իրենց առ Հռովմայեցիս ուղղած թուղթերն յունարէն գրեցին [Drach. Epîtres de S. Paul, p. 7.]: Տե'ս նաև, Richard Simon, Hist. crist. du Nouv. Test., ch. XI:

Արեւելեացս մէջ, ի մասնաւորի Ս. Յովհ. Ոսկերերանի կարծեաց հետեւելով, ընդունուած է թէ Եգիպտական, այսինքն հին Ղպտի լեզուաւ գրուած է Ս. Մարկոսի Աւետարանը, բայց ինչպէս ըսինք վերը՝ սոյն կարծիքը, որ ի մասնաւորի յեցած է այն սկզբան վրայ թէ Ս. Մարկոս՝ Աղեքսանդրիոյ մէջ գրած է իր Աւետարանը, ուրիշ ո' և է փորձ մը չունի ի հաստատութիւն, բացի Ս. Յ. Ոսկերերանի մէկ հատուածէն:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տե'ս, Մատթէոսի հատորին մէջ նշանակուած հեղինակներն, Մալտոնացիոս, Գօսնէլիոս ա Լաբիտէ, Տ. Գալմէ...: Եւ ի մասնաւորի հետեւեալք.

- Jac. Elsner, Comment crit.-philol. in Ev. Marcum. Lugd. Batav. 1773.
- F. X. Patritii, S. J., In Marcum comment. Rom. 1862.
- Rev. G. F. Maclear, The Gospel accordiag to St. March, with notes and introduction, Cambridge, 1877.



ԱԻԵՏԱՐԱՆ

Ը Ս Տ

Ս. ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

Յովն. Մկրտիչ կը մկրտէ իր քով ապալիարելու եկողները

1. Սկիզբն Աւետարանի Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Աստուծոյ:
2. Որպէս եւ գրեալ է ի մարգարէս. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջիքս, որ հանդերձեացէ զճանապարհքս առաջիքս: Մաղաթ. Գ. 1.
3. Չայն բարբառոյ յանապատի. Պատարաս արարեմ զճանապարհս Տեառն, և ուղիղ արարեմ զշահագոյնորս: Եսայ. Խ. 3: Դուկ. Գ. 4: Յովն. Ա. 23: Մատթ. Գ. 3:
1. Յիսուսի Քրիստոսի, Աստուծոյ Որդւոյն, Աւետարանին սկիզբը:
2. Ինչպէս որ գրուած է մարգարէութեանց մէջ. Ահա, ես կը զրկեմ քու առջեւ իմ հրեշտակս, որ պիտի պատրաստէ քու ճամբարդ քու առջեւ:
3. Խօսելու ճայն մը անապատին մէջ. Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճամբան, և չտկեցէ՛ք անոր ուղին:

2. Որպէս եւ գրեալ է ի մարգարէս.— Սոյն մարգարէներն են, Եսայի (Խ. 3.), և Մաղաթիա (Գ. 1.) որոնց մարգարէութիւններն ի մի ձուլած է հոս Ս. Մարկոսը.— Զհրեշտակ իմ, այսինքն՝ իմ պատգամաբերս, իմ յառաջընթացս. Տէրն մեր ալ սոյն կերպով անուանած էր զՅովն. Մկրտիչ, Տե՛ս Ս. Մատթ. Գ. 1.

3. Պատրաստ արարեմ զճանապարհս.— Տե՛ս ասոր Մեկնութիւնը Մատթ. Գ. 3:

4. Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, և քարոզէր մկրտութիւնն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց:

5. Եւ երթալ առ նա ամենայն աշխարհն Հրեասանի, և երուսաղէմացիք ամենեքեան. և միլըռ տէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոտովանեալ զմեղս իւրեանց: Մատթ. Գ. 5.

6. Եւ եր Յովհաննէս զգեցեալ սոսե ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա մարախ՝ և մեղր վայրենի: Մատթ. Գ. 4. Դևոս. ԺԱ. 22.

7. Քարոզէր և ստէր. Գայ զօրագոյնն քան զիս զինի իմ, ուրում չեմ բաւական խոնարհելու ծանել զխրացս կօշկոց նորա: Մատթ. Գ. 11. Դուկ. Գ. 16. Յովհ. Ա. 27.

8. Ես մկրտեցի զձեզ քրոյ, և նա մկրտեցէ զձեզ Հոգւոյն Սբոյ: Գործ. Ա. 5. ԺԱ. 16. ԺԺ. 4.

Յիսուս կը մկրտուի Յովհ. Մկրտչէն, եւ անապատին մեզ կը փորձուի. — Կը սկսի քարոզելու եւ կը կոչէ յաշակերտութիւն զՊետրոս, զԱնդրէաս, զՅակոբոս եւ զՅովհաննէս:

9. Եւ եղեւ, յաւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարէթ Գալիլեացոց, և մկրտեցաւ ի Յովհաննէս ի Յորդանան:

5. Ամենայն աշխարհն Հրեասանի. — Պաղեստինոս հարաւային մասը, ի բաց առեալ Սամարիա, Գալիլեա և Պերէյ — Խոստովանեալ զմեղս իւրեանց: Ի՞նչ բանի մէջ կը կայանար սոյն խոտովանութիւնը կարելի չէ գիտնալ ճշգրիտ կերպով, բայց ինչպէս կը ցուցնէ յոյն բնագիրը, եփսոմօ-քոդօնմենի (ἐξομολογούμενοι) կը նշանակէ Թէ պէտք էր հրապարակային խոստովանութիւն մը ըլլար, այնպէս որ իւրաքանչիւր անհատ իր բարեպաշտութեան ու խոնարհութեան համեմատ, կարելի է չէր իսկ մերժէր մեղքերու մանրամասնութեանց խոտովանութիւնն ալ ըսելով:

6. Եւ եր Յովհաննէս զգեցեալ սեսե ուղտու. — Տե՛ս Ս. Մատթ. Գ. 4, մեկնութիւնը:

7-8. Տե՛ս, Մեկն. Ս. Մատթ. Գ. 11:

9. Եկն Յիսուս... Եւ մկրտեցաւ... — Ըստ Ս. Դուկասու (Գ. 23), Յիսուս այն ատեն շուրջ 30 տարեկան էր, որ հասակին

9. Եւ եղաւ որ այն օրերը Յիսուս եկաւ Գալիլիոյ Նազարէթ քաղքէն, և Յորդանանու մէջ մկրտուեցաւ Յովհաննէսէն:

5. Ամենայն աշխարհն Հրեասանի. — Պաղեստինոս հարաւային մասը, ի բաց առեալ Սամարիա, Գալիլեա և Պերէյ — Խոստովանեալ զմեղս իւրեանց: Ի՞նչ բանի մէջ կը կայանար սոյն խոտովանութիւնը կարելի չէ գիտնալ ճշգրիտ կերպով, բայց ինչպէս կը ցուցնէ յոյն բնագիրը, եփսոմօ-քոդօնմենի (ἐξομολογούμενοι) կը նշանակէ Թէ պէտք էր հրապարակային խոստովանութիւն մը ըլլար, այնպէս որ իւրաքանչիւր անհատ իր բարեպաշտութեան ու խոնարհութեան համեմատ, կարելի է չէր իսկ մերժէր մեղքերու մանրամասնութեանց խոտովանութիւնն ալ ըսելով:

6. Եւ եր Յովհաննէս զգեցեալ սեսե ուղտու. — Տե՛ս Ս. Մատթ. Գ. 4, մեկնութիւնը:

7-8. Տե՛ս, Մեկն. Ս. Մատթ. Գ. 11:

9. Եկն Յիսուս... Եւ մկրտեցաւ... — Ըստ Ս. Դուկասու (Գ. 23), Յիսուս այն ատեն շուրջ 30 տարեկան էր, որ հասակին

10. Եւ նոյնժամայն ընդ վերանալ ի ջրոցն, ետես ցեղեալ զերկինս, և զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղանի՝ զի իջանէ ի վերայ նորա: Մատթ. Գ. 16. Դուկ. Գ. 22. Յովհ. Ա. 32.

11. Չայն եղեւ յերկնից և ստէ. Դու ես Որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ:

12. Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ: Մատթ. Գ. 1. Դուկ. Գ. 1.

13. Եւ էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ի սաւանայե, և էր ընդ գաղանս, և հրեշտակք պաշտէին զնա:

14. Եւ յետ մատնելոյն Յովհաննէս, եկն Յիսուս ի Գալիլեա, քարոզէր զԱւետարանն Աստուծոյ և ստէր. Մատթ. Գ. 12. Դուկ. Գ. 14. Յովհ. Գ. 43.

15. Թէ Կասարեալ ե ժամանակ,

միայն կրնային Դեւատացիք իրենց պաշտօնին վերաբերեալ գործերը տեսնել ըստ Օրինաց տրամադրութեան (Թիւք. Գ. 3): — Ս. Հեռոնիմոս կը պատմէ, Թէ իր ժամանակին հաւատացեալներէն շատերը կ'երթային Յորդանան գետ մկրտուելու, կարծելով որ հոն յուսանաւորութիւնն աւելի կատարեալ պիտի ըլլար (Onomasticon, s. v. Yordanis): Իսկ այսօր, Յունաց բովկրօնական հանգամանք մ'ունեցած է մէկն Չատիկի Յորդանան երթալ և հոն լուացուիլ, Ռուս ուխտաւորք ալ, հազիւ հազ Երուսաղէմ կը հասնին, տակաւին չհանգչած՝ ծով բերնով և առ հասարակ հետիոտն կ'երթան նախ Յորդանան լուացուելու, և ապա կ'աւրեն իրենց ծովը և կը վերադառնան յԵրուսաղէմ իրենց ծովը կատարելու:

12. Հոգին... — Կը նշանակէ հոս, Ս. Հոգին. — Յանապատ, տե՛ս. Մատթ. Գ. 1.

13. Փորձեալ ի սաւանայէ... — Տէրն մեր, իր կենաց բոլոր շրջանին մէջ, ուզեց

10. Եւ անմիջապէս ջրէն ելլելէ ետքը, տեսաւ երկինքը բացուած, և Աստուծոյ Հոգին իբր աղանի մը՝ որ կ'իջնէ անոր վրայ:

11. Չայն մը եկաւ երկինքէն ու ըսաւ. Դու ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ:

12. Եւ անմիջապէս հոգին անապատ կը տանի զայն:

13. Եւ հոն կեցաւ քառասուն օր, սատանայէն փորձուելով, և զաղաններու մէջն էր, և հրեշտակներ կը ծառայէին անոր:

14. Եւ Յովհաննէս մատնուէն ետքը, Յիսուս Գալիլեա եկաւ. Աստուծոյ Աւետարանը կը քարոզէր ու կ'ըսէր.

15. Թէ Լրացած է ժամանակը,

օրինակ հանդիսանալ մեզի, ենթարկելով ինքզինք մահացողեան, զրկանաց և նոյն իսկ փորձութեանց. որոնց մէջ ցոյց տուաւ մեզի Թէ ի՞նչպէս պէտք է որ համակամք մենք ևս այսպիսի պարագայից մէջ Աստուծոյ կամաց առանց տկարանալու կամ յուսահատուելու. — Եւ եր ընդ գաղանս. Յիսուսի առանձնացած տեղը այնպիսի վայրի ու խոպան էր, ուր վայրի զաղաններ միայն կրնային յաճախել. Սոյն զաղաններն էին, այն ատեն ինչպէս այսօր ալ, յովազ, բորեան, արջ և շնագայլ. — Եւ հրեշտակ պաշտէին զնա. Փորձութեանց ժամերուն, երբ մէկ մը յԱստուած ապաւինելով խորշի անոնց հեշտանքէն ու հրապոյրէն, այն ատեն պիտի զգայ ստուգիւ խղճի մեծ հանգարտութիւն մը, և սրտի բազր խաղաղութիւն մը:

15. Կասարեալ է ժամանակ: — Եկած հասած է այն ժամը որուն կը սպասէին այնչափ անձկանք, և որ ատեն պիտի զարմարանային. — Հասնեալ է արհայաւորութիւն Աս-

և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ: Ապաշխարեցէ՛ք և հաւատացէ՛ք յԱւետարանն:

16. Իբրեւ անցանէր առ ծովերէն Գալիլեացոց, ետես զՍիմոն և զԱնդրէաս զեղբայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա ուսկանս ի ծով. քանզի ձկնորսք էին: Մատթ. Գ. 18: Դով. Ե. 2:

17. Եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկա՛յք զհին իմ, և արարից զձեզ լինել որսորդս մարդկան:

18. Եւ վազվազակի թողեալ զուսկանսն, գնացին զհետ նորա:

19. Եւ մատուցեալ անտի սահաւիկ մի յառաջ, ետես զՅակովբոս Զբեղեայ, և զՅովհաննէս զեղբայր նորա. և գնոսա ի նաւին մինչ կազմէին ուսկանս և կոչեաց զնոսա:

20. Եւ վազվազակի թողեալ զնայրն իւրեանց զԶբեղեոս ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնացին զհետ նորա:

Յիսուս կը քարոզէ ի Կափառնաում Սինակոպից մեզ. — Կը բժշկէ դիւանաւոր մը, Պետրոսի գոքանցն եւ ուրիշ շատ մը հիւանդներ:

21. Եւ մօտենն ի Կափառնաում. և իսկ և իսկ ի չաբաթուն մըտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա: Մատթ. Գ. 13: Դով. Գ. 31:

22. Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ, և ո՛չ որպէս Գալիլէն: Մատթ. Ե. 28: Դով. Գ. 32:

23. Եւ էր ի ժողովուրդեանն նոստուծոյ, Աստուծոյ արքայութիւնը, Մեսիայի գալուստը, որ ատեն տեղի պիտի տար հին օրինաց ստուերը, ու սկսէր նոր կեանք մը, Տե՛ս Մատթ. Գ. 2:

23. Այս պիղծ կը նշանակէ դեւ Սի-

և հասած է Աստուծոյ արքայութիւնը: Ապաշխարեցէ՛ք ու հաւատացէ՛ք Աւետարանին:

16. Երբ կ'անցնէր Գալիլիոյ ծովուն եզերքէն, տեսաւ զՍիմոն և զԱնդրէաս՝ Սիմոնի եղբայր որ ուսկանս նստած էին ծովի մէջ. վասն զի ձկնորս էին:

17. Եւ Յիսուս ըսաւ անոնք ինծի հետեւեցէ՛ք, և ես պիտի ընեմ զձեզ որ մարդկան որսորդներ ըլլաք:

18. Ու շուտ մը, ձգելով ուսկանները, անոր ետեւէն գնացին:

19. Եւ անկէ քիչ մըն ալ առաւ իր թաղով, տեսաւ զՅակովբոս՝ Զբեղեայի որդին, և զՅովհաննէս զեղբայր նորդ, մինչդեռ կը նստէին իրենց ուսկանները ու կանչեց զանոնք:

20. Ու շուտ մը թողնով իրեն հայրը Զբեղեոս նաւին մէջ վարձկաններուն հետ, գնացին անոր ետեւէն:

21. Եւ մօտան Կափառնաում. անմիջապէս, չաբաթ օրով մտնելով ժողովատեղւոյն մէջ, անոնք կ'ուսուցանէր:

22. Ու կը զարմանային անոր վարդապետութեան վրայ, և կ'ուսուցանէր անոնց իբր թէ իշխանութիւն մը ունեցած ըլլար, և ոչ որպէս Գալիլէացի:

23. Եւ անոնց ժողովատեղւոյն

նակովային մէջ դիւանար մը կրնար մտնել որ արտաքուստ ո՛ր և է յուզում չէր ցոյց տար, և կամ արգելք չէր յայտնար աղօթից պաշտամունքին:

այր մի, յորում այս պիղծ ի նւա. որ ազադակեայ՝ և Դով. Գ. 33:

Թոյլ տուր, զի՞ կայ մեր եւ Յիսուս Նազովրեցի, եկիր կոչուել զմեզ. դիտեմք զքեզ աս, Սո՛ւրբդ Աստուծոյ:

Սաստեաց ի նա Յիսուս և Կարկեայ և ե՛լ ի դմանէ:

Եւ զարկոյց զնա այսն. և ազադակեաց ի ձայն մեծ, ի նմանէ:

Եւ զարմացան ամենքին, ու ճծել ընդ միմեանս և առ Զի՞նչ է այս նոր վարդապետութիւնը. վասն զի այս պիղծոց սաստէ, և հնազանսմա:

Եւ ել լուր նորա ընդ ամեկուրմն Գալիլեացոց:

Եւ վազվազակի ելեալ ի Վերդենէն, եկն ի տուն Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբաւ և անոնու հանդերձ: Մատթ. Ը. 14: Գ. 38:

Եւ զօքանչ Սիմոնի դնէր ացեալ, և վազվազակի ասեն վասն նորա:

Եւ մատուցեալ յարոյց զնա,

Զի՞ կայ մեր եւ եւ: — Իբր թէ ըսած Ո՛րջաի մեծ խորի կայ մեր ու քու մե՛նք որ չար ոգիներ ենք, և զո՛ւս տիան ես, Ուրեմն, դիւանարին խօսքը յուսայ կատարեալ անմասնութիւն մը զի ու բնութեան. խորին տարբերութիւնը շահուց ու միտումի Տե՛ս Մատթ. Ը. Կոր. 2. 14, 15:

Զի՞նչ է այս նոր վարդապետութիւն — Ո՛չ թէ կը զարմանայ ժողովուրդը ան վարդապետութեան նորութեան հա-

մէջ կար մարդ մը, որ այս պիղծէ ի նւա. որ ազադակեայ՝ և բռնուած էր. ասիկայ ազադակեաց ու ըսաւ:

24. Թո՛յլ տուր, ի՞նչ կայ մեր ու քու միջեւ, Յիսուս Նազովրեցի, եկար զմեզ կորսնցնելու. կը ձանչենք զքեզ, ո՛վ ես, Աստուծո՛յ Սուրբը:

25. Յիսուս յանդիմանեց զանկայ ու ըսաւ. Լուէ՛, ու ե՛լ ասիէ:

26. Եւ այս պիղծը չարչրկեց զայն. ու բարձրաձայն ազադակեց և ելաւ անկէ:

27. Եւ զարմացան ամենքը, այնպէս որ իրարու կը հարցնէին ու կ'ըսէին. Ի՞նչ է այս նոր վարդապետութիւնը. վասն զի այս պիղծերն անգամ կը յանդիմանէ իշխանութեամբ, և կը հնազանդին ասոր:

28. Եւ անոր համբաւը տարածուեցաւ բոլոր Գալիլիոյ կողմերը:

29. Եւ անմիջապէս ելլելով Ժողովատեղիէն, եկաւ Սիմոնի ու Անդրեասայ տունը՝ Յակոբաւ և Յովհաննու հետ ի միասին:

30. Ու Սիմոնի զօքանչը ջերմէ պառկած էր, և շուտ մը իրեն խօսեցան անոր մասին:

31. Եւ մօտեցաւ, անոր ձեռ-

մար. քանի որ նոր վարդապետութիւն մը չէր բարոյէր, այլ կը զարմանան անոր քաւրոգելու եղանակին նորութեան համար, քանի որ իշխանութեամբ կը քարոզէր՝ հակառակ Դպրոց տափսի քարոզութեան, և իր վարդապետութիւնն ընկերացած էր միշտ հրաշագործութիւններով:

31. Եւ պատեհ զնոսա, կը նշանակէ, Սեղանի վրայ սպասարկութիւն կ'ընէր անոնց:

կայեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն, եւ պաշտեալ զնոսա: քէն բռնեց ու զայն վերցուց. և ջերմը գնաց անկէ, ու անոնց կը ծառայէր:

32. Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զգիււահարս:

33. Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ զհրոնսն:

34. Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէսպէս ակտիւ, և դեռ բազումս հանն. և ոչ տայր խօսել գիււայն, զի գիտէին զնա թէ Բրիստոսն է: Ղուկ. Դ. 41.

Յիսուսի առաւելիմն աղօթելը.— Յիսուս առաջին անգամն ըլլալով քարոզութեամբ կ'ելնէ. — Բորոտի մը բժշկուիլը:

35. Եւ ընդ այդն ընդ առաւօտն, յարուցեալ էլ՝ և գնաց յանապատ տեղի. և անդ կայր յաղօթս:

36. Եւ գնաց զհետ նորա Սիմոն, և որ ընդ նմայն էին:

37. Եւ իբրեւ գտին զնա, առնին ցնա. թէ Ամենքին խնդրեն զքեզ:

38. Եւ ասէ ցնոսա. Եկա՛յք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայտ իսկ եկեալ եմ:

39. Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, և դեռս հանէր:

40. Գայ առ նա քորոս մի, տղաչէր՝ ի ծուներ իջանէր՝ և ասէր.

33. Յիսուսի նոյն օր զործած հրաշքներուն համբաւը թուած էր ամէն տեղ քաղքին մէջ. ուստի ամէն օր իր հիւանդներն առած իրիկունս՝ կը դիմէ Պետրոսի զօքանջին տունը: Առ զհրոնս, կը նշանակէ տանը զուսնեբուն քով, և ո՛չ քաղքին ծանօթ:

32. Եւ երբ իրիկունս եղաւ, արեւուն մօտած ատեն, անոր քով բերին բոլոր հիւանդներն ու գիււահարսերը:

33. Եւ բոլոր քաղաքը ժողովուած էր զուսնեբուն քով:

34. Եւ բժշկեց շատ մը հիւանդներ զանազան ակտիւ, և շատ մը գիււեր հանեց. և թոյլ չէր տար որ գիււերը խօսէին, թէ գիտէին անոր Բրիստոսն ըլլալը:

35. Եւ առտուն կանուխ, ելաւ ու գնաց անապատ տեղ մը. և հոն աղօթքի կեցաւ:

36. Եւ անոր հետեւեցաւ Սիմոն, և անոնք որ անոր հետն էին:

37. Ու երբ գտան զանիկայ՝ անոր ըսին. թէ Ամէն մարդ կը վնասէ զքեզ:

38. Եւ անոնց ըսաւ. Եկէ՛ք երթանք ուրիշ մօտաւոր գիւղաքաղաքներ ալ, որպէս զի հոն ալ քարոզեմ. վասն զի այս իսկ պատճառաւ ես եկած եմ:

39. Ու կը քարոզէր անոնց ժողովատեղիներուն մէջ ընդհանուր Գալիլեայ, և դեւեր կը հանէր:

40. Բորոտ մը եկաւ անոր քով, կ'աղաչէր՝ կը ծնրաղբէր ու կ'ը-

ղուներուն քով. ինչու որ Յիսուս տանը մէջ կը գտնուէր, և չէր կրնար քաղքին ալ և ալ զուսնեբուն քով միանգամայն զըստնուիլ:

40. Բորոտ մի:—Տե՛ս. Ս. Մատթ. Բ. 2. Ծանօթ:

Տէ՛ր, եթէ կամիս, կարող ես զիս սէր. Տէ՛ր, եթէ ուզես, կրնաս սրբել: Մատթ. Բ. 2. Ղուկ. Ե. 12.

41. Իսկ Յիսուս գթացեալ ձրգեաց զձեռն, մերձեցաւ ի նա՝ և անոր մօտեցաւ ցնա. կամիմ, սրբեա՛ց:

42. Եւ իբրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնս՝ և սրբեցաւ:

43. Եւ սաստեալ նմա, և հան զնա արտաք՝ վաղվաղակի, և ասէ.

44. Զգո՛յ՛ լեր, մի՛ ումեք ինչ ասիցես. այլ ե՛րբ, ցո՛յց զից քաղաքսն. և մատով վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամարեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա: Ղուկ. Ժ. 2.

45. Եւ նա ելեալ, սկսաւ քարոզել յոյժ, և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մօտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիւ էր, և գային առ նա յանապատ տեղերէն:

ԳԼՈՒԽ Բ.

Յիսուս կը բժշկէ անդամաւոր մը.— Դպիրք կը հակառակին Յիսուսի քի ի՛նչպէս կրնար ինք մեղքերը բողբուլ:

1. Եւ մօտեալ դարձեալ ի կամիւսնաւ. յետ առուրց. Մատթ. Բ. 1. 1. Ու դարձեալ մօտաւ կամիւսնաւ. յետ առուրց. Մատթ. Բ. 1. 1.

2. Լուր եղեւ եթէ ի տան է, և ժողովեցան բազումք, մինչեւ գանուի. և շատերը ժողովուեցան,

43. Եւ սաստեալ նմա... — Յունարէն՝ սաստեալ (ἐμπαύρυνται, էմպաւրոմէ) կը նշանակէ, Թէ՛ խտիւր յանդիմանել, և Թէ՛ խտիւր պատուիրել, հրամայել. բնական է որ հոս՝ սոյն երկուորդ իմաստիւ առնուած է, փրկութեան ճամբան:

44. Ե՛րբ, ցո՛յց զից քաղաքսն... —Տե՛ս. Մատթ. Բ. 4. Ծանօթ: Եւ բաղդատէ Ղուկ. Ժ. 1.

2. Զբաճն, խօսքը, այսինքն Աւետարանը, փրկութեան ճամբան:

տեղի ևս ոչ լինել՝ և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զքանն:

3. Եւ դային առ նա, բերէին անդամալոյժ մի բարձեալ ի չորից: Ղուկ. Ե. 18:

4. Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառատաղն իջուցին զմահիճան յորում կայր անդամալոյժն:

5. Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, սաէ ցանդամալոյժն. Ո՛րդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո:

6. Եւ էին ոմանք ի դպրաց անտի, որ անդ նստէին. և խորհեին ի սիրտս իւրեանց.

7. Զի՞նչ է այս, որ խօսի սա զհայնոյութիւնս: Ո՛վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ մի Աստուած: Յորայ, ԺԳ. 4: Եսայի, ԽԳ. 25:

8. Եւ գիտաց Յիսուս յոգի իւր, թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ. Զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր:

9. Զի՞նչ դիւրին է, ասել ցանդամալոյժն. Թողեալ լիցին քեզ

4. Քակեցին զյարկն. — Հրէից տունները ցած կ'ըլլային տափարակ տանիքով, որուն վրայ ընդհանրապէս կ'ըլլուէր դրսէն սանդուխի մը միջոցաւ: Ստեղծ ներսէն ալ կ'ըլլէր ցուէր սանդուխով մը, բայց սոյն անցքը խիստ նեղ ըլլալով, չկրցին հաւանականորէն սոյն անցքէն մտնել անդամալոյժը. և ստիպուեցան տանիքը բակել և կամ յիշեալ անցքը լայնցնել: Տե՛ս, Thomson, The Land and the Book, London 1876. էջ. 358....:

6. Եւ խորհեի՞ն ի սիրտս իւրեանց: —

այնպէս որ կենալու տեղ մը չի մնաց ո՛չ իսկ դրան քով. և կը քարոզէր անոնց՝ խօսքը:

3. Եւ անոր քով եկան, բերելով անդամալոյժ մը զոր վեր բըռնած էին չորս հոգի:

4. Եւ որովհետեւ չէին կրնար անոր մօտենալ բազմութեան պատճառաւ, քակեցին այն յարկն ուր կը կենար Յիսուս, և առատաղը բանալով՝ վար իջուցին այն մահիճն ուր կը պառկէր անդամալոյժը:

5. Եւ Յիսուս տեսնելով անոնց հաւատքը, անդամալոյժին ըսաւ. Ո՛րդեակ, թող ներուած ըլլան քեզի քու մեղքերդ:

6. Եւ հոն կը գտնուէին մէկ քանի դպիրներ որոնք նստած էին, ու կը խորհէին իրենց սրտին մէջ.

7. Աս ի՞նչ բան է, որ կը հայնոյէ ասիկայ: Ո՛վ կրնայ թողուլ մեղքերը եթէ ոչ միայն Աստուած:

8. Եւ Յիսուս գիտցու իր հոգւով, թէ այնպէս կը խորհին իրենց սրտերուն մէջ, ու ըսաւ. Ինչո՞ւ ատ կը խորհիք ձեր սրտերուն մէջ:

9. Ո՛ր բան դիւրին է, անդամալոյժին ըսել. Թող ներուած ըլ-

լատ Եբրայական հոգեբանութեան, սիրտը նկատուած էր իբր կեդրոն մը բոլոր մտաւորական գործողութեանց. սիրտն էր որ կը քննէր, կը բազդատէր, կը դատէր, ինչպէս նաեւ կը սիրէր ու կ'ատէր:

8. Վիսաց Յիսուս յոգի իւր: — Մարգարէներն ալ կրնային խմանալ ու հասկնալ ամենէն ծածուկ խորհուրդներն ու գործքերը բայց Աստուծոյ հոգով միայն, և որչափ որ սոյն հոգին անոնց Թոյլ տար, բայց Յիսուս իր իսկ հոգով կը զիտնայ խորհուրդները, ուստի և Աստուած մըն է:

մեղք քո, եթէ ասել. Արի՛, ա՛ռ լան քեզի քու մեղքերդ, եթէ զմահիճս քո, և ե՛րթ ի տուն քո: Ըսել. Ելի՛ր, առ մահիճդ, ու տունդ գնա՛:

10. Այլ զի գիտասցիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ի վերայ երկրի թողուլ զմեղս [ասէ ցանդամալոյժն].

11. Քեզ ասեմ. Արի՛, ա՛ռ զմահիճս քո, և ե՛րթ ի տուն քո:

12. Եւ յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի ամենեցուն. մինչեւ զարմանալ ալեւնեցուն, և փառաւոր առնել զԱստուած և ասել, թէ Այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք:

Յիսուս կը կանգնէ յաշակերտութիւն զՂեւի, որուն տունը հաշի կը հրաւիրուի եւ այս առթիւ կրկին կը քննադատուի Դպիրներէն:

13. Եւ ել դարձեալ ի ծովեզերն, և ամենայն ժողովուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնոսա:

14. Եւ մինչդեռ անցանէր, ետես զՂեւի Ալիւնայ, զի նստէր ի մաքսաւորութեան, և սաէ ցնա. Ե՛կ զի՛նի իմ: Եւ յարուցեալ գնաց զի՛նի նորա: Մատթ. Թ. 9, Ղուկ. Ե. 27:

15. Եւ եղեւ ի բազմիւն նորա

12. Հրէայք չեն կրցած բոլորովին ուրաշալ Յիսուսի գործած հրաշքները, և եթէ չեն ուզած եւս անոր հաւատալ, այդ ալ՝ կ'ըսեն, որովհետեւ ինք իշխանութիւն չունին մեղաց Թողութիւն տալու: Եւ ինք իշխանութիւն չունէր մեր մեղքերը Թողուլ, կը գրէ Թալմուտ, ուստի և զինք մերժեցինք. Sanhed. fol. 38, 2, Gloss.

14. Ետես զՂեւի Ալիւնայ. — Ղեւի, Ս. Մատթէոսի առջի անունն է, Տե՛ս, Ա. Մատ. Կենսագրութիւն Ս. Մատթէոսի, Ալիւնայ որ Ս. Մատթէոսի հայրն է, պէտք չէ բնաւ շփոթել Յակոբոս Կրտսերին հօր հետ՝ որ նմանապէս Ալիւնայ կ'ըսուէր:

10. Բայց որպէս զի գիտնաք թէ Որդի մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղաց թողութիւն տալու [անդամալոյժին ըսաւ].

11. Քեզի կ'ըսեմ. Ելի՛ր, առ մահիճդ, ու տունդ գնա՛:

12. Ու չուտ մը, ելաւ, և մահիճն առնելով ամենուն առջեւ քակեց. այնպէս որ ամէն ոք կը զարմանար ու կը փառաւորէր զԱստուած և կ'ըսէր, թէ Այսպիսի բան մը բնա՛ւ տեսած չենք:

13. Եւ Յիսուս դարձեալ ծովեզերք գնաց, ու բոլոր ժողովուրդն անոր քով կու գար. և կը սորվեցնէր անոնց:

14. Եւ երբ կ'անցնէր, տեսաւ զՂեւի՝ Ալիւնայի որդին, որ կը նստէր մաքս առնելու համար. և անոր ըսաւ. Իմ ետեւէս եկո՛ւր: Եւ ելնելով անոր ետեւէն գնաց:

15. Եւ եղաւ որ, երբ սեղանի

15. Մանասուր կ'անուանուէին այն ստորադաս պաշտօնեայք որոնք յանձն առած էին հաւաքելու այն տուրքերը որոնք շէն նորհուած էին հողմայեցի ասպետաց իրենց կառավարութեան կողմէն: Մաքսաւորները խիստ ատելի եղած էին իրենց ճշմարտութեամբ ու զեպմամբ: Սուրբուն կը պատմէ, թէ օր մը հարցուցին Թէոփիլոսին, թէ որոնք են ամենավատագր զազանները, նա ըսաւ. Լեւանց վրայ՝ արքերն ու առիւծները. քաղաքներու մէջ՝ մաքսաւորներն ու զէջ փաստաբանները: Տե՛ս, Ս. Մատթ. Թ. 10:

ի տան նորա, և բազում մահաւոր բազմեալ էին ընդ Յիսուսի, և ընդ աշակերտան նորա. քանզի էին բազումք՝ որ երթային զհետ նորա:

16. Իսկ Դպիրքն եւ Փարիսեցիք իբրեւ տեսին թէ ուտէ ընդ մաքաւորս և ընդ մեղաւորս, ասեն ցաշակերտան նորա. Զի՞ է զի ընդ մեղաւորս և ընդ մաքաւորս ուտէք և ըմպէք:

17. Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ ցնոսա. Ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց. և ոչ եկի կուղարարս, այլ զմեղաւորս: Ա. Տիմոթ. Ա. 15:

18. Եւ էին աշակերտքն Յովհաննու և Փարիսեցիքն՝ ի պահս. դան և ասեն ցնա. Ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և Փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ ոչ պահեն:

19. Եւ ասէ ցնոսա Յիսուս. Միթէ մարթ ինչ իցէ որդւոց առաքաւսի, մինչ ընդ նոսա իցէ փեսայն, պահել. ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է մարթ պահել:

20. Այլ եկեացեն աւուրք, յորժամ վերացի ի նոցանէ փեսայն,

նստած էր անոր տան մէջ, շատ մը մաքաւորներ ալ նստած էին Յիսուսի և անոր աշակերտաց հետ. վասն զի շատեր կային որ անոր ետեւէն կ'երթային:

16. Իսկ Դպիրք ու Փարիսեցիք երբ տեսան որ մաքաւորներու և մեղաւորներու հետ կ'ուտէ, ըսին անոր աշակերտներուն. Ինչո՞ւ համար մեղաւորներու և մաքաւորներու հետ կ'ուտէք ու կը խմէք:

17. Երբ լսեց Յիսուս, անոնց ըսաւ. Առողջ եղողներու հարկաւորութիւն չկայ բժիշկի, այլ հիւանդներու. և ես չեկայ արդարները կանչելու, այլ մեղաւորները:

18. Եւ Յովհաննու աշակերտներն ու Փարիսեցիք պահոց մէջ էին. եկան ու ըսին անոր. Ինչո՞ւ Յովհաննու աշակերտներն ու Փարիսեցիք պահեցողութիւն կ'ընեն, ու քու աշակերտներդ չեն ըներ:

19. Եւ Յիսուս ըսաւ անոնց. Միթէ կարելի՞ է որ հարսանեաց որդիները պահեցողութիւն ընեն, երբ անոնց հետ կը գտնուի փեսայն. կարելի չէ որ պահեցողութիւն ընեն, որչափ արտեն որ իրենց հետ ունենան փեսայն:

20. Այլ պիտի գան օրեր, որ երբ վերցուի անոնցմէ փեսայն, և

իջնելուն, և Հինգշաբթին՝ որովհետեւ այս օրը Մովսէս եւսմ էր յիշեալ լեռը՝ Տե'ս. Babyl. Bava Lama, f. 82.

19. Որդւոց առաքաւսի. Ասոնք էին փեսային քաւեկամները և կամ ըստ մեզ՝ պատուակալ մանչերը, հիւրամեծարները, որոնց պաշտօնն էր բոլոր հարսնիքի կարգադրութիւններն ընել, ընդունիլ հիւրերը ու փեսային մօտ գտնուիլ, Տե'ս. Մատթ. Թ. 15:

և ապա պահեցին յաւուրն յայնմիկ: Մատթ. Թ. 15: Դուկ. Ե. 35:

21. Ոչ ոք կապերտ նոր անթափ արկանէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրութեամբն իւրով նորն ի հնոյ անտի, և չար ևս պատառումս լինի:

22. Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկան, գինին հեղու, և տիկքն կորնչին. այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է:

Յիսուսի աշակերտները շաբաթ օր մը հասկ կը կորզեն ու կ'ուտեն, եւ ասով կրկին տեղի կը տրուի Փարիսեցւոց տրտնգաց:

23. Եւ եղեւ նմա ի շաբաթու անցանել ընդ արտօրայս: Եւ աշակերտքն ի գնալն իւրեանց, սկսան հասկ կորզել և ուտել: Մատթ. ԺԲ. 1: Դուկ. 2. 1:

24. Եւ Փարիսեցիքն ասեն ցնա. Տե'ս, զի՞նչ դործեն աշակերտքն քո ի շաբաթու՝ զոր չէ արժան:

25. Եւ ասէ ցնոսա Յիսուս. Ո՞չ երբէք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղեւ, և քաղցեաւ նա և որ ընդ նմայն էին: Ա. Թագ. ԻԱ. 6:

26. Զիսրդ եմուտի տունն Աս-

23. Եւ եղեւ... ի շաբաթու... — Տե'ս. Մատթ. ԺԲ. 1:

25. Զոր արարն Դաւիթ. — Նոմբաի մէջ տեղի ունեցած էր այս դէպքը. Երբ Դաւիթ կը փախչէր Սաուլի բարկութենէն, առնաւ ինքն ինքն զինքն և զհագրէն քանակաւ փախչելու. բայց ասիկայ հոգ չուտէն հաց ուզելու. բայց ասիկայ հոգ չուտէն հաց ուզելու. քանի որ, կամ Ս. Մարկոսի Աւետարանի սոյն անցքը զրչազրի մը փախչէն անոր տալու, որ հացը միայն քանակաւ կ'ընային ուտել, և թոյլ տրուած չէր ուէր:

այն ատեն պիտի ընեն պահեցողութիւն:

21. Ոչ ոք կը ձգէ բոլորովին նոր կարկտան մը հինցած ձորձի մը վրայ. ապա թէ ոչ՝ նոր կտորը վար կը քաշէ իր ամբողջութեամբ հինէն մաս մը, և պատառածքը աւելի մեծ կ'ըլլայ:

22. Ոչ ալ մէկ մը նոր գինին կը դնէ հին տիկերու մէջ, ապա թէ ոչ՝ գինին կը պայթեցնէ տիկերը, գինին կը թափի, և տիկերը կը կորսուին. հապա, նոր գինին պէտք է դնել նոր տիկերու մէջ:

23. Եւ հանդիպեցաւ որ անիկայ անցնէր շաբաթ օր մը արտօրու մէջէն: Եւ աշակերտներն սկսան գնացած ատեններն, հասկ կորզել և ուտել:

24. Եւ Փարիսեցիք անոր ըսին. Տե'ս ինչ կ'ընեն քու աշակերտներդ շաբաթ օրը, զոր ներեալ չէ ընել:

25. Եւ Յիսուս ըսաւ անոնց. Ամենեւին կարդացած չէ՞ք դուք Դաւիթի ըրածն, երբ պէտք ունեցաւ և անթիւցաւ ինք ու իրեն հետ գտնուողները:

26. Ինչպէս մտաւ Աստուծոյ

որ ուրիշ մը անոնց զգչէր, Տե'ս. Ա. Թագ. ԻԱ. 6:

26. Առ Արիաբարա Բահանայապետ: — Ա. Թագ. ԻԱ. 2. Դիւնէն զիտենք Թէ նոյն ատենուան քահանայապետը ոչ Թէ Արիաբար էր՝ այլ Աքիմէլէք. Ուստի հաւանական կ'երեւի որ, կամ Ս. Մարկոսի Աւետարանի սոյն անցքը զրչազրի մը փախչէն անոր տալու, որ հացը միայն քանակաւ կ'ընային ուտել, և թոյլ տրուած չէր ուէր:

տուժոյ, առ Աքիաքարաւ Բահա-
նայայեհիւ, և զհացսն զառաջա-
ւորութեան եկեր, և ետ աշնոցիկ
որ ընդ նմայն էին. զոր ոչ էր օ-
րէն ուտել, բայց միայն քահա-
նայիցն: Դեռ. ԻԲ. 9:

27. Եւ ասէ ցնոսա. Շաբաթ
վասն մարդոյ եղև, և ո'չ եթէ
մարդ վասն շաբաթու:

28. Ապա ուրեմն, տէր է Որդի
մարդոյ՝ և շաբաթու:

տունը, Աբիաթար քահանայապե-
տին օրով, ու կերաւ առաջաւո-
ւորութեան հացերն և տուաւ իր
հետ եղողներուն. զոր մէկու մը
թոյլ տրուած չէր ուտել բացի քա-
հանաներէն:

27. Եւ անոնց ըսաւ. Շաբաթը
եղած է մարդու համար, ու ո'չ
թէ մարդ շաբաթուն համար:

28. Ապա ուրեմն, Որդի մար-
դոյ շաբաթ օրուան ալ տէրն է:

ԳԼՈՒԽ Գ.

Յիսուս կը բժշկէ գոսացած ձեռք մը:

1. Եւ եմուտ միւսանգամ ի ժո-
ղովուրդն, և էր անդ այր մի՝
որոյ ձեռն իւր գոսացեալ էր:
Մատթ. ԺԲ. 9: Դռչ. 2. 6:

2. Եւ սպասէին նմա՝ եթէ բը-
ժըկիցէ զնա ի շաբաթուն, զի չա-
րախօսեցեն զնմանէ:

3. Եւ ասէ ցայն՝ որոյ ձեռն
գոսացեալ էր. Աբի, ա'նց ի մէջ:

4. Եւ ասէ ցնոսա. Զինչ ար-
ժան է ի շաբաթու, բարի՞ ինչ
գործել՝ եթէ չար առնել. ոգի մի
ապրեցուցանել՝ եթէ կորուսանել.
և նոքա լռեցին:

5. Եւ հայեցալ Յիսուսի զնո-

1. Եւ ուրիշ անգամ մըն ալ ժո-
ղովառեղին մտաւ, և հոն կար
մարդ մը՝ որուն ձեռքը գոսա-
ցած էր:

2. Ու կեցած կը նայէին թէ պի-
տի բժշկէ՞ր շաբաթ օրով, որպէս
զի անոր վրայ շարախօսեն:

3. Եւ կ'ըսէ այն մարդուն՝ ո-
րուն ձեռքը գոսացած էր. Ելի՛ր
ու մէջտեղը եկո՛ւր:

4. Եւ անոնց կ'ըսէ. Ի՞նչ ընել
պատշաճ է շաբաթ օրը, բարի՞ք
մ'ընել՝ թէ չարիք մը. հոգի՞ մը
աղատել՝ թէ կորսնցնել. և անոնք
լռեցին:

5. Եւ Յիսուս սաստիկ բարկա-

կ'ըսենք՝ ձեռքը գոսացած, կամ բոստած
և կամ չորցած էր:

5. Լի ցաւամբ. . . — Կան մարդկային
գործողութիւններ, որոնք ըստ ինքեան ան-
տարբեր են, և իրենց բարի կամ չար ըլ-
լալու բարոյական հանգամանքը կ'առնուն
նպատակէն կամ վախճանէն. Այսպէս, բար-
կոչքիւնը ըստ ինքեան չար կիրք մը չէ,
բայց երբ մէկ մը յանիրաւի բարկանայ՝
այն ատեն չար հանգամանք մը կ'առնու.

քօք լի ցաւամբ, տրտմալ վասն
կորութեան սրտից նոցա՝ ասէ
ցայն. Զգեա՛ զձեռն քօ. և նա
վրայ՝ ըսաւ մարդուն. Զեռքդ եր-
ձդեաց, և ողջացաւ ձեռն նորա:
կընցո՛ւր. և ան երկնցուց և ա-
նոր ձեռքը առողջացաւ:

6. Եւ ելեալ արտաքս վաղվա-
ղակի Փարիսեցիքն հերոյիկանո-
ւօքն հանդերձ, խորհուրդ առնէին
վասն նորա՝ թէ զի՞սքդ կորուս-
ցին զնա: Մատթ. ԺԲ. 14:

Յիսուս կը քալուի Գալիլիոյ ծովակից ափանց վրայ, եւ հոն
լատ մը հրալքներ կը գործէ:

7. Իսկ Յիսուս աշակերտօքն իւ-
րովք գնաց ի ծովեղերն: Եւ բա-
զում ժողովուրդ ի Գալիլեացուց
երթային զհետ նորա, և ի Հրէաս-
տանէ,

8. Եւ յերուսաղէմէ, և յայն-
կոյս Յորդանանու, և որք ի Տիւ-
րոսէ և ի Սիդոնէ. բազում ժո-
ղովուրդ իրիւս լսէին՝ որչափ ինչ
առնէր, գային առ նա:

9. Եւ ու՛ն ցաղակերտան իւր,
զինաւակ մի պատրաստական կայ-
ցէ նմա վասն ամբոխին՝ զի մի
նեղեացին զնա:

10. Քանզի զբազումս բժըշ-
կեաց, մինչ գալ խոնել զնովաւ՝
զի մերձեցին առ նա, ոչք ունէին
ախտս ինչ:

11. Եւ այսք պիղծք յորժամ
տեսանէին զնա, անխնայէին առաջի
նորա, աղաղակէին և ասէին.

12. Թէ՛ Դու ես Որդին Աստու-
ծոյ: Եւ նա յոյժ սաստէր նոցա,
զի մի՛ յայտնի առնիցեն զնա:

Տէրն մեր ալ արդար ու սուրբ բարկութեամբ
մըն է որ կը կշտամբէ Փարիսեցիները:
6. Հերովիկանոսօքն հանդերձ. — Հերով-
դիանոսներն էին, ինչպէս պիտի ըսէինք
մենք ճիմայ, այն ատենուան պաշտպան-
դական կուակիցները: Տե՛ս այս մա ին՝
Ս. Մատթ. ԻԲ. 16. Շաւոթ:

Տառներկու Առաքելներու ընտրութիւնը ու Յիսուսի նկատմամբ իր ազգականաց ունեցած տարօրինակ կարծիքը. Փարիսեցիք կը չարախօսեն քէ Յիսուս յարաբերութեան մեզ կը գտնուի դէւերու հետ. — Յիսուս կը զրէ անոնց այս ամբաստանութիւնը:

13. Եւ ինչպէս ի յեռան, և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ, և քով կը կանչէ զորս ինք կամէ: Մատթ. Ժ. 1. Դուք. Կալ. 9. 13. Թ. 1.

14. Եւ արար երկուստանս՝ զի իցեն զնովաւ, և զի առաքեացէ զնոսա քարոզել:

15. Եւ ունել իշխանութիւն բոլորելու զգաւս, և հանելու զգաւս: Մատթ. Ժ. 1. Դուք. Կալ. 9. 15.

16. Եւ եղ անուն Սիմոն՝ Պետրոս:

17. Եւ Յակոբու Զեբեդեայ՝ և Յովհաննու եղբորն Յակովբայ, եղ նոցա անուանս Բաներեդէս, որ է՝ Որդիք որոտման:

18. Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթոլոմէոս, և զԵթան, և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս Աւիւքայ, և զԹադէոս, և զՍիմոն Կանանայի:

19. Եւ զՅուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա:

20. Գան ի տուն, և գաց միւս անգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա:

13. Եւ ինչպէս ի յեռան. — Ամենայն փոքր տուն լեւան վրայ կ'ենէն — Ընդհանուր կարծեաց հետեւելով սոյն լեւան է Գործն. Համթին ըստածը: Տե՛ս Ս. Մատթ. Գլ. Ե. 1. Ծանօթ.:

17. Յակոբու Զեբեդեայ: — Ասիկայ է Ս. Յակոբոս Մեծն, և որու մահը միայն պատմուած է Նոր Կտակարանի մէջ, Գործ. ԺԲ.

13. Լեւան վրայ կ'ենէն ու իր առ ինքն զորս ինքն կամեցաւ, և քով կը կանչէ զորս ինք կամէ: Մատթ. Ժ. 1. Դուք. Կալ. 9. 13. Թ. 1.

14. Եւ արար երկուստանս՝ զի իցեն զնովաւ, և զի առաքեացէ զնոսա քարոզել:

15. Եւ ունել իշխանութիւն բոլորելու զգաւս, և հանելու զգաւս: Մատթ. Ժ. 1. Դուք. Կալ. 9. 15.

16. Եւ եղ անուն Սիմոն՝ Պետրոս:

17. Եւ Յակոբու Զեբեդեայ՝ և Յովհաննու եղբորն Յակովբայ, եղ նոցա անուանս Բաներեդէս, որ է՝ Որդիք որոտման:

18. Եւ զԱնդրէաս, և զՓիլիպպոս, և զԲարթոլոմէոս, և զԵթան, և զՄատթէոս զմաքսաւորն, և զԹովմաս, և զՅակովբոս Աւիւքայ, և զԹադէոս, և զՍիմոն Կանանայի:

19. Եւ զՅուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա:

20. Գան ի տուն, և գաց միւս անգամ ընդ նոսա ժողովուրդն, մինչ զի և հաց ևս ոչ ժամանել ուտել նոցա:

21. Յովհաննու՝ եղբորն Յակովբայ, որ Յիսուսի սիրած աշակերտն էր. Տե՛ս, Յովհ. ԺԲ. 23. ԺԺ. 26. Առաքելոց մէջէն էն երկարակեացն աս եղաւ — Եղ նոցա անուանս. Յիսուս՝ իր երեք նախընտրելի աշակերտաց ալ խորհրդաւոր տխուր տուած էր. Սիմոն՝ Պետրոս — Ինչպէս. Յակոբոս և Յովհաննէս՝ Բաներեդէս — Որդիք որոտման:

21. Եւ իրրեւ լուան որ իւրքն էին, ելին ունել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ:

22. Եւ Գալիլէոսն որ յերուսաղէմէ իջեալ էին, ասէին թէ Բե. եղգեք ուղ զոյ ի դմա, և իշխանաւ զիւացն հանէ դա զգաւս: Մատթ. Ժ. 34. ԺԲ. 32.

23. Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն, առաւել խօսէր ընդ նոսա. Զիարդ կարէ սատանայ զսատանայ հանել:

24. Եւ արդ, եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեացի, ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն:

25. Եւ եթէ տուն յանձն իւր բաժանեացի, ոչ կարէ կալ տունն:

26. Եւ եթէ սատանայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ և բաժանեալ է, ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է:

27. Այլ ոչ ոք կարէ զկարասի հզորի, մտեալ ի տուն նորա, աւար հարկանել, եթէ ոչ նախ զհրդօրն կաշխիցէ, և ապա զտուն նորա աւար հարկանիցէ:

28. Ամէն ասեմ ձեզ, զի Ամենայն թողցի որդւոց մարդկան

21. Որ իւրքն էին. — Իրենները, այսինքն՝ Յիսուսի ազգականները, կամ անոնցմէ ունեւր Արդէն Յովհ. Աւետարանիչ ալ յառաջ կը բերէ (Գլ. 2. 5) Թէ Յիսուսի եղբայրներն ալ չէին ուզեր իրեն հաւատալ, Սէլ կողմէն Յիսուսի Թշնամիները շատցած էին, ու կը սպառնային անոր կենաց. միւս կողմէն՝ իր ազգականներէն շատերը և որոց մէջ կը գտնուէին նաեւ իր առաքելներէն, Հրէից ստուար մասին կարծեաց հետեւելով կ'ապաստէին որ Յիսուս քաղաքական հանդիմանը մը տար իր քարոզութեանց, և որմէ

21. Ու երբ իրենները լսեցին, ելան որ բռնեն զայն, վասն զի կը կարծէին թէ խելքը կորուսած է:

22. Եւ այն Գալիլէոսն որ Երուսաղէմէն իջած էին, կ'ըսէին թէ Բէ. եղգեք ուղ զոյ ի դմա, և իշխանաւ զիւացն հանէ դա զգաւս:

23. Եւ իր քով կանչելով զանոնք, առաւելներով կը խօսէր անոնց հետ. Ինչպէս սատանան կըրնայ հանել սատանայ մը:

24. Եւ արդ, եթէ թագաւորութիւն մը ինք իր մէջ բաժնուի, ուն թագաւորութիւնը չի կրնար կանգուն մնալ:

25. Եւ եթէ տուն մը ինք իր մէջ բաժնուի, չի կրնար կանգուն մնալ ան տունը:

26. Եւ եթէ սատանան կ'ըսէ ինք իր անձին դէմ, ու բաժնուած է, չի կրնար դիմանալ, հապա լըմընցած է:

27. Այլ ոչ ոք կրնայ հզորի մը տունը մտնելով, աւար առնել աւար կարասիքը, եթէ նախ չկապէ հզօրը, և ետքը կողոպտէ անոր տունը:

28. Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի. որ Ամէն մեղք ու հայտնութիւն պի-

յուսախաբ մնալով՝ հաւանականօրէն ուզեցին արգելաւ զՅիսուս քարոզելէ ու եկան որ զինք բռնեն տանին. Կրնայ ըլլալ նաեւ որ բարեկամական ցոյց մը ընել ուզեցին Յիսուսի, զայն բռնել ուզելով՝ որպէս զի զինք ազատեն իր Թշնամեաց ձեռքէն:

22. Բէ. եղգեք ուղ. — Այս բառին մեկնութիւնը տե՛ս, Մատթ. Ժ. 25.

23. Առաւել խօսէր. — Առաւել բարձր հոր իր ընդարձակ նշանակութեամբ առնուած է. իր ընդարձակ շնանակութեամբ կը խօսէր փոխանակ ըսելու. օրինակներով կը խօսէր զամանց մը տար իր քարոզութեանց, և որմէ

մեղք եւ հայհոյութիւնք՝ որչափ տի ներուի մարդոց, որչափ եւ հայհոյեցեն. Մատթ. ԺԲ. 31. Դուկ. հայհոյեն. ԺԲ. 10. Ա. Յով. Ե. 16.

29. Բայց որ հայհոյեցէ զՀոգին Սուրբ, ոչ ունիցի թողութիւն յաւիտեան. այլ պարտապան լիցի յաւիտենիցն մեղաց:

30. Զի ասեին, թէ Այս պիղծ գոյ ի նմա:

Որո՞նք են Յիսուսի Գրիստոսի գլխաւոր ազգականները:

31. Գան եղբարքն եւ մայր նորա, եւ արտաքոյ կացեալ՝ յղեցին եւ կոչէին զնա: Մատթ. ԺԲ. 46. Դուկ. Բ. 19.

32. Եւ անդ ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր. եւ իբրեւ առացին ցնա. Ահաւասիկ մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ, եւ խնդրեն զքեզ.

33. Պատասխանի ետ նոցա եւ ասէ. Ո՞վ է իմ մայր, կամ եղբարք:

34. Հայեցաւ շուրջ զիւրեւ յաշակերտան զի նստէին, եւ ասէ. Ահաւասիկ մայր իմ, եւ եղբարք իմ:

35. Զի որ աւանդէ զկամս Աստուծոյ, նա է իմ եղբայր, եւ քոյր, եւ մայր:

29. Բայց սր հայհոյեցէ զՀոգին Սուրբ... — Ասոր մեկնութիւնը տե՛ս, Մատթ. ԺԲ. 31. Ս. Հոգւոյն դեմ եղած հայհոյութիւնը ըսելով, հոս չիմացուի մեղքի գործողութիւնը, այլ մեղանշական վիճակ մը՝ տրուի մէջ կ'ուզէ մարդ ֆնալ գիտութեամբ. ու ազատ կամօք. անա այս պատճառաւ թէ կ'ընէ:

29. Բայց ով որ Սուրբ Հոգեմ հայհոյէ, յաւիտեան թիւն պիտի չընդունի, այլ տապան պիտի ըլլայ յաւիտեան մեղօք:

30. Վասն զի կ'ըսէին, թէ պիղծ կայ անոր մէջ:

31. Անոր եղբայրներն ու մի կուգան, ու դուրսը կ'ենա մարդ կը դրկին ու կը կազանիկայ:

32. Եւ հոն բազմութիւնը տած էր անոր շուրջը, եւ երբ նոր ըսին. Ահաւասիկ մայրդ եղբայրներդ դուրսը կը գտնուէին զքեզ կ'ուզեն:

33. Անոնց պատասխանեց ըսաւ. Ո՞վ է իմ մայր, կամ բայրներս:

34. Նայեցաւ իր շուրջը ա. կերտներուն՝ որոնք նստած էին ու ըսաւ. Ահաւասիկ իմ մայրս իմ եղբայրներս:

35. Վասն զի ով որ Աստուծոյ կամքը կ'ընէ, ան է իմ եւ բայրս, եւ քոյրս, եւ մայրս:

ԳԼՈՒԽ Դ.

Յիսուս դարձեալ կը քարոզէ ծովուն մեզեմ. — Սերմանացանին առակը եւ անոր մեկնութիւնը:

1. Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովեզերքն. եւ խոնկեցան զնովաւ ժողովուրդք բազումք, մինչեւ ի նաւ մտանել նմա, եւ նստել ծովուն. եւ ամենայն ժողովուրդն զծովեզերքն զցամաքն ունէին: Դուկ. Բ. 4:

2. Եւ ուսուցանէր զնոսա առաւելօք բազում ինչ. եւ ասէր նոցա ի վարդապետութեան իւրեւմ.

3. Լուարո՛ւք. Ահա ել սերմանող սերմանել:

4. Եւ եղև ի սերմանելն, ոմն անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն եւ եկեր զնա:

5. Եւ այլն անկաւ յապառաժի, ու ոչ գոյր հող բազում. եւ վաղ-վաղակի բուսաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին.

6. Եւ յորժամ ծագեաց արեւ՝ չեւաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ:

7. Եւ այլն անկաւ ի մէջ փոյն. փուշքն եւ հեղձուցին զնա. եւ պտուղ ոչ ետ:

1. Առ ծովեզերքն. — Դալիլիոյ ծովին եւ զերաց մօտ:

3. Լուարո՛ւք. . . — Սրբազան Աւետարանիչը, Յիսուսի զուրցած երեք զլիսաւոր առակները մէջ կը բերէ, որոնց առաջինը՝ այսինքն Սերմանացանին առակը չէ կարգրէ այն զժողովուրդներն որոց ըրաղիս Աստուծու արքայութիւնը, կամ Աւետարանի քարոզութիւնը երկրիս վրայ, որոնք կ'արգելուն որ Աւետարանի վարդապետութիւնը մուտ գտնէ ու բարգաւաճի:

4. Սերմանացանի առակին մեկնութիւնը, Տե՛ս, Ս. Մատթ. Գլ. ԺԳ. 21. Ծանօթ:

8. Եւ այլն անկաւ յերկիր բար-
ւոք. և ելեալ աճեցեալ տայր պը-
տուղ. և բերէր ընդ միոյ երեսուն,
և ընդ միոյ վաթսուն, և ընդ
միոյ հարիւր:

9. Եւ ասէր. Որ ունիցի ականջս
լսելոյ՝ լուիցէ:

10. Եւ իբրեւ եղեւ առանձինն՝
հարցինցնա, որ զնովաւն էին ա-
շակերտօքն հանգերձ, զառական:

11. Եւ ասէցնոսա, Չեղ տու-
եալ է գիտել զխորհուրդս արքա-
յութեան Աստուծոյ, բայց նոցա
որ արտաքինքն են՝ ամենայն ինչ
առակօք լինի:

12. Զի տեսնելով տեսցեն՝ և
մի՛ տեսցեն, և լսելով լուիցեն՝ և
մի՛ լսեցին, զի մի՛ երբէք դարձ-
ցին՝ և թողցի նոցա: Եսայ. 2. 9.
Մատթ. ԺԴ. 14. Յովհ. ԺԲ. 40. Դարձ.
ԻԸ. 26. Հռ. ԺԱ. 8:

13. Եւ ասէցնոսա. Ոչ գիտէք
զառակս զայս, և զիսորդ զամե-
նայն առական գիտիցէք:

14. Որ սերմանեն՝ զբանն սեր-
մանէ:

11. Չեղ տուեալ է գիտել...: — Սոյն
պատասխանով, Տէրն մեր կ'որոշէ երկու
դասակարգի անհատներ, նախ անոնք՝ որ
կը հաւատան իրեն, երկրորդ անոնք՝ որ չեն
ուզեր հաւատալ: Առաջինները որ կը փա-
փագին գիտնալ ճշմարտութիւնը, ուստի և
ամէն միջոց կ'ուզեն ձեռք առնուլ անոր
հասնելու համար, անոնց ամէն ինչ պիտի
յայտնուի առանց վերապահումի. իսկ երկ-
րորդ դասակարգէն եղողները անխնայ պի-
տի զուրկ մնան այս շնորհքէն, քանի որ
իրենց յանձնարումով անհաւատ կ'ուզեն մնալ:

12. Զի տեսնելով տեսցեն...: — Ան-
հաւատ դասակարգին պատկանողներուն իբր

8. Եւ ուրիշ մը ինկաւ լաւ հո-
ղի վրայ. և բուսնելով ու աճե-
լով պտուղ կուտար մէկի տեղ ե-
րեսուն, և մէկի տեղ վաթսուն,
և մէկի տեղ հարիւր:

9. Ու կ'ըսէր. Ո՛վ որ ականջ
ունի լսելու՝ թո՛ղ լսէ:

10. Եւ երբ առանձին մնաց, ա-
նոնք որ իր չուրջը կը գտնուէին
աշակերտներով ի միասին՝ անոր
հարցուցին այն առակները:

11. Եւ անոնց ըսաւ. Չեղի տըր-
ուած է գիտնալ Աստուծոյ արքա-
յութեան գաղտնիքները, բայց ա-
նոնց՝ որ դուրս կը գտնուին ձեռ
շրջանակէն, ամէն ինչ առակնե-
րով կ'ըլլայ:

12. Որպէս զի տեսնելով տես-
նեն՝ ու չտեսնեն, և լսելով լսեն՝
ու չըմբռնեն. այնպէս որ ընաւ
չգառնան՝ և անոնց ներուի:

13. Եւ անոնց ըսաւ. Չէ՞ք գի-
տեր այս առակը, և ի՞նչպէս պիտի
գիտնաք այն բոլոր առակները:

14. Նա որ կը սերմանէ՝ խօսքն
է որ կը սերմանէ:

պատիժ այն պիտի ըլլայ որ, ճանչնալով
հանգերձ Յիսուսի զուրկած առակներուն,
և անոր քարոզութեանց ճշմարտութիւնը,
փոխանակ անկէ շարժելու և դարձի գալու:
Աւելի եւս արմատանան իրենց կուրծեան
մէջ, և այսպէս, գտնեն իրենց պատիժը:
Մեղաւորաց քարանալուն պատճառը կրկին
է. նախ՝ որովհետեւ անոնց կամքը չար է,
և ապականեալ. երկրորդ՝ որովհետեւ Աստ-
ուած կը պատժէ անոնց այս չար կամքը
մերժելով անոնցմէ իր շնորհքը, որուն ա-
նարժան ըրած են իրենք զիրենք իրենց ա-
զատ կամքով: Բաղդատէ՛. Եսայի, 2. 9.
Մատթ. ԺԴ. 13, 15:

15. Եւ նոքա են որ առ ճանա-
պարհաւն, ուր բանն սերմանի. և
յորժամ լսեն զնա, գայ սատանայ,
և հանէ զբանն սերմանեալ ի սիր-
տըս նոցա:

16. Եւ նոքա են որ յապառա-
փին սերմանեցան, որք յորժամ
լիցեն զբանն, վաղվաղակի խըն-
դութեամբ ընդ ունին:

17. Եւ զի ոչ ունին արմատ
յանձինն, այլ առ ժամանակ մի՛
են. ապա ի հասանել նեղութեան
կամ հալածման վաժն բանին,
վաղվաղակի գայթակղին:

18. Իսկ որ ի մէջ փշոցն սեր-
մանեցան, նոքա են՝ որ իբրեւ
զբանն լսեն:

19. Եւ հոգք աշխարհիս, և պառ-
բանք մեծութեան, մտանոն և հեղ-
ձուցանեն զբանն, և անպտուղ
լինի: Ա. Տիմ. 2. 17:

20. Եւ նոքա են որ յերկիրն բա-
րիւք սերմանեցան, որք լսեն
զբանն՝ և ընդ ունին, և տան պը-
տուղ, ընդ միոյ երեսուն, և ընդ
միոյ վաթսուն, և ընդ միոյ հա-
րիւր:

Պետք է ուշադիր ըլլալ Աստուծոյ խօսքերուն. — Թէ ինչ որ ծածուկ է
ի յայտ պիտի գայ. — Յորեքի արտիճ առակը:

21. Եւ ասէցնոսա. Միթէ գա՞յ
ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի
կամ ընդ մահձօք. ոչ ապաքէն
ի վերայ աշտանակի դնիցի: Մատթ.
6. 15. Դաւ. Ը. 16. ԺԱ. 33:

22. Զի չէ ինչ ծածուկ, որ թէ
ոչ յայտնեցի. և ոչ եղեւ ինչ
գաղտնի, եթէ ոչ ի յայտ գայցէ:
Մատթ. Ժ, 26. Դաւ. Ը. 17:

21. Ընդ գրուանաւ. — Տե՛ս, Մատթ. 6,
15. Ծանօթ.

15. Եւ անոնք որ կը գտնուին
ճամբուն երկայնքը ուր կը սեր-
մանուի խօսքը. և երբ կը լսեն
զայն, կուգայ սատանան, ու կը
վերցնէ այն խօսքը որ սերմանե-
ուած էր անոնց սրտին մէջ:

16. Եւ անոնք որ քարուտ տե-
ղեր սերմանուեցան, անոնք են որ
երբ կը լսեն խօսքը, չուտ մը կ'ըն-
դունին ուրախութեամբ:

17. Եւ որովհետեւ արմատ չու-
նին իրենց մէջ, այլ ժամանակի
մը համար են. ուստի երբ նեղու-
թիւն կամ հալածանք կը հանդի-
պի այն խօսքին պատճառաւ, ան-
միջապէս կը գայթակղին:

18. Իսկ որոնք որ փուշերու մէջ
սերմանուեցան, անոնք են որ երբ
կը լսեն խօսքը,

19. Եւ աշխարհային հոգերն ու
հարստութեան պատրանքները կը
մտնեն ու կը խղզեն այն խօսքը և
անպտուղ կը մնայ:

20. Եւ անոնք որ լաւ հողի վը-
րայ սերմանուեցան, անոնք են որ
կը լսեն խօսքը և կ'ընդունին, ու
պտուղ կուտան, մէկի տեղ երե-
սուն, և մէկի տեղ վաթսուն, և
մէկի տեղ հարիւր:

21. Եւ անոնց ըսաւ. Միթէ կը
բերեն ճրագը, զայն գրուանին
կամ մահիճին տակ դնելու հա-
մար. չէ՞ որ զայն կը դնեն աշ-
տանակին վրայ:

22. Վասն զի չկայ ծածուկ բան
մը, որ չյայտնուի. ոչ ալ եղած
է գաղտնի բան մը, որ ի յայտ
չգայ:

23. Եթէ ոք ունիցի աղանջս լսելոյ, լուիցէ :

24. Եւ ասէ ցնոսա . Տեսէք զի՛նչ լսէքդ, և յաւելցի ձեզ ուրոց լսէքդ : Որով չափով չափէք, նովին չափեսցի ձեզ : Մատթ. Ե. 2. Դուկ. 2. 38.

25. Որ ոք ունիցի՝ տացի նմա . և որ ո՛չն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ : Մատթ. ԺԴ. 12, ԻԵ. 29, Դուկ. Ը. 18, ԺԹ. 26.

26. Եւ ասէր . Այսպէս է արքայութիւն Աստուծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յերկիր ,

27. Եւ ննջիցէ, և յառնիցէ զցայտ և զցերեկ, և սերմանիքն բուսանիցին և աճիցեն . և նա ոչ գիտէ ,

28. Թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ, նախ զխոտն՝ և ապա զհասկն, ապա զցորենն առաք ի հասկին :

29. Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ . զի հասեալ են հունձք :

Մանանիսի հատիկը .— Ուրիշ առակներ .— Յիսուս կը հանդարտէ

ծովուն ալեկոծութիւնը :

30. Եւ ասէր . Ո՞ւմ նմանեցուցուք զարքայութիւնն Աստուծոյ, կամ որով առակաւ առակեսցուք զնա :

31. Որպէս հատն մանանխոյ, որ յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զամենայն սերմանիս՝ որ են յերկրի . Մատթ. ԺԴ. 31, Դուկ. ԺԴ. 49.

32. Եւ յորժամ սերմանիցի, բուսանի և լինի մեծ քան զամենայն բանջար, և արձակէ ոսոս մեծամեծս, մինչեւ բաւական լի-

23. Եթէ ունի մէկ մը աղանջներ լսելու, թո՛ղ լսէ :

24. Եւ անոնց ըսաւ . Զգո՛յն եղիք ինչ որ կը լսէք, և պիտի աւելնայ ձեզի որ կը լսէք : Ինչ չափով որ կը չափէք, նոյն չափով ալ պիտի չափուի ձեզի :

25. Ով որ ունի՝ անոր պիտի տրուի . և ան որ չունի, ունեցածն ալ ետ պիտի առնուի իրմէ :

26. Ու կ'ըսէր . Աստուծոյ արքայութիւնն այնպէս է, ինչպէս եթէ մարդ մը սերմ ձգէ երկրի մէջ ,

27. Ու քնանայ, և ելնէ զի՛նչ որ ու ցերեկ, և սերմերը բուսան, ու աճին . և ինք չգիտանայ ,

28. Թէ երկիրն ինքնիրեն կը բերէ պտուղ, նախ խոտը, և յետոյ հասկը, վերջը լեցուն ցորենն . և անոր հասկին մէջ :

29. Ու երբ տայ պտուղը, անմիջապէս կը զրկուի մանգաղ՝ վասն զի հասած են հունձքերը :

30. Եւ կ'ըսէր . Ի՞նչ բանի նմանեցուցէք զարքայութիւնը, կամ ի՞նչ առակով զայն զնա :

31. Ինչպէս մանանխոյի հատիկը, որ երբ ցանուի երկրի մէջ, հողին տակ դառնուող սերմերէն ամենափոքրն է .

32. Ու երբ ցանուի, կը բուսի և կ'ըլլայ բոլոր բանջարներէն կ'արձկէ, այնպէս որ երկնից թըռ-

նել ընդ հովանեաւ նորա թըռչնոց երկնից բնակել :

33. Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որպէս կարող լինէին լսել .

34. Եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա, բայց առանձինն՝ աշակերտացն իւրոց մեկնէր զամենայն :

35. Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝ իբրեւ ընդ երեկս լինէր . Եկա՛յք, անցցո՛ւք յայն կողմն :

36. Թողուն զժողովուրդն, և առնուն զնա նաւան հանդերձ, և զայլ ևս նաւան որ էին ընդ նմա : Մատթ. Բ. 23, Դուկ. Ը. 22.

37. Եւ լինէր մրրիկ մեծ հողմոյ, և զալիսն ի նաւն զեղոյր, մինչ գրեթէ լի խկ լինել :

38. Եւ ինքն ննջէր ի խելս նաւին ի վերայ բարձի . զարթուցանէին զնա և ասէին . Վա՛րդապետ, ոչի՛նչ է քեզ փոյթ, զի կոնչիմք աւտոսիկ :

39. Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն, և ծովուն ասէ . Դադարեա՛ր, կարկեա՛ց : Եւ դադարեաց հողմն, և եղև խաղաղութիւն մեծ :

40. Եւ ասէ ցնոսա . Ընդէ՛ր այդպէս վառասիրոք էք, չեւ եւս ունիք հաւատ : Եւ երկեան երկրիւղ մեծ, և աւելն ցմբմեանս . Ո՞ր ոք արդեօք իցէ սա, զի և հողմ և ծով հնաշանդին սմա :

Եւ ասալանդին ասոր :

չունները կարող կ'ըլլան բնակելու անոր շուքին տակ :

33. Եւ այնպիսի առակներով կ'ուղղէր անոնց այն խօսքը, որ կրնային բժրանել .

34. Եւ առանց առակի բան մը չէր խօսեր անոնց հետ, բայց առանձինն՝ բոլորը կը մեկնէր իր աշակերտներուն :

35. Եւ անոնց ըսաւ նոյն օրը՝ երբ իրիկուն կ'ըլլար . Եկէ՛ք, միւս կողմն անցնինք :

36. Կը ձգեն բաղմուտիւնն, ու կ'առնուն զանիկայ նաւով ի միւս սին, և միւս նաւերն ալ որ անոր հետ կը գտնուէին :

37. Ու հովի մեծ մրրիկ մը ելաւ, և ալիքները նաւին մէջ կը թափէր, այնպէս որ գրեթէ լեցուեցաւ :

38. Եւ ինք կը քնանար բարձի մը վրայ նաւին յետակողմն . կ'արթնցնեն զանիկայ ու կ'ըսեն . Վա՛րդապետ, քու հողդ չ'ըլլար որ մանք անա կը կորսուինք :

39. Եւ արթնալով սաստեաց հողմին, ու ըսաւ ծովուն . Դադարէ՛, լսէ՛ : Եւ հովը դադարեցաւ, ու մեծ հանդարտութիւն մը տիրեց :

40. Եւ անոնց ըսաւ . Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք . տակաւին չունիք հաւատ : Ու սաստիկ վախցան, և կ'ըսէին իրարու . Ի՞նչպիսի մէկ մըն է արդեօք սա, վասն զի թէ հովը և թէ ծովը կը հնազանդին ասոր :

ԳԼՈՒԽ Ե.

Յիսուս կ'անցնի Գերգեսացուց երկիրը, եւ հոն կը բժշկէ դիւանաք մը արտաքոյ կարգի պարագաներու մէջ.— Մեկնած պահուն՝ կը պատուիրէ բժշկուողին որ քարոզէ նոյն կողմերը ինչ որ ինք քրած էր:

1. Եւ եկն յայնկոյս ծովուն, յայտարարն Գերգեսացուց: Մատթ. Բ. 28. Դուկ. Բ. 26.

2. Եւ ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պատահեաց նմա այլ մի ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ.

2. Եղած են ոմանք, որոնք ջանացեր են փորձել՝ թէ Աւետարանի մէջ յիշատակուած Գիւսափառութիւնները ուրիշ բան չեն՝ եթէ ոչ պարզ հիւանդութիւններ, կամ սոսկ երեւակայութեան անկարգութիւն մը, կամ լոկ հոգեկան դիւահարութիւն մը, և կամ վերջապէս՝ մտաւորական տկարութիւն մը որ յառաջ եկած ըլլայ կրից չափազանց գերի ըլլալէն: Բայց այս ամէնը բնական մեկնութիւններ են, որոնք ըստ ինքեան կը ջրուին Աւետարանի տուած այլ և այլ մանրամասնութիւններէն, և Յիսուսի խօսքերէն: Սակայն ինչպէս կրնայ ըլլալ որ մարդ մը դիւահարի, և կամ լաւ եւ՝ Դիւահարութիւն ըստած փեմօմեկը ինչ բանի մէջ կը կայանայ, այս մասին փորձիկ բացատրութիւն մը տալը անհրաժեշտ կը ըստենք:

Դիւահարութիւն կարելի է: Քանի որ դեւերու կամ սատանայից գոյութիւնը անժըխտելի ճշմարտութիւն մըն է, խիստ դիւրին է ըմբռնել նաև դիւահարութեան կարելիութիւնը: Դեւերն ըստ ինքեան թշնամի լինելով Աստուծոյ, և չկարենալով ուղղակի անոր դէմ հակառակիլ, կը թափեն իրենց բոլոր թշնամութեան թոյնը ուղղակի մարդու վրայ, զոր Աստուծոյ կ'ողջէ փրկել իր ամենագոյն ոգորմութեամբ: Բայց մարդս քաղկացած ըլլալով հոգիէ ու մարմինէ, երկուստեք ալ համահաւասար կերպով ենթա-

1. Եւ եկաւ ծովուն միւս կողմը՝ Գերգեսացուց երկիրը:

2. Ու երբ անիկայ նաւէն կ'ելնէր, գերեզմաններուն մէջէն անոր դիմացը ելաւ մարդ մը որ պիղծ ողիէն բռնուած էր:

կայ է դեւերու յարձակման Վագնիսական փեմօմեկներու մէջ, կ'ըսէ Տր Փրկստեմ (Jesus-Christ, son temps. sa vie, էջ 384), կը տեսնենք որ մագնիսողն իր բաշարձակ տրամադրութեան ներքեւ կը բռնէ բնացողը՝ անոր կը թելադրէ իր մտածումները... Կայ դիւական մագնիսացում մը որնոր այն աստիճան կը տիրէ եւս առարկային վրայ որ կարծես հիւանդը թաղուն զօրութեան մը գործին կը դառնայ... Զաստատուած բան մըն է, թէ լուսինը, իր զանազան երեւոյթներուն մէջ, զարմանալի ազդեցութիւն մը ունի շատ մը ջղային հիւանդութիւններու մէջ: Կարելի չէ՞ միթէ, որ Դիւական զօրութիւնն ալ՝ որուն տիրապետութեան շրջանակէն անտեսանելի ու անըմբռնելի սանձանագլխով մը միայն բաժնուած ենք, աւելի ուժգին կերպով մը ազդէ այնպիսի խեղճ արարածներու վրայ որոնք դիւրամատչելի եղած են այս կարդի ազդեցութեանց: Արդարեւ, զի տենք թէ օդը, լոյսը, ելեկտրական զօրութիւնը, ևն. զարմանալի ազդեցութիւններ ունին մարմնոյ վրայ, ուստի սատանան որ քաջ կը ճանչնայ բնութեան զօրութիւնն ու գաղտնիքները, և կրնայ եւս հաղորդակցութեան մտնել մարդու հետ քանի որ հոգի է և իր բնութեան նրբութեամբ գերիվերոյ քան յիշեալ տարրերը, անշուշտ կարող է ևս բնութեան ընծայած զօրութիւններն ի գործ

3. Որոյ և բնակութիւն իւր իսկ ի գերեզմանս էր. և ոչ չղթայիւք որ եւս կարէր կապել զնա.

4. Վասն բազում անգամ ոտնակապօք և չղթայիւք կապելոյ, և խղիւղոյ ի նմանէ զչղթայսն, և զտանակապսն խորտակելոյ, և ոչ որ կարէր պարտել զնա.

5. Քանզի հանապազ զցայգ և զցերեկ ի գերեզմանս և ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբ:

6. Իրեւ ետես զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ և երկիր եպագ նմա:

7. Աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. Զի՞ կայ իմ և քո, Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ. երդ-

դնելով ուղղակի թէ անուղղակի յառաջ բերել դիւահարութեան յատուկ երեւոյթները: Դիւահարութեան իրականութիւնը պատմական ճշմարտութիւն մըն է. Այս բանը կարելի չէ ուրանալ առանց ամպարշտութեան, բանի որ Աւետարանի վկայութիւնը բացորոշ է. Եթէ ենթադրենք թէ Սրբազան Պատմիչները և Յիսուս իսկ զլսովին, կամ սխալելով դիւահարութիւն կարծած են ինչ որ պարզ խելագարութիւն մը կամ ջղային տագնապ մըն է, և կամ ուզած են յարմարել իրենց երկրին ժողովրդեան աւելորդապաշտութեան, որով խաբած են գիտութեամբ թէ իրենց ժամանակակիցներն և թէ ապագայ սերունդը, բացարձակ մերժած կ'ըլլանք Յիսուսի աստուածութիւնն ու Աւետարանի ճշմարտութիւնը: Ստոյգ է թէ Քրիստոսի ժամանակ և անկէ առաջ դիւահարութիւններն աւելի բազմաթիւ էին, ինչու որ այն ատենը կը տիրէր խառնախառն իշխանութիւնը [Մատթ. ԻԲ. 53], սակայն Քրիստոս ետեւ ալ Սատանան բոլորովին ար-

3. Որուն բնակութիւնն անգամ գերեզմաններու մէջ էր, և զոր մէկ մը չէր կրնար այլ եւս չղթաներով կապել.

4. Վասն զի սոսիկ կապուած ըլլալով ոտնակապերով ու չղթաներով, անիկայ խղած էր չղթաներն ու խորտակած ոտնակապերը, և չէր կրնար մէկ մը նուաճել զանիկայ.

5. Ինչու որ միշտ գիշեր ու ցորեկ, գերեզմաններու մէջ և լեռներու վրայ կ'աղաղակէր ու ինքզինք կը հարուածէր քարերով:

6. Երբ հեռուէն տեսաւ զՅիսուս, վազեց ու երկրպագութիւն քրաւ անոր:

7. Բարձր ձայնով աղաղակեց ու ըսաւ. Ինչ կայ իմ ու քո միջև. Յիսուս՝ բարձրեալ Աստու-

դիւած չէ իր իշխանութիւնը ի գործ դնելէ մարդոց վրայ [Ա. Կոր. 15, 21...]: որով կը փորձէ մարդիկները, կը հարուածէ Եկեղեցին և նոյն իսկ կ'ոյսահարէ զմարդ:

7. Զի՞ կայ իմ և քո: Դեռ է որ կը խօսի այսահարին բերնով. Ոմանք՝ չենք զի տեր ինչո՞ւ, սոյն անցքը կը թարգմանեն՝ Դուք իմ հետ ի՞նչ քան ունիք. Յիսուս չէ որ նախ կը կանչէ Դիւահարը, այլ նոյն ինքն Դիւահարն է որ կը վազէ Յիսուսի քով, և կը զրուէ անոր ուշադրութիւնը: Մենք կը նախընտրենք հետեւեալ իմաստով թարգմանութիւնը. Ի՞նչ կայ իմ ու քո միջև. որով Սատանան կը ճանչնայ Յիսուսի գերազանց սրբութիւնն ու իր գերազանց չարութիւնը, և կ'աղբաւ որ չմարտնչի իրեն դէմ՝ իբր հաւասար բնութիւն ունեցող թշնամի մը հետ, առաջուց պարտեալ նկատելով ինք գինը, և կամ՝ սա խորամանկութեամբ թէ Յիսուսի պատիւը չաղաղի, իրմէ անհամեմատ ստորին մէկուն հետ թշնամութեամբ վարուելով:

մենցուցանեմ զքեզ յԱստուած. մի՛ տանջեր զիս:

8. Քանզի ասէր ցնա. ե՛լ այսդ պիղծ, ի մարդոյ այտի:

9. Եւ հարցանէր ցնա, թէ Զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա. Լե-գեոնն անուն է իմ, քանզի բա-զումք եմք:

10. Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի՛ առաքեացէ զնոսա արտաքս քան զաշխարհն:

11. Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խողաց արօտական մեծ:

12. Աղաչեցին զնա ամենայն դեւքն և տներ. Առաքեա՛ զմեզ ի խողան, զի մօցուք ի նոսա:

13. Եւ հրամայեաց նոցա. Եւ իբրեւ ելին այսքն պիղծ՝ մօտն ի խողան, և զիմեաց երամակն ի դարէ անտի ի ծովն: Եին իբրեւ երկու հազարք, և հեղձնուին ի ծովուն:

14. Եւ խողարածքն փախեան, և պատմեցին ի քաղաքին և յա-գարակս. և եկին տեսնել զինչ իցէ՝ որ գործեցան:

15. Գան առ Յիսուս, և տե-սանն զգիւհարն զի նստէր ըզ-գեցեալ և զգատաացեալ, որ ու-նէր զլէզէովն, և զահի հարան:

16. Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զինչ եղեւ այ-սահարին, և զի՞նչ վասն խողիցն:

17. Եւ սկսան աղաչել զնա

ծոյ Որդին. զքեզ կ'երդուընցնեմ Աստուծոյ անուամբ. մի՛ տանջեր զիս:

8. Քանզի կ'ըսէր անոր. Ելի՛ր ատ մարդէն, պիղծ ոգի:

9. Եւ կը հարցնէր անոր, թէ ի՞նչ է անունդ. և անոր ըսաւ. Լէզէովն է իմ անունս, ինչու որ շատուր եմք:

10. Եւ շատ կ'աղաչէին անոր, որ չզրկէ զիրենք ան երկրէն դուրս:

11. Եւ հոն՝ լերան ստորոտը կը գտնուէր խողերու մեծ երա-մակ մը որ կ'արածուէր:

12. Բոլոր դեւերն աղաչեցին անոր ու ըսին. Այն խողերուն զրկէ զմեզ, որպէս զի անոնց մէջ մըտ-նենք:

13. Եւ անոնց հրաման ըրաւ. Ու երբ ելան պիղծ ոգիները՝ խո-ղերուն մէջ մօտն, և երամակը այն դարովար տեղէն խուժեց զէպ ի ծով: Շուրջ երկու հազար էին որոնք խողեցեացն ծովուն մէջ:

14. Եւ խողարածները փախան, ու պատմեցին քաղաքն ու ագա-րակները. և ելան տեսնելու թէ ի՞նչ էր պատահածը:

15. Յիսուսի քով եկան, ու տեսան զիւհարը որնոր լէզէովն ունէր, որ նստած էր հազում ու զգատաացած, և վախցան:

16. Եւ անոնք որ տեսած էին, անոնց պատմեցին թէ ի՞նչ հան-դիպած էր գիւհարին, և ի՞նչ խողերուն:

17. Եւ սկսան անոր աղաչելու

9. Լիզէովն գործածուած է հոս՝ ցոյց տա-լու համար թէ այս աշխարհը բազմաթիւ դեւե-րու իշխանութեան սակ կը գտնուէր: —

Օգոստոս կայսեր ժամանակ, հռովմէական Լէզէովնը կը բաղկանար շուրջ 6000 հոգիէն:

զնալ ի սահմանաց նոցա: Մասք. որ հեռանայ իրենց սահմաններէն: Ը. 34:

18. Եւ իբրեւ եմուտնա ի նաւն, աղաչէր զնա գիւհարն՝ զի ընդ նմա իցէ. Դուկ. Ը. 38:

19. Եւ Յիսուս ոչ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. Ե՛րթ ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա՛ նոցա, որ ինչ միանգամ Տէր ա-րար քեզ՝ և ողորմեցաւ քեզ:

20. Եւ չօքաւ, և սկսաւ քա-րողել ի Դեկապոլին, զոր ինչ ա-րար նմա Յիսուս, և ամենեքին զարմանային:

Յիսուս կուգայ ծովակին արեւմտեան եղերքը, ուր ժողովրդապետ մը կ'աղաչէ իրեն որ գայ բժիկէ իր մահամերձ աղօղիկը. — Անոր տունը գնացած պահունց կը բժիկէ տեսաւն կինը. — Ժողովրդապետին աղօղիկը կը յարուցանէ:

21. Եւ իբրեւ անց Յիսուս միւս-անգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերքն:

22. Եւ ահա մի ի ժողովրդա-պետացն գայր, որում անուն էր Յայրոս. իբրեւ ետես զնա՝ անկաւ առ ոտս նորա, Մասք. Թ. 18, Դուկ. Ը. 41:

23. Աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ Դուստր նորա մերձ է ի մահ, Ղի եկեալ զնիցէ նմա ձեռն, որ-պէս զի ապրեացի և կեցցէ:

24. Եւ զնաց ընդ նմա. Եր-թայր և ժողովուրդ բազում զհեռ նորա, և նեղէին զնա:

22. Մի ի ժողովրդապետացն: — Իւրա-քանչիւր Սինակոկա կամ ժողովատեղի կը կառավարուէր խումբ մը աւագանիներէ և որոց պետը կ'ըսուէր Ռօ՛շ հաֆ-նէսէր, կամ ժողովրդապետ: Ասոր պաշ-տօնն էր Սինակոկային Նիւթական թէ կրօնական պէտքերը մատակարարել: Կը

18. Ու երբ անիկայ մտաւ նա-ւը, գիւհարը կ'աղաչէր անոր որ իր հետ ըլլայ:

19. Եւ Յիսուս թոյլ չի տուաւ անոր, հապա ըսաւ անոր. Գնա՛ քու տունդ քու ընտանեացդ քով, և պատմէ անոնց ինչ որ Տէրն ը-րաւ քեզի, ու ողորմեցաւ քեզի:

20. Եւ ան գնաց ու սկսաւ քարողել Դեկապոլսոյ մէջ, ինչ որ ըրած էր իրեն Յիսուս, և ա-մէնքը կը զարմանային:

21. Ու երբ Յիսուս կրկին ան-գամ միւս կողմն անցաւ, շատ բազմութիւն հաւաքուեցաւ անոր քով, և ինք ծովեզերքն էր:

22. Եւ ահա կուգար ժողովըր-դապետներէն մին՝ որուն անունը Յայրոս էր, երբ տեսաւ զանիկայ՝ անոր ոտքն ինկաւ,

23. Սաստիկ կ'աղաչէր անոր ու կ'ըսէր, թէ Իր աղջիկը մա-համերձ է, և թէ գալով ձեռք զնէ անոր վրայ, որպէս զի աղա-տի ու ապրի:

24. Եւ զնաց անոր հետ: Մեծ բազմութիւն մըն ալ կ'երթար ա-նոր ետեւէն, ու կը նեղէին զա-նիկայ:

նախագահէր կրօնական պաշտամանց, կ'ո-րոշէր զանոնք՝ որոնք պիտի ընէին Ս. Գրոց ընթերցումը Սինակոկային մէջ, կը նշանա-կէր զայն մեկնողներն և կամ ինք անձամբ կը մեկնէր, վերջապէս բացարձակ իշխա-նութիւն ունէր ինչ որ Սինակոկայի կը վե-րաբերէր:

մաց իբրեւ երկոտասանից . և զարմացան մեծաւ զարմանալեօք :

43. Եւ պատուէր տայր նոցա յոյժ , զի մի՛ ոք գիտացէ զայն . և ասաց տալ նմա ուտել :

Զուրջ տասուերկու տարեկան էր . և խիստ աղքեցան :

43. Ու սատարիկ պատուէր տուաւ անոնց , որ մէկ մը չգիտնայ այն բանը . և ըսաւ որ անոր ուտելիք տրուի :

ԳԼՈՒԽ 2.

Յիսուս անաբգութեամբ իր հայրենակիցներէն՝ կ'երթայ քարոզելու մերձակայ աւանները :

1. Եւ ել անտի , եկն ի գաւառ իւր . և երթային զհետ նորա աշակերտքն իւր : Մատթ. ԺԴ, 54, Դուկ. Դ, 16 :

2. Եւ եղեւ ի շաքաթուն՝ սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն . և բազումք իբրեւ լսէին , զարմանային ընդ վարդապետութիւննորա , և ասէին . Ուստի՞ է ամա այս կամ զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է ամա , զի զօրութիւնք այսպիսիք ի ձեռաց սորա լինիցին :

3. Ո՛չ սա է մանուկ հիւսանն , և որդին Մարեմայ , եղբայր Յակովբայ , և Յովսեայ , և Յուդայի , և Սիմոնի . և չիցե՞ն քորքն դորա աստ առ մեզ : Եւ գայթակղէին ի նա : Յովհ. 2, 42 :

43. Եւ ասաց՝ տալ նմա ուտել : — Ասով ուզեց ցոյց տալ Յիսուս՝ թէ աղջկը ոչ թէ միայն ողջնցած էր , այլ նաև կատարելապէս գտած էր իր առողջութիւնը :

1. Եւ ել անտի , եկն ի գաւառ իւր . — Յիսուս Կաթառնառնէն ելնելով՝ երկրորդ անգամ կ'երթայ իր հայրենիքը Նազարէթ . Առաջին անգամին՝ իր հայրենակիցներն ուզած էին բռնութիւն բանեցնել անոր վրայ , հակառակ ասոր՝ կրկին փորձ մըն ալ կ'ուզէ ընել Յիսուս , հնար է այս անգամ յաջողի :

1. Եւ անկէ ելնելով՝ եկաւ իր երկիրը . և ասոր հետեւեցան իր աշակերտները :

2. Ու երբ շաքաթ եղաւ , սկսաւ սորվեցնել ժողովաւորացն մէջ . և շատերը լսելով կը զարմանային անոր վարդապետութեան վրայ , ու կ'ըսէին . Ասիկայ ո՞ւսկից ունի աս բաները . կամ ի՞նչ է աս իմաստութիւնն որ տրուած է ասոր , որ այսպիսի հրաշքներ կ'ըլլան ասոր ձեռքով :

3. Աս չէ՞ հիւսան զաւակը , Մարիամու որդին , Յակովբայ , Յովսեայ , Յուդայի և Սիմոնի եղբայրք . և ասոր քոյրերն հոս չե՞ն մեր քովը : Եւ կը գայթակղէին անոր վրայ :

Զարմելու անոնց սիրտը , բայց հոն նոյն ցրտութիւնը կը գտնէ , և եթէ այս անգամ չեն ուզեր բռնի զօրութիւն բանեցնել իր դէմ՝ այսու ամենայնիւ դարձեալ կը նախատեն ու կ'անարգեն զինքն :

3. Ո՛չ սա է մանուկ հիւսանն . . . — Լաս . Թարգմ. ունի՝ ո՛չ սա է հիւսանն . նմանապէս Յոյնն , որմէ կը հետեւի թէ Յիսուս ալ սոյն արհեստն ի գործ դրած էր իր հօր քով . Տէրն մեր ուրեմն Աստուած ըլլալով , անարգ սեպած չէր իր հակաին քրտամբ :

4. Եւ ասէ ցնոսա Յիսուս . Ոչ է մարգարէ անարգ , բայց եթէ ի Մարգարէ մը անարգ չէ՛ եթէ ոչ գաւառի իւրում . և յաղագատոհմի և ի տան իւրում : Մատթ. ԺԴ, 57, Դուկ. Դ, 24, Յովհ. Դ, 44 :

5. Եւ ոչ կարէր անդ . և ոչ մի ինչ զօրութիւն առնել , բայց սակաւ հիւանդաց ձեռն եղեալ բժշկէր զնոսա :

6. Եւ զարմանայր վրան անհաւատութեան նոցա : Եւ շրջէր շուրջ զգաւաւորքն և ուսուցանէր :

4. Եւ Յիսուս անոնց ըսաւ . Մարգարէ մը անարգ չէ՛ եթէ ոչ գաւառի իւրում , իր երկրին մէջ , իր աղագատոհմին և ի տան իւրում : Մատթ. ԺԴ, 57, ու իր տան մէջը :

5. Ու չի կրցաւ հոն հրաշք մ'իսկ ընել , միայն թէ ձեռք դնելով մէկ քանի հիւանդներու վրայ՝ զանոնք բժշկեց :

6. Ու կը զարմանար անոնց անհաւատութեան վրայ : Եւ շրջակայ գաւառները կը պտրտէր ու կը սորվեցնէր :

հայժայժիկ իր հացը , ո՛րչափ եւս տելի մեր մահկանացուքս պէտք է խոնարհութեամբ ու սրտի կատարեալ զոհունակութեամբ հպատակինք սոյն աստուածային որոշման « Բուժարար » — Որդին Մարեմայ , Ս Մարկոս չիլի շատակեր Ս . Յովսեփայ անունը , որմէ կ'եզրակացնեն մեկնիչք թէ սոյն ժամանակամիջոցին արդէն մեռած էր Ս . Յովսեփայ — Եղբայր Յակովբայ . Յակովբ՝ որ կը կոչուի կրտսեր , 12 առաքելոց կարգէն էր . Յուդայ առաքեալ՝ հեղինակ իր անունը կրող կաթողիկէ Թուղթին . Սիմոն՝ Յակովբ կըրտսերի եղբայրն էր և անոր յաջորդը Երուսաղէմայ Աճողոյն վրայ . Յովսեփի անունը միայն ծանօթ է , և իր մասին չունինք այլ տեղեկութիւն : Տեսուն մերոյ սոյն չորս եղբորդիքը կամ բեռորդիքն էին Կղեովպայ և Մարեմայ զաւակունքը Մարիամ՝ Ս . Աստուածածնայ երէց քոյրերէն էր ըստ ոմանց , ըստ այլոց՝ անոր ներն էր , քանի որ Կղեովպա՝ Ս . Յովսեփայ եղբայրն էր :

4. Ոչ է մարգարէ անարգ . . . — Միայն Նազարէթի բնակիչներն չեն ունեցած այսպիսի Թերութիւն մը . Արդէն փորձուած բան մըն է թէ որչափ ալ մեծ առաւելութիւններ ունենայ մէկ մը , մարդիկ երբ կը վարժուին անոր՝ այլ եւս կը մոռնան անոր առաւելութիւններն ու գրեթէ բանի տեղ իսկ չեն

զներ , ի մէջ այլոց՝ կան այնպիսի ազգեր , և Հայ ազգն ի մասնաւորի , որոնք իրենց միշտ չափազանց օտարամոլութեան հետեւանօք՝ ապերախտ զանուած են իրենցիննէրուն մասին , իբր անարգ սեպելով զանոնք : Այս Թերութիւնը ամենամեծ տգիտութեան արդիւնքն է , ու գրեթէ վատութիւն մը , և որուն գէշ հետեւանքներէն մին ալ սա եղած է որ փոխանակ քաջալերութիւն տալու մեր մէջ բարեւոյն ու գեղեցկին յառաջդիմութեան , յաւետ խաբանած է զանոնք , և պատճառ եղած շատ մը հանձարներու բարոյական անկման :

5. Եւ ոչ կարէր . . . զօրութիւն առնել : — Յիսուսի՝ հոն հրաշք մ'անգամ չ'աշխատելն արեւինք էր Նազարէթի բնակչաց անհաւատութեանը , և ինչպէս դիտել կուտայ Վիդ . Անտիոքացի , հրաշքի մը զօրութեան համար՝ երկու Թէութիւն պէտք է , նախ , զօրութիւն՝ հրաշք ընողին քով , երկրորդ , հաւատք՝ հրաշքի հարկաւորութիւն ունեցողին քով , որոնց մէկին կամ միւսին պոկատութիւնը կը խաբանէ հրաշքի գործողութիւնը , Բայց մի՛թէ չէր կրնար Յիսուս հակառակ այս բաներուն՝ դարձեալ հրաշք բերել . անշո՛ւշտ , բայց ասոր պատասխանն ինք արդէն տուած է . Պէտք է շունչդ տալ անոնք , որ անոնք անոր առաւելութիւններն ու գրեթէ բանի տեղ իսկ չեն

Յիսուս հովուական հրահանգներ կուտայ իր տասներկու աշակերտաց:

7. Եւ կոչեաց առ ինքն զերկուստասանս, և սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս, և տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պըղծոց: Մատթ. Ժ. 1. Դուկ. Թ. 1.

8. Եւ պատուիրեաց նոցա զի մի' ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն գաւաղան, մի' պարկ, մի' հաց, մի' պղինձ ի գօտիս.

9. Այլ ագանել հողաթափա, և մի' զգնուցուք, ասէ, երկուս պարեգօտս: Գործ. ԺԲ. 8.

10. Եւ ասէր ցնոսա. Յոր տուն մտանիցէք, անդէն օթելմանս կալջիք՝ մինչեւ ելանիցէք անտի: Մատթ. Ժ. 11. Դուկ. Թ. 4. Ժ. 7, 8.

11. Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ, յորժամ ելա-

7. Եւ իր քով կանչեց տասներկուքն ու սկսաւ երկուս երկուս զըրկել զանոնք. և անոնց իշխանութիւն տուաւ այս պիղծերուն վըրայ:

8. Եւ պատուիրեց անոնց որ բան մը չառնեն ճամբու համար, եթէ ոչ գաւաղան մը, ո'չ պարկ, ո'չ հաց, ո'չ ստակ գօտիներուն մէջ:

9. Հապա հողաթափա հագուին. և մի' հագուիք, ըսաւ, երկուս պարեգօտ:

10. Եւ անոնց կ'ըսէր. Ո'ր տուն որ մտնէք, հո'ն բնակեցէք՝ մինչեւ որ մեկնիք այն տեղէն:

11. Եւ անոնք որ չեն ընդուսիր զձեզ, ու մտիկ չեն ընել ձե-

րոց, այժմու ընդհանուր սովորութիւնն է որ կիները նոսա մեծարութիւն և ապա այրերը, բայց երբ միեւնոյն սրահին մէջ կը գտնուին նաև քահանաներ, որոնք ուրոյն ու նոսա պատիւ կարգ մը կը կազմեն իրենց կոչման հետեւանօք, պէտք չէ՞ որ նոսա այս վերջիններուն ըլլուին մեծարանքները և ապա միւսներուն ըստ կարգի. Զարմանալին ան է որ, օտար՝ Թէ ազգային ականաւոր ընտանեաց մէջ միշտ կը պահուին խտիւ մեր նշանակած կարգը, և միայն միջին խաւին մէջ է որ կը նմարուին գեղծումները. Դարձեալ՝ ի հնուց անտի ան է եղած սովորութիւնը, որ կա'մ համբուրեն քահանային ձեռքը, և կա'մ յարգանք բարեւեն զայն. հիմայ՝ մանաւանդ նորեկներէն այր Թէ կին, կը բաւականանան ձեռքի սեղմում մ'ընել, անշուշտ կը զուշակուի այսպիսի սովորութեան մը որչափ գոհնիկ լինելը, ըստ մեզ՝ կա'մ հարկ է համբուրել և առնուլ քահանային օրհնութիւնը, կա'մ բոլորովին հրաժարիլ անոր ձեռքը սեղմելէ:

նիցէք անտի՝ թօթալիս չիք զիտի զի, երբ կ'եկնէք այն տեղէն՝ թօթալից ձերոց ի վկայութիւն նոցա: ուեցէ՞ք ձեր ոտից փոշիներն ի Մատթ. Ժ. 14. Դուկ. Թ. 5. Ժ. 10. Գործ. վկայութիւն անոնց:

12. Եւ ելեալ քարոզէին՝ զի 12. Եւ անոնք ելնելով կը քարոզէին՝ որպէս զի ապաշխարեն մարդիկ:

13. Եւ դեւս բազումս հանէին, և օծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա: Յակ. Լանդներ, ու կը բժշկէին զանոնք: Ե. 14.

Յիսուսի նկատմամբ ելած այլեւայլ տարածայնութիւնները. —
Յովհաննէս Մկրտի մահը:

14. Եւ լուաւ արքայ Հերովդէս [քանզի յայտնի եղեւ անունսորա], և օտար [զի յայտնի եղաւ անոր անունը], ու կ'ըսէր՝ թէ Յովհաննէս Մկրտիչ յարութիւն առեր է մեռելներէն, և անոր համար հրաշքներ կ'ըլլան անով:

15. Այլք ասէին թէ Եղիայ է, իսկ այլքն՝ թէ Մարգարէ է, կամ թէ՝ Իբրեւ զմի ի մարգարէից: Մատթ. Ժ2. 14.

16. Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ. Զորոյ ես զգլուխն հատի զՅովհաննէս: սա է, նա յարեալ ի մեռելոց: Մատթ. Ժ7. 2.

17. Զի ինքն Հերովդէս, առաքեաց կալաւ զՅովհաննէս, և ըրովդէս, մարդ զրկելով բռնեց

14. Հերովդէս արքայ: — Սոյն Հերովդէսն էր Անթիպպաս ըստածն՝ որ Թէեւ շատ ջանացեր էր արքայի իշխանութիւնը ձեռք ձգելու, բայց չէր յաջողած, ու միշտ ճանջուած էր յորտորայնէ անուամբ Իսկ Ս. Մարկոս՝ բառին ընդարձակ իմաստով անոր արքայ տիտղոսը կուտայ, զի այնպէս կ'անուանէր զինք ժողովուրդը. և յիշուի արքայական իշխանութիւն կը վարէր Հերովդէս Գալիլիոյ մէջ. — Յովն. Մկրտիչ յարեալ... Սաստիկ խղճի խաթ մը կ'զգար Հերովդէս՝ զՅովն. Մկրտիչ սպաննել տուած ըլլալուն համար, այնպէս որ չէր կրնար հեռացնել իր աչքին առջեւէն անոր արիւնածածաւ գլուխը. Ուստի, բնական է որ հազիւ հազ լսեց Յիսուսի գործած հրաշքները, չկրցաւ սքողել իր ներսի խայծը, և անշուշտ, ըսաւ, նոյն ինքն Յովն. Մկրտիչն է որ յարութիւն առնելով այս բաները կ'ընէ, և Թերեւս ինձմէ ալ պիտի առնէ իր վրէժը:

15. Եղիայ է...: Տե'ս, Մատթ. ԺԱ. 45. Ծանօթ:

17. Տե'ս Մատթ. Ժ7. 3. Ծանօթ:

կապեաց զնա և եղ. ի բանախ, զՅովհաննէս, և զայն կապեց ու վասն Հերովդէայ՝ կնոջ Փիլիպպոսի եղբոր նորա. քանզի նա՝ կին արար զնա: Դուկ. Գ. 19:

18. Քանզի ասէր Յովհաննէս զՀերովդէս թէ Ոչ է օրէն քեզ առնել զկին եղբոր քոյ: Դուկ. ԺԷ. 16:

19. Եւ Հերովդէա սխալեալ էր ընդ նմա՝ և կամէր սպանանել զնա, և ոչ կարէր:

20. Զի Հերովդէս երկնէք ի Յովհաննէս. քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ, և սպասէր նմա. և լուեալ ի նմանէ՝ բազում ինչ առնէր, և քաղցրութեամբ լսէր նմա: Մատթ. ԺԳ. 5: ԻՍ. 26:

21. Իբրեւ օր մը լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս՝ յաւուր ծննդոց իւրոց, նախարարաց իւրոց, և հաղարապետաց, և մեծամեծաց Գալիլեացոց, Մատթ. ԺԳ. 6:

22. Եւ ի մտանել դատերն Հերովդէայ և ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդի և բազմականացն: Ասէ թագաւորն ցաղձիկն. Խնդրեա՛ յինէն զոր ինչ կամիս, և տաց քեզ:

23. Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ զոր ինչ և խնդրեսցես դու յինէն՝ տաց քեզ, մինչեւ ցկէս թագաւորութեան իմոյ: Մատթ. ԺԳ. 7:

24. Նա ելեալ ասէ ցմայր իւր. Զինչ խնդրեցից: Եւ նա ասէ. Զգլուխն Յովհաննու Մկրտչի:

25. Եւ մտեալ անդրէն փութանակի լաւ թագաւորն՝ ասէ.

18. Վասն զի Յովհաննէս՝ Հերովդէոսի կ'ըսէր թէ Թոյլ տրուած է քեզի որ եղբորդ կ'ինն առնուս:

19. Եւ Հերովդէա սխալեալ էր անոր դէմ, և կ'ուզէր սպանանել զանիկայ, ու չէր կրնար:

20. Զի Հերովդէս կը վախնար Յովհաննէսէն, վասն զի գիտէր թէ նա արդար ու սուրբ մարդ մըն էր, և կը պահէր զանիկայ. և շատ բան կ'ընէր անորմէ լսելէ ետքը, և հաճոյքով անոր մօտիկ կ'ընէր:

21. Երբ յարմար օր մը լինելով Հերովդէս ընթրիք կուտար իր ծննդեան օրը, իր նախարարաց, և իր հաղարապետներուն և Գալիլեացի մեծամեծաց,

22. Եւ երբ Հերովդէայ աղջիկը ներս մտաւ ու կաքաւեց, հաճելի եղաւ Հերովդէոսի և հրաւիրելոց: Թագաւորն ըսաւ աղջկան. Խնդրե՛ ինձմէ ինչ որ կը փափաքիս, և պիտի տամ քեզի:

23. Եւ անոր կրկին ու կրկին երդում ըրաւ, թէ ի՛նչ որ ալ ուզես ինձ՝ պիտի տամ քեզի, մինչեւ անգամ թագաւորութեանս կէսը:

24. Նա դուրս ելնելով՝ իր մօր ըսաւ. Ի՛նչ ուզեմ: Եւ ան ըսաւ. Յովհաննէս Մկրտչի գլուխը:

25. Ու կրկին աճադարանօք ներս մտնելով թագաւորին քով՝

կամիմ՝ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկսեղ ըզգլուխն Յովհաննու Մկրտչի:

26. Եւ տրամեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն և կոչականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա. Մատթ. ԺԳ. 9:

27. Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն՝ զահիճ, և հրամայեաց բերել զգլուխն նորա:

28. Եւ չոգաւ գլխատեաց զնա ի բանտին, և երբ զգլուխն նորա սկսեղք՝ և ետ ցաղձիկն, և աղջիկն տարաւ ետ մօր իւրում:

29. Իրբեւ լուան աշակերտքն նորա, եկին բարձին զմարմինն, և եղին ի զերեզմանի: Մատթ. ԺԳ. 12:

Առաքեալք կը վերադառնան իրենց քարոզութենէն եւ Յիսուսի հետ անապատ տեղ մը կը քալուին հանգիստ առնելու. — Յիսուս հրաշքով կը բազմացնէ հինգ հացն ու երկու ձուկերը:

30. Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, և պատմեցին նմա ժողովուեցան, ու պատմեցին անոր զամենայն ինչ զոր արարին և զոր ուսուցին: Դուկ. Թ. 10:

31. Եւ ասէ ցնոսմ Յիսուս. Եկե՛ք դուք առանձինն յանապատ տեղի, և հանգչեցէք քիչ մը. զի էին բազումք որ երթային զի շատեր կային որ կ'երթային և գային, և հաց անգամ չժամանէին ուտել: Մատթ. ԺԳ. 13, Դուկ. Թ. 10:

32. Եւ գնացին նաւու յանապատ տեղի առանձինն: Մատթ. ԺԳ. 13:

33. Եւ տեսին զնոսա զի երթային, և զգացին բազումք. և հետի յամենայն քաղաքաց խուռն

ըսաւ. Կ'ուզեմ որ հիմայ շուտ մը յանձնես ինձի պնակի մը մէջ՝ Յովհաննէս Մկրտչի գլուխը:

26. Եւ թագաւորը սատար տրամեցաւ, բայց իր երդումնէն և հրաւիրեալներուն համար չուզեց տրեցնել զայն.

27. Եւ խնդին, թագաւորը դահիճ զրկեց, և հրամայեց անոր գլուխը բերելու:

28. Եւ անիկայ գնաց ու գլխատեց զայն բանտին մէջ, և անոր գլուխը՝ պնակի մը վրայ դրած բերաւ, և տուաւ աղջկան, և աղջիկը տարաւ իր մօրը:

29. Երբ անոր աշակերտները եկան, եկան վերցուցին մարմինը և եղին ի զերեզմանի մէջ գրին:

30. Առաքեալք Յիսուսի քով ժողովուեցան, ու պատմեցին անոր ամենայն ինչ որ ըրին և ինչ որ սորվեցուցին:

31. Եւ Յիսուս անոնց ըսաւ. Եկե՛ք դուք առանձին անապատ տեղ մը, և հանգչեցէք քիչ մը. զի շատեր կային որ կ'երթային և կուգային, և իրենք հաց ուտելու անգամ ժամանակ չէին ունենար:

32. Եւ նաւով անապատ տեղ մը գացին առանձին:

33. Եւ տեսան որ կ'երթային անոնք, ու շատեր իմացան. և հետի հոն կը վազէին խուռն բոլոր քա-

21. Օր մի պարապոյ: — Այսինքն այնպիսի ընելու, որ մեղաւ որ յարմար էր խրախմտութիւն

29. Ըստ աւանդումեան՝ Յովն. Մկրտչի եղիսէ ու Աբթիսա մարգարէներու գերեզմաւորեցաւ Սամարիոյ Սեբաստիա քաղաքը, մանին կիցը:

ընթանային անդր, և մերձենային առ նոսա:

34. Եւ երեալ ետես ամբոխ բազում, և գլխացաւ ի նոսա, զի էին իբրեւ ոչխարհք՝ որոց ոչ իցէ հովիւ, և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: Մատթ. Թ. 36, ԺԴ. 14.

35. Եւ իբրեւ բազում ժամ եղեւ, մատուցեալ աշակերտքն աւելին. Տեղիս անապատ է, մինչդեռ աւուր կայ, Մատթ. ԺԴ. 15, Դուկ. Թ. 12.

36. Արձակեալ զժողովուրդս, զի երթեալ շուրջ յագարակս և ի գեօղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ ինչ ուտել ոչ ունին:

37. Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Դուք տուք զոցա ուտել: Ասեն ցնա. Երթիցուք գրնեցուք երկերիւր դահեկանի հաց, և տացուք զոցա ուտել: Մատթ. ԺԴ. 16.

38. Ասէ ցնոսա. Քանի՞ նկանաք ունիք, երթա՛յք տեսէք: Իբրեւ գիտացին, ասեն ցնա. Հինգ, և երկուս ձկունս: Մատթ. ԺԴ. 17, Դուկ. Թ. 13, Յովհ. 2. 9.

39. Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ի վերայ դալար խոտոյ: Յովհ. 2. 10.

40. Եւ բազմեցան դասք դասք, ուր հարիւր, և ուր յիսուն:

41. Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց, մանրեաց զնկանակն, և ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա, և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն: Մատթ. ԺԴ. 19.

զաքներէն, և անոնց կը մօտենային:

34. Եւ Յիսուս նաւեմ ելնելով մեծ բազմութիւն մը տեսաւ, իսկ ճաց անոնց վրայ, ինչու որ անհովիւ ոչխարներու կը նմանէին և սկսաւ շատ բաներ սորվեցնել անոնց:

35. Ու երբ շատ ուշացաւ ժամանակը, աշակերտները մօտենալով ըսին. Տեղս անապատ տեղ մըն է, քանի որ դեռ իրիկուն է եղած:

36. Արձակէ՛ այդ ժողովուրդը. ներս որ երթալով շրջակայ ագարակներն ու դիւղերը, ուտելի գնեն իրենց, վասն զի հոս ուտելու բան մը չունին:

37. Անիկայ պատասխանեց ուսաւ անոնց. Դո՛ւք ատոնց ուտելիք տուէք: Անոր ըսին. Երթա՛նք գնելու երկու հարիւր դահեկանի հաց, և տանք ատոնց ուտելու:

38. Անոնց ըսաւ. Քանի՞ նկանակ ունիք, գնացէ՛ք տեսէք: Երկուսը ասին. Հինգ, և երկու ձուկ:

39. Եւ անոնց հրամայեց որ խումբ խումբ նստեցնեն դալար խոտին վրայ:

40. Եւ դաս դաս նստեցան հարիւրական ու յիսունական:

41. Եւ առնելով հինգ նկանակն ու երկու ձուկերն, դէպ երկինք հայեցաւ, օրհնեց, մանրեց նկանակներն, ու տուաւ աշակերտաց որ անոնց առջեւ դնեն, և երկու ձուկերն ամենուն բաժնեց

42. Կերան և յագեցան.

43. Եւ բարձին զնշխարսն եր-

տասան սակառի լի, և ի ձկանց ներք տասուերկու սակառ լեցուն, տի: Մատթ. ԺԴ. 20, Դուկ. Թ. 17, և ձուկերէն ալ:

44. Եւ էին որք կերանս՝ իբրեւ

ք հինգ հազար: Մատթ. ԺԴ. 21, հինգ հազար հոգի:

45. Եւ նոյն ժամայն ձեպեաց

աշակերտսն մտանել ի նաւ, և առաջագոյն քան զնա երթալ իրմէ առաջ երթան ծովուն միւս սնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն եզրը Բեթսայիդա, մինչեւ որ ինք ժողովուրդսն արձակիցէ: Մատթ. ԺԴ. 22, Յովհ. 2. 16.

46. Եւ հրաժարեալ ի նոցանէ,

ի լեռն կալ յաղօթս: 47. Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ էր առն ի մէջ ծովուն, և ինքն ի մամբի: Մատթ. ԺԴ. 23.

48. Եւ ետես զնոսա հողմակոծ-

ալս ի վարելն, զի էր հողմն ընդէմ նոցա: Եւ զչորրորդ պահու իշերոյն, դայ առ նոսա՝ գնալով վերայ ծովուն, և կամէր զանց առ նոքօք: Մատթ. ԺԴ. 25.

49. Նոքա իբրեւ տեսին զի գը-

45. Ըստ Ս. Դուկասու՝ (Թ. 10) Բեթսայիդա կ'ըսուէր նաեւ հոն՝ ուր տեղի ունեցաւ հացին բազմամարուն հրաշքը. մինչև հոս, Ս. Մարկոսի մէջ կը կարդանք որ խոտոս կը փռնացնէ իր աշակերտներն և Բեթսայիդա անցնին. Բայց այս երկու հոգեբն ամենեւին հակասական չեն, զի, Բեթսային Պաղեստինու մէջ Բեթսայիդա կոչու էր երկու քաղաքներ կային, ու մին՝ Ս. Դուկասին անունաւոր որ Բեթսայիդա-Յուլիաս, Աւստոն ինքնին կամ տասնին տեսները Յիսուս կայսեր աղջկան ի յիշատակ, ու կը

46. Եւ արձկելով զանոնք, լե-

ռան վրայ ելաւ աղօթելու:

47. Եւ երբ իրիկուն եղաւ՝ նաւը ծովուն մէջ կը գտնուէր և ինք ցամաքը:

48. Եւ տեսաւ որ անոնք կը տարուբերէին հովէն թիավարած ատեններն, վասն զի անոնց հակառակ կողմէն էր հովը: Եւ գիշերուան չորրորդ պահուն՝ անոնց քով կուգայ ծովուն վրայ քաղելով, և կ'ուզէր թողուլ անցնիլ զանոնք:

49. Երբ անոնք տեսան թէ ծո-

գտնուէր Յորդանանու Արեւելեան կողմը, իսկ միւս Բեթսայիդան՝ ուր պիտի երթային աշակերտները, կը գտնուէր Կափառնատմի մօտ, Տիբերիայ լճակին Հիւսիս-Արեւմտեան կողմը:

48. Եւ զչորրորդ պահու գիշերոյն: — Հրէից սովորութեան համաձայն, զիշերը չորս մասերու բաժնուած ըլլալով, Ա.ժ. կը սկսէր ժամը 12ին, [Ը. Թ.], Բ.ժ. ժամը 3ին, Դ.ժ. ժամը 6ին, Դ.ժ. ժամը 9ին. Ուստի, առտուն ինքնին կամ տասնին տեսները Յիսուս երեւցաւ իր աշակերտներուն:

37. Հռովմայական դահեկանը կ'արժէր 200 դր. մեր ստակով. ուստի 200 դահեկանը պիտի արժէր 800 դր.:

նայր ի վերայ ծովուն, համարեցան թէ առ աչօք ինչ լինիցի, եւ դադարակ բարձին.

50. Քանզի ամենեքեան տեսին զնա՝ եւ խռովեցան: Եւ նա անդէն վազվազակի խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք:

51. Եւ ել ի նաւն առ նոսա, եւ դադարեաց հողմն: Եւ առաւել եւս յիմարեալ էին ի միտս իւրեանց, եւ զարմանային յոյժ.

52. Քանզի եւ ի վերայ հացին ոչ իմացան, զի էր սիրտ նոցա թըմբեալ:

53. Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարեթ: Մատթ. Ժ. 31.

54. Եւ իբրեւ ելին ի նաւէ անտի, իսկ եւ իսկ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ.

55. Եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լռէին թէ անդ իցէ:

56. Եւ ուր եւ մտանէր՝ ի գեօղս կամ ի քաղաքս կամ յագարակս, ի հրապարակս զնէին զախտածէսս, եւ աղաչէին զնա՝ զի գոնէ ի լղանցս հանդերձից նորա մերձենայցեն. եւ որք միանգամ մերձեցանն՝ փրկեցան:

56. Ի լղանցս հանդերձից նորա. — Օրինաց տրամադրութեան համեմատ՝ ամէն Հրեայ

վուն վրայ կը քալէր, կարծեց թէ ցնորական երեւոյթ մըն էր եւ բարձր աղաղակեցին.

50. Քանզի ամենքն ալ տեսան զայն ու սարսափահար եղան: Նա խօսոյն խօսեցաւ անոնց ու ըսաւ. Սի՛րտ առէք, ես եմ մի՛ վախնաք:

51. Եւ անոնց քով ելաւ նաւուն մէջ, եւ հովը դադարեցաւ: Եւ ներքուստ եւս աւելի խելացեալ եղած էին անոնք, ու ծայր աստիճան կը զարմանային:

52. Քանզի հացին հրաշքն ազամ չէին ըմբռնած անոնք՝ իրենց սիրտը թմբրեալ ըլլալուն պատճառաւ:

53. Եւ միւս եղրն անցնելով, կան Գեննեսարեթայ երկիրը:

54. Եւ երբ նաւէն դուրս ելան նոյն տեղւոյն մարդիկն իսկոյն ծանցցան զանիկայ.

55. Եւ վազելով հոս հոն բոլոր նոյն գաւառին մէջ, սկսան իրենց մահճներով բերել հիւանդներ՝ հոն ուր կը լսէին թէ նա կը գլխուրդէ:

56. Եւ ուր որ կը մտնէր՝ գլխուրդէր թէ քաղաքներու կամ գարակներու մէջ, հրապարակէր իւր վրայ կը դնէին հիւանդներ եւ անոր կ'աղաչէին որ գոնէ զգեստին քղանցքներուն դայիքն եւ անոնք որ դպան բժշկուեցան:

պէտք էր իր զգեստին չորս ծայրերը ծոցին նախ թիւ, ԺԵ. 38, Բ. Օրին. ԻԲ.

ԳԼՈՒԽ Է.

Փարիսեցիներն ու Դպիրները կ'ամբաստանեն Յիսուսի աշակերտները քի աճուայ ձեռքով հաց կ'ուտեն, հակառակ Հրեայ աւանդութեան. — Յիսուս կը պաշտպանէ իր աշակերտները ցոյց տալով քի բոլորովին մարդկային են աս աւանդութիւններն ու ոչ աստուածային:

1. Եւ ժողովեցան առ նա Փարիսեցիքն, եւ ոմանք ի Դպրացն՝ որ եկեալ էին յերուսաղէմէ: Մատթ. ԺԵ. 2.

2. Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անտի, զի խառնակ ձեռք՝ այսինքն է անլուայ ուտէին հաց, բամբասեցին:

3. Զի Փարիսեցիքն եւ օմնայն Հրեայք՝ եթէ ոչ լուսալիր լուսանալով զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի ունին զաւանդութիւն ծերոցն:

4. Եւ ի հրապարակէ մտեալ, եթէ ոչ նախ միջտիցին՝ ոչ ուտեն. եւ այլ ինչ բազում է՝ զոր ընկալան ունել, միջոտութիւնս բաժակաց, եւ սոտ կանաց, եւ պղնձեաց, եւ մահճաց:

5. Ապա հարցանեն յնա Փարիսեցիքն եւ Դպիրք թէ, Ընդէ՞ր աշակերտքն քո ոչ զնաւս ըստ աւանդութեան ծերոցն. այլ խառնակ ձեռք հաց ուտեն: Ելից, ԻՍ. 17, Դևտ. Ի. 9, Առակ. Ի. 20.

6. Նա պատասխանի եւ ասէ զնոսա թէ, Բարեւոք մարգարէացաւ Եսայի վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. Ժողովուրդս չիթամբք մեծարէ զիս, եւ պիտի նոցա հեռացեալ ի բացեայ վրայ: Եսայ. ԻԹ. 13, Մատթ. ԺԵ. 8.

7. Զուր պաշտան զիս. ուտուցանէ:

1. Եւ անոր քով ժողովուրդացն անտի, որ անմաքուր ձեռքով՝ այսինքն չլուսացուած հաց կ'ուտէին, բամբասեցին:

2. Եւ տեսնելով այն աշակերտներէն ոմանք, որ անմաքուր ձեռքով՝ այսինքն չլուսացուած հաց կ'ուտէին, բամբասեցին:

3. Զի Փարիսեցիք ու բոլոր Հրեայք՝ եթէ լաւ մը չլուսան ձեռքերնին, հաց չեն ուտեր. վասն զի ծերերուն աւանդութիւնը կը պահեն:

4. Եւ հրապարակէն վերադառնալէ ետքը, թէ որ նախ չլուսացուին՝ չեն ուտեր. եւ ուրիշ շատ բան կայ՝ որ իրենց աւանդուած է եւ իրենց կը պահեն, գաւաթներու, սափորներու, պղնձե ամաններու եւ անկողիններու լուսացումները:

5. Յետոյ Փարիսեցիներն ու Դպիրները կը հարցնեն անոր թէ ինչո՞ւ քու աշակերտներդ չեն հետեւիր ծերերուն աւանդութիւններուն. այլ անմաքուր ձեռքով հաց կ'ուտեն:

6. Անիկա պատասխանեց ու ըսաւ անոնց՝ թէ Աղէ՛կ մարգարէացաւ Եսայի ձեռքի՝ կեղծաւորներու համար, ըսելով. Շրթունքովը կը պատուէ զիս այս ժողովուրդը, եւ անոնց սիրտերը հեռացած բաժնուած են ինձմէ:

7. Զուր տեղը կը պաշտեն զիս.

նեն վարդապետութիւնս զմարդ-
կան պատուիրեալս :

8. Թողեալ զպատուիրանն Աս-
տուծոյ, ունի՞ք զմարդկան աւան-
դութիւն, մկրտութիւնս ստոմա-
նաց և բաժակաց, և այլոց նման-
եաց սոցին առնէ՞ք բազումս :

9. Եւ ասէ ցնոսա . Բարեք խո-
տէք զպատուիրանն Աստուծոյ, զի
զձեր աւանդութիւնն հաստատի-
ցէք :

10. Զի Մովսէս ասէ . Պատուեալ
զհայր քո, և զմայր, և Որ հարա-
խօսեացէ զհօրէ, կամ զմօրէ, մա-
հու վախճանեցի : Մատթ. ԺԵ. 4.
Եղից, ԻՍ. 17. Եղից, Ի. 12. Երկ. Օրին.
Ե. 16. Դեռս. Ի. 9. Առակ. Ի. 20.

11. Եւ դուք ասէք . Եթէ ա-
սիցէ ոք ցհայր կամ ցմայր . Կոր-
թան՝ որ է պատարագ, զոր յինէն
օգտեցիս . Մատթ. ԺԵ. 6 :

12. Եւ ոչ եւս տայք թոյլ նմա
առնել ինչ հօրն կամ մօր .

13. Եւ անարգէք զբանն Աս-
տուծոյ ձերով աւանդութեամբն,
զոր աւանդեցիք . և բազում ինչ
այլ որ այսմ նման է՝ առնէք :

Ի՞նչ բան մաքուր է ստուգիւ, եւ ի՞նչ անմաքուր :

14. Եւ կոչեալ առ ինքն զա-
մենայն ժողովուրդն, ասէ ցնոսա .
Լուարո՞ւք ինձ ամենեքեան և ի
միտ առէք : Մատթ. ԺԵ. 10.

15. Ոչ ինչ արտաքուստ ի մարդ
մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա .
այլ որ ելանէ ի նմանէ՝ այն է որ
պղծէ զմարդն :

11-12. Եթէ ասիցիք ոք . . . Կորթան . . .
Տե՛ս այս անցից մեկնութիւնը . Ս. Մատթ.

մարդոցմէ պատուիրուած վարդա-
պետութիւններ կը սորվեցնեն :

8. Թողով Աստուծոյ պատուի-
րանը, կը բռնէք մարդիկներու ա-
ւանդութիւնը, սափորներու եւ
գաւաթներու լուացումներ, և ու-
րիշ ասոնց նման շատ մը բաներ
կ'ընէք :

9. Եւ անոնց կ'ըսէ . Աղէկ կ'ար-
համարէ՞ք Աստուծոյ պատուիրա-
նը, որպէս զի հաստատուն պահէ՞ք
ձեր աւանդութիւնը :

10. Զի Մովսէս ըսաւ . Պատ-
ուէ՞ք ու հայրդ ու մայրդ, և՛ Ով
որ անուանարկէ իր հայրն ու մայ-
րը, մահով պիտի մեռնի :

11. Ու դուք կ'ըսէք . Թէ որ
մէկ մը իր հօր կամ մօր ըսէ . Կոր-
թան՝ այսինքն նուէր, զոր պիտի
շահիս ինչ .

12. Եւ ա՛լ թող չէք տար ա-
նոր՝ որ բան մ'ընէ իր հօր կամ
մօր .

13. Ու կ'անարգէք Աստուծոյ
խօսքը ձեր աւանդութեամբը՝ զոր
դո՛ւք հաստատած էք . և ուրիշ
շատ բան կ'ընէք որ ասոր նման է՝

14. Եւ իր քով կանչելով բո-
լոր ժողովուրդը, անոնց ըսաւ .
Լսեցէ՛ք ինձի ամէնքդ ու ըմբռն-
եցէ՛ք :

15. Զկայ բան մը որ դրանց
մտնելով մարդուն ներսը՝ կարող
ըլլայ զանիկա պղծելու . հայտն
ինչ որ դուրս կ'ելլէ անորմէ՝
է որ կը պղծէ մարդը :

ԺԵ. 5-6. Ծանօթ.:

16. Որ ունիցի ականջս լսելոյ՝
լուիցէ :

17. Եւ իբրեւ եմուտ ի տուն
յամբոխէ անտի, հարցանէին զնա
աշակերտքն վասն առակին : Մատթ.
ԺԵ. 15.

18. Եւ ասէ ցնոսա . Այդպէս և
դո՛ւք անմիտ էք . ո՛չ իմանայք՝
եթէ ամենայն որ արտաքուստ ի
ներքս մտանէ ի մարդ, ոչ կարէ
զնա պղծել :

19. Զի ոչ եթէ ի սիրս նորա
մտանէ, այլ յորովայն՝ և արտաքս
ելանէ . և սրբէ զամենայն կերա-
կուրսն :

20. Եւ ասէր, թէ Որ ինչ ի
մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ :

19. Զի ոչ եթէ ի սիրս նորա մտնէ. —
նշանն ու խմբը սոսկ ֆիզիքական գոր-
ծողութիւններ ըլլալով չեն կրնար հոգին
պղծել . Որովհետեւ, ոչ թէ մարդու սիրտը,
որտեղ հոգեկան գործողութեանց կեդրոնը կը
նկատուի, կը մտնեն՝ այլ անոր ստամոքսը,
որ քիմիքօ-ֆիզիքական գործողութիւններէ
վերջը անոնց օգտակար մասերը կը ներ-
մուծուին բջիջներու մէջ, իսկ մնացորդները
բնութենէն դուրս կ'արտաքսուին . Ուստի,
այսպիսի գործողութիւն մը ամենեւին չի
կրնար առնչութիւն ունենալ մարդու հո-
գեկան վիճակին հետ . Պարզ են, ու խիստ
պարզ Յիսուսի աս խօսքերը . «Բայց շա-
տեր զայն չարաչար գործածելով . . . բոլոր
կը բաւնան Ս. Եկեղեցւոյ ան հինաւորց
սովորութեան դէմ, որով՝ ինչ ինչ ատեններ
արդիւրած է նա մեղինաց ու կամեղինաց
գործածութիւնը . և կամ հաստատած է ծո-
ռապետութեան օրէնքը . Բայց Ս. Եկեղեցին՝
ոչ թէ իբր. հոգին պղծող արարածներ սե-
պելով այսպիսի արգելք մը դրած է անոնց
գործողութեանց մասին, հապա ուզած է
ասով վարժեցնել իր որդիքը ապաշխարու-

16. Ով որ ականջ ունի լսելու՝
թող լսէ :

17. Ու երբ տուն մտաւ, այն
ամբոխէն բաժնուելով, աշակերտ-
ներն անոր կը հարցնէին այն ա-
ռակին համար :

18. Եւ անոնց կ'ըսէ . Այդպէս
դո՛ւք ալ անմիտ էք . չէ՞ք իմա-
նար թէ ինչ որ դրան կը մտնէ
մարդուն ներսը, չի կրնար պղծել
զանի .

19. Զի չէ թէ անոր սրտին մէջ
կը մտնէ, հապա որովայնը, և
դուրս կ'ելլէ . ու կը մաքրէ բոլոր
կերածները :

20. Ու կ'ըսէր, թէ Ինչ որ
մարդէն դուրս կ'ելլէ՝ ա՛ն կը
պղծէ մարդը :

Թեան ու մահացուցման առաքինութիւննե-
րուն . . . : Նա լաւ համոզուած է թէ Աս-
տուծոյ ամէն արարածները բարի են ըստ
ինքեան, և մարդ կրնայ գործածել զայնս
շնորհակալու ոգով . Ա. Տիմ. Գ. 4. Բայց,
այն ինչ օրինաւոր իշխանութիւն մը կ'ար-
գելու անոնց գործածութիւնը, իրեն ըստ
ինքեան արգիլուած կ'ըլլայ . և այն ատեն
միայն կը պղծեն մարդուն հոգին՝ երբ ըմ-
բոստանալով հաստատուած օրինաց դէմ,
անժուժկալութեամբ գործածէ զայնս և ա-
սով յանցաւոր մնայ իր Արարչին ու Եկե-
ղեցւոյ անտեսանելի Գլխոյն՝ Յիսուսի-Քրիս-
տոսի առջեւ . Տ. Գալմէ . Աս խորհրդակ-
ցութեան վրայ կրնանք նաեւ յաւելուլ սա
տեսութիւնն ալ թէ, Եկեղեցին ոչ թէ միայն
բարոյական տեսակէտով հիմնած է պահե-
ցողութեան օրէնքը, հա՛պա առողջապահա-
կան տեսակէտով ալ . Ինչպէս օրը օրին դի-
տութեանց յառաջդիմութիւնը ցոյց կուտայ՝
մարդս ժուժկալութեամբ չէ թէ չի փնտեր
իր առողջութեան, այլ մեծապէս կ'օգտուի
ալ անկէ :

33. Եւ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատուռնս իւր ընդականջս նորա՝ և եթուք անդր. և կալաւ զլեզուէ նորա.

34. Հայեցաւ յերկինս, յողորմեան և ասէ. Ե՛փփաթայ, որ է՝ բացիր՝:

35. Եւ նոյնժամայն բացան լըսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և խօսէր ուղիւ:

36. Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա. նոքա եւս առաւել քարոզէին.

37. Եւ եւս քան զեւս զարմանային և ասէին. Զամենայն ինչ բարեւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և համերց խօսիլ:

33. Ու մէկ կողմ տանելով զանի բազմութեան մէջէն. անոր աւանջը խոթեց իր մատներն ու հոն թքաւ. և անոր լեզուէն բռնեց.

34. Երկինք նայեցաւ, հառաչեց ու կ'ըսէ. Ե՛փփաթայ, որ ըսել է՝ բացուէ՛:

35. Եւ իսկոյն բացուեցան անոր ականջները, և քակուեցան անոր լեզուին կապերն ու շիտակ կը խօսէր:

36. Եւ անոնց պատուիրեց որ չըսեն մէկու մը, և որչափ որ ինք կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը հռչակէին.

37. Եւ ա՛լ աւելի կը զարմանային ու կ'ըսէին. Ամէն բան աւելի ըրաւ ասիկա, որովհետեւ խուլներուն լսել կուտայ և համբերուն՝ խօսիլ:

ԳԼՈՒԽ Ը.

Յիսուս երկրորդ անգամ կը բազմացնէ ճրայքով հացերը. — Փաթիւեցիք ճրայքով կը խնդրեն երկինքէն Եւ Յիսուս կը մերժէ. ու կը պատուիրէ իր աշակերտաց որ զգոյլ ըլլան Փաթիւեցուց աղանդէն:

1. Յաւուրսն յայնոսիկ, դարձեալ ժողովուրդ բազում էր, և ինչ ոչ ունէին ուտել: Կոչեաց զաշակերտսն իւր, և ասէ ցնոսա. Մատթ. ԺԵ. 32.

2. Դիմամ ես ի վերայ ժողովրդեանդ, զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս են. և ոչ ունին զինչ ուտիցեն:

3. Եւ եթէ արձակեմ զգոսա նոթիս ի տունս իւրեանց՝ նքթիցեն ի ճանապարհի. զի ոմանք ի դոցանէ ի հեռաստանէ եկեալ են:

4. Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա. Ո՛ւստի կարես

1. Ան օրերը, դարձեալ շատ ժողովուրդ կար, և ուտելու բան մը չունէին: Կանչեց իր աշակերտներն ու ըսաւ անոնց:

2. Կը գիտեմ ես ատ ժողովուրդը լին լրայ, որովհետեւ, ահա երեք օրէ ի վեր է որ ինծի հետ են. և չունին ուտելու բան մը:

3. Ու թէ որ անօթի արձակեմ ատոնք իրենց տունները՝ անօթու թնէ պիտի նուաղին ճամբան. զի ատոնցմէ շատերը հեռու տեղէ եկած են:

4. Անոր աշակերտները պատասխանեցին. Ի՛նչպէս կրնան կշտա-

յազեցուցանել զգոսա հացիւ յանապատի աստ:

5. Եւ հարցանէր զնոսա. Գա- նի՛ նկանակ հաց ունիք: Եւ նոքա ասեն. Եօթն: Մատթ. ԺԵ. 34.

6. Եւ հրամայեաց ժողովրդեանն ըաղմել ի վերայ երկրի: Եւ առեալ զեօթն նկանակն՝ գոհացաւ, և երեկ, և տայր ցաշակերտսն զի արկցեն. և արկին առաջի ժողովրդեանն:

7. Եւ ձկուռս սակաւ ունէին. և զայն եւս օրհնեաց, և հրամայեաց արկանել:

8. Կերան և յազեցան, և բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիւլ:

9. Եւ էին որ կերանն՝ իբրեւ չորք հազարք. և արձակեաց զնոսա:

10. Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ հանդերձ աշակերտօքն՝ եկն իր կողմանս Դաղմանուհայ: Մատթ. ԺԵ. 39.

11. Եկին Փարիսեցիքն, և սկըսան վիճել ընդ նմա, և խնդրէին ի նմանէ ճրայք յերկնից՝ փորձելով լով զանիկա՝ նշան մը կ'ուզէին զնա: Մատթ. ԺԺ. 38, ԺՁ. 1, Յովհ. Երկինքէն:

12. Եւ զայրացաւ յոգի իւր և ասէ. Զի՞ է զի ազգս այս նշան ու կ'ըսէ. Ինչո՞ւ նշան մը կ'ուզէ ինդրէ: Ամէն ասեմ ձեզ. թէ տացի նշան ազգիս այսմիկ:

13. Եթող զնոսա. դարձեալ եմուտ ի նաւ՝ և գնաց յայնկոյս:

14. Եւ մոռացան հաց բառնալ.

11. Եկին Փաթիսեցիքն... Եւ խնդրէին ի նմանէ ճրայք յերկնից: Յիսուսի՝ նոյն ամօթով ձգելու համար էր, և կամ իբր ըզ- ինքն Մեսիան ըլլալուն իբր փորձ կը փա- փայտէին սոյն նշանը. բայց ո՛չ թէ բուն փա- խկ աս էր իրենց միտքը, բանի որ շատ անգամներ ականատես եղած էին անոր

ցընել ատոնք հացով աս անապա- տին մէջ:

5. Եւ անոնց հարցուց. Գա- նի՛ նկանակ հաց ունիք: Եւ անոնք կ'ըսեն. Եօթն:

6. Ու հրամայեց ժողովրդեանն որ նստի գետնի վրայ: Եւ առնելով եօթն նկանակը՝ գոհացաւ, կոտ- րեց, ու աշակերտներուն տուաւ որ բաժնեն. և անոնք ժողովուրդ- լին առջիւր դրին:

7. Ու քիչ ձուկեր ունէին, և անոնք ալ օրհնեց, ու հրամայեց որ բաժնեն:

8. Կերան ու կշտացան, և կը- տորներէն եօթը զամբիւլ վերու- ցին:

9. Եւ անոնք որ կերան՝ չորք չորս հազար էին. ու զանոնք ար- ձրկեց:

10. Եւ իսկոյն նաւ մտնելով նաւ հանդերձ աշակերտաց հետ՝ Դաղմանուհայ- ի կողմանս եկաւ:

11. Փարիսեցիք եկան ու սկը- սան վիճել անոր հետ, և փորձե- ի նմանէ ճրայք յերկնից՝ փորձելով լով զանիկա՝ նշան մը կ'ուզէին երկինքէն:

12. Եւ իր հոգեով զայրացաւ և կ'ըսէ. Ինչո՞ւ նշան մը կ'ուզէ աս ազգը: Ընչամարի՛տ կ'ըսեմ ձե- զի՛ թէ և ո՛չ մէկ նշան պիտի տրուի աս ազգին:

13. Թողուց զանոնք, կրկին նաւ մտաւ ու գնաց միւս եզրը:

14. Եւ մոռացան հաց առնուլ.

գործած հրաշքներուն, այլ սոսկ՝ զՅիսուս ամօթով ձգելու համար էր, և կամ իբր ըզ- րօսանք մը տեսած ըլլալու հաճոյքին հա- մար էր որ այս կարգի առաջարկութիւն մը կ'ընէին:

բայց միայն՝ մի նկանակ ունէին իրենց իւրեանս ի նաւին: Մատթ. Ժ. 2. 5:

15. Եւ պատուիրէր նոցա և աւելր. Ձգո՛ւ իւրեք ի խմորոյ անտի Փարիսեցոց, և ի խմորոյ Հերովդիանոսաց:

16. Եւ խորհէին ընդ միմեանս և ասէին. Թէ զի Հացս ոչ ունիմք:

17. Գիտաց Յիսուս և ասէ ցնոսա. Ձի՛ խորհիք ի սիրտս ձեր, թե՛ րահաւատք, թէ՛ հաց ոչ ունիք: Տակաւին ո՛չ իմանայք և ո՛չ յիշէք. ապաւինեալն ունի ի սիրտս ձեր:

18. Աչք դոն՝ և ո՛չ տեսանէք, ականջ են՝ և ո՛չ լսէք, և ո՛չ իմանայք տակաւին, և ո՛չ յիշէք:

19. Յորժամ զհինգ նկանակն ի հինգ հազարսն, և քանի՛ սակաւի լի բարձէք զկոտորոցն: Եւ ասեն, Երկոտասան: Մատթ. 2. 43. Մատթ. Ժ. 20. 20. Դուք. Թ. 17. Յովհ. 2. 13:

20. Եւ յորժամ զեօթն նկանակն ի չորս հազարսն, քանի՛ զամբիւղ լի բարձէք զկոտորոցն: Եւ նոքա ասեն. Եօթն: Մատթ. Ժ. 37:

21. Եւ ասէ ցնոսա. Իսկ զիարդ ոչ իմանայք:

15. Ձգո՛ւք եղբրոք ի խմորոյ անտի Փարիսեցոց... — Հրէայք երբ Պատեքի նախընթաց օրը կը վտարէին իրենց բնակարաններէն թթու խմորը, ամէն զգուշութիւն կ'ընէին որ անկէ փոքրիկ մաս մ'անգամ չգտնուէր տան ո՛ր և է մէկ անկիւնը. Տե՛ս. Եղից, Ժ. 15: Ա՛րդ, Յիսուս կը պատուիրէ իր աշակերտաց որ նոյնքան խղճամիտ զգուշութիւն ունենան իրենք ալ. ամենեւին չպլշտիւնուի Փարիսեցոց ու Հերովդիանոսաց խմորէն, կամ ծուռ վարդապետութիւններէն: Վասն զի, ինչպէս ըսած է Ս. Մատթ. Ժ. 2.]:

ու սոսկ մէկ նկանակ ունէին իրենց հետ նաւին մէջ:

15. Եւ կը պատուիրէր անոնց ու կ'ըսէր. Ձգու՛նացէք Փարիսեցիներու ու Հերովդիանոսներու խմորէն:

16. Եւ իրարու հետ կը խորհէին ու կ'ըսէին. Թէ Հաց չունինք:

17. Յիսուս գիտցաւ ու կ'ըսէ անոնց. Ինչո՞ւ կը խորհիք ձեր սրտերուն մէջ, թե՛ րահաւատներ, թէ՛ հաց չունիք: Տակաւին չէ՞ք իմանար ու չէ՞ք յիշեր. ապաւծ են ձեր սիրտերը:

18. Աչք ունիք՝ ու չէք տեսներ, ականջ ունիք՝ ու չէք լսեր, և չէք իմանար տակաւին, ու չէք յիշեր:

19. Երբ հինգ հացերը կոտրեցի հինգ հազար հոգւոց համար, քանի՛ սակաւ լեցուն կոտորուանք վերցիւր: Ու կ'ըսեն. Տասուերկու:

20. Ու երբ եօթն հացերը կոտրեցի չորս հազար հոգւոց համար, քանի՛ զամբիւղ լեցուն կոտորուանք վերցիւր: Եւ անոնք կ'ըսեն. Եօթն:

21. Եւ անոնց կ'ըսէ. Հապա ինչպէս չէք իմանար:

խմորին յատկութիւնն է որ, Թէ և աննշան զանգուածով, սակայն երբ ալքը մէջ խառնուի, իր համը կ'ազդէ բոլոր զանգուածին, ու կ'ուռեցնէ զայն: Այսպէս ալ սխալ վարդապետութիւն մը [կամ գէշ խօսք մը, օրի՛նակ մը, զործք մը՝ մանաւանդ բարոյակաւ չի ճամբուն մէջ] եթէ ամենախորք իսկ մուտք մ'ունենայ մարդու սրտին մէջ, թի՛ւ ատենէն այդ փոքր կայծը կը փոխուի ահազին բոցի մը, ու իրեն կը քաշէ մարդու բոլոր էութիւնը» [Ս. Հերոն. Մեկն. Ս. Մատթ. Ժ. 2.]:

Յիսուս կոյրի մը աչքերը կը բացայիցայի մեզ. — Պետոս հաճախաւոր կերպով մը կը խոստովանի Յիսուսի բուն իսկ Բրիտանաց ըլլալը:

22. Դան ի Բեքսայիդա. և աւելր ան առաջի նորա կոյր մի, և աւելր զայն զնա՝ զի մերձեցի ի նա:

23. Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եւ թուք յաչս նորա, և ձեռն եղ ի վերայ նորա, և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՛ ինչ:

24. Բացաւ՝ և ասէր. Տեսանեմ զմարդիկս, զի չըջին իբրեւ զծառ:

25. Դարձեալ՝ եղ ձեռս ի վերայ աչաց նորա՝ երաց, և տեսանէր. ողջացաւ՝ և տեսանէր համարձակ զամենայն:

26. Արձակեաց զնա ի տուն իւր՝ և ասէ. Ի չէնդ մի՛ մտանիցես, այլ երթ ի տուն քո. և յորժամ ի չէն մտանիցես՝ մի՛ ումեք ասիցես ի շինին:

27. Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ ի չէն Կեսարեայ Փիլիպպեայ. և ի ճանապարհին հարցանէր ցաշակերտսն և ասէր. Ձո՞նք

22. Բեթսայիդա կուգան. և աւելր առջեւ կը բերուի կոյր մը, ու անոր կ'աղաչէին որ անոր դպի:

23. Եւ լուսնելով կոյրին ձեռքէն՝ գիւղէն դուրս հանեց, թըքաւ անոր աչքերուն մէջ, ու ձեռք դրաւ անոր վրայ, և անոր կը հարցնէր թէ կը տեսնե՞ բան մը:

24. Բացաւ աչքերն ու կ'ըսէր. Կը տեսնեմ աս մարդիկներն որ կը պտուրին ծառերու նման:

25. Կրկին ձեռք դրաւ անոր աչքերուն վրայ, բացաւ աչքերն ու կը տեսնէր. բռնեցաւ՝ ու ամէն բան յստակ կը տեսնէր:

սրտին մէջ , այլ հաւատաց՛ . թէ
պիտի ըլլայ իր ըսածը , ինչ որ աս
ըսէ՝ պիտի կատարուի անոր :

24. Ասոր համար կ'ըսեմ ձեզի՛ր .
Ի՛նչ բան որ խնդրէք աղօթք ը-
նելով , ու հաւատաք թէ պիտի
առնուք , ձեզի պիտի կատարուի՛ :

25. Ու երբ աղօթքի կենաք՝

կ'անցնէին , այսպէսով հասարակաց պող-
տակի մը վերածեր էին զայն , ուստի Յի-
սուս անոնց աս անցուղարձն ալ կ'արգիլէ՛

թողուցուք՝ եթէ ունիցիք ինչ ներեցէ՛ք՝ եթէ բան մ'ունիք մէ-
ղուսեքէ , զի և Հայրն ձեր որ կու մը դէմ , որպէս զի ձեր Հայրն
յերկինս է , թողցէ ձեզ զյանցանս ալ որ երկինքն է , ձեզի ներէ ձեզ
ձեր : Մատթ . Զ . 14 : ԺԲ . 35 :

26. Զի եթէ դուք ո՛չ թողու-
ցուք , և ո՛չ Հայրն ձեր որ յեր-
կինս է , թողցէ ձեզ զյանցանս
կինքն է , ձեզի պիտի ներէ ձեզ
յանցանքները :

Յիսուս կը մերժէ զուրցելու իր իշխանութեան ուսկից բնաւ
Սահեատրիքի անդամներուն :

27. Գան միւսանգամ յերուսա-
ղեմ . և մինչդեռ ի տաճարի անդ ու երբ կը պատէր տաճարին մէջ ,
զգնայր , զան առնա քահանայա-
պետքն և դպիրք և ձերք , Դռկ . պետները . դպիրներն ու ձերերը ,

28. Եւ ասն ցնա . Որո՞վ իշ-
խանութեամբ առնես զայդ :

29. Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնոսա . Հարցից և ես զձեզ
բան մի . տո՛ւք ինձ պատասխանի ,
և ես ասացից ձեզ՝ որո՞վ իշխա-
նութեամբ առնեմ զայս :

30. Մկրտութիւնն Յովհաննու
յերկինց էր՝ եթէ ի մարդկանէ ,
տո՛ւք ինձ պատասխանի :

31. Խորհէին ընդ միմեանս և
ասէին . եթէ ասեմք՝ եթէ Յերկ-
նից , ասէ ցմեզ . Իսկ ընդէր ոչ
հաւատացէք նմա :

27-33. Գանմիւսանգամ յերուսաղեմ...
Աւագ շաբաթուան Երեքշաբթի առտուն տեղի
կ'ունենան աս բաները . Հրէից Աւագունայ
ժողովին անդամներն արդէն խիստ զրգը-
ուած էին Յիսուսի դէմ , անոր՝ յաղթանա-
կաւ Երուսաղէմ մտնելէն ի վեր . ու ա՛լ ա-
ւելի բռնկեցան երբ նա դուրս վճռեց
Տաճարէն առուծախ ընողները , որ բանը
ձերեւա իրենց նիւթական շահուն ալ կը
վնասէր . Ուստի իրենց կողմէն պատուի-
րակներ զրկեցին Յիսուսի ըով անոր բեր-
նէն յանդուգն խօսք մը հանել տալով զինք
ամբաստանելու համար . — Ի՞նչ իշխանու-
թեամբ կ'ընես աս բաները , հարցուցին ա-
նոր . մարգարէ՞ մըն ես , Թէ քահանայապետ
մը . կամ ունի՞ս պա՛ճոն փոստ մը որ ար-
գարացնէ բու ընծացքը — Նենգաւորները յու-
սախար ու զլխկոր ետ դարձան Յիսուսի
ժանօթ պատասխանին վրայ [29] :

16. Եւ ոչ թողոյր . . . — Յովսափատու
ձորը իջնողներն իրենց ճամբան աւելի կար-
ճեցնելու համար Տաճարին բակին մէջէն

32. Այլ եթէ ասեմք՝ ի մարդ-
կանէ, երկնչիմք ի ժողովրդեանէն.
զի ամենեքին գիտէին զՅովհան-
նէս՝ թէ մարգարէ էր:

33. Պատասխանի ետուն և ա-
սեն ցՅիսուոս. Չգիտեմք: Եւ Յի-
սուոս ետ նոցա պատասխանի և
ասէ. Եւ ո՛չ ես ասեմ ձեզ՝ որով
իշխանութեամբ առնեմ զայս:

32. Բայց թէ որ ըսեմք. Մար-
դիկներէն, կը վախնամք ժողո-
վուրդէն. որովհետեւ ամենքն ալ
գիտէին՝ թէ Յովհաննէս մարգարէ
մըն էր:

33. Պատասխան տուին ու ը-
սին Յիսուոսի. Չեմք գիտեր: Եւ
Յիսուոս պատասխան տուաւ անոնց
ու ըսաւ. Ես ալ ձեզի չեմ ըսեր
ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ աս
բանը:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Տիրապան մշակներուն առակը. — Անարգուած վեմը:

1. Եւ սկսաւ խօսիլ ընդ նոսա
առակօք և ասել. Այլ մի անկեաց
այգի, և ամ շուրջ գնովաւ ցանդ,
և գուր հնձան փորեաց, և շին-
եաց աշտարակ. և ետ զնա ցմը-
շակս, և զնայ ի տար աշխարհ:
Եւ այլ, Ե. 1: Երեմ. Բ. 21: Մատթ. ԻԱ.
33: Դուկ. Ի. 9:

2. Եւ առաքեաց առ մշակին ի
ժամանակի ծառայ մի, զի ի մշա-
կաց անտի առցէ ի պողոյ այգ-
ւոյն:

3. Եւ նոցա կալեալ՝ զան հա-
րին զնա, և արձակեցին ունայն:

4. Դարձեալ առաքեաց առ նո-
սա այլ ծառայ, և զնա կառափ-
նատեցին և արձակեցին անարգ-
եալ:

5. Եւ դարձեալ այլ առաքեաց,
և զնա սպանին. և զբազումս
այլս՝ զոմանս հարկանէին և զո-
մանս սպանանէին:

5. Եւ զբազումս այլս՝ զոմանս հարկա-
նէին...: Աս առակով Տէրն մեր ցոյց կու
տայ Աստուծոյ յարատեւ խնամքը հրէական
ազգին համար, և ասոր ներկայացուցիչնե-
րուն կամ պետերուն վատ ու թշնամական

1. Ու սկսաւ առաջներով անոնց
հետ խօսիլ ու ըսել. Մարդ մը
այգի մը անկեց, ու ցանդ քաշեց
անոր բոլորտիքը, և հնձան մը
փորեց ու շինեց աշտարակ մը. և
վարձքի տուաւ մշակներու, և հե-
ռու երկիր զնայ:

2. Ու երբ ատենը եկաւ, ծա-
ռայ մը զրկեց մշակներուն՝ որ-
պէս զի անոնցմէ առնու իր բա-
ժինը այգիին պտուղէն:

3. Եւ անոնք բռնելով՝ ծեծեցին
զանի ու պարտալ ետ զրկեցին:

4. Դարձեալ ուրիշ ծառայ մըն
ալ զրկեց անոնց, և զանի գըլ-
խէն վիրաւորեցին ու անարգուած
ետ զրկեցին:

5. Ու կրկին ուրիշ մը զրկեց,
և զանի սպանեցին. և ուրիշ շա-
տեր ալ, որոց մէկ քանին ծեծե-
ցին ու մէկ քանին սպանեցին:

Ընթացքը Աստուծոյ հանդէպ — Եւ յիրաւի
Յեսուի օրով, Քանաանու երկրին մէջ հաս-
տատեց Նահվէ իր հոգեւոր Այգին՝ հրէական
ազգը.

6. Ապա որդի մի էր իւր սիրելի,
զնա առաքեաց առ նոսա յետոյ,
և ասէ. Թերեւս ամաչեացեն յորդ-
ւոյ աստի խմբէ:

7. Իսկ մշակքն իբրեւ տեսին
զնա թէ գայ՝ ասն ցմբանանս.
Սա՛ է ժառանգն, եկա՛յք սպան-
ցուք զսա, և մեր լիցի ժառան-
գութիւնն:

8. Եւ կալեալ զնա սպանին,
և հանին արտաքոյ այգւոյն:

9. Արդ, զի՛նչ արացե տէր
այգւոյն: Եկեացէ և կորուսցէ
զմշակն, և առցէ զայգին ի ձեռս
այլոց:

10. Եւ ո՛չ զգիրն զայն իցէ ըն-
թերցեալ ձեր. թէ Զվէմն՝ զոր ա-
նարգեցին շինողքն, նա եղեւ գը-
լուխ անկեան. Հուռմ. Թ. 33: Ա. Պեհ.
Բ. 7: Սաղմ. ձԺԵ. 22: Եւայի, ԻԲ. 16:
Մատթ. ԻԱ. 42: Գործ. Դ. 11:

6. Յետոյ, սիրելի որդի մըն
ալ ունէր, զոր է՛ն վերջը անոնց
զրկեց ըսելով. Գուցէ ամենան
իմ աս զաւակէս:

7. Բայց երբ մշակները տեսան
որ անկա կուգայ՝ իրարու ըսին.
Ա՛ս է ժառանգորդը. եկէ՛ք սպան-
նենք զանի, ու մեզի պիտի ըլլայ
ժառանգութիւնը:

8. Եւ զանի բռնելով սպանե-
ցին, և այգիէն դուրս հանեցին:

9. Արդ, ի՛նչ պիտի ընէ այգիին
տէրը: Պիտի գայ ու պիտի կոր-
սնցնէ մշակները, և այգին ու-
րիշներու պիտի յանձնէ:

10. Եւ դուք կարգացած չէ՛ք
այն գրուածը. թէ Այն քարը,
զոր անարգեցին շինողները, ա՛ն
եղաւ անկիւնի գըլուխ,

և զոր պաշտպանելէ, խնամելէ ետքը յանց-
նեց ժողովուրդին ներկայացուցիչներուն և
ինք այլ եւս խաշուիլ ձեռացուց: Ու երբ
ատենը եկաւ որ ատ ազգէն իր ա՛յնչափ
խնամոց պտուղն առնու, զրկեց իր ծառա-
ներէն [Մատթ. ԻԱ. 34], որոնք շատ գէշ
ընդունելութիւն մը գտան ժողովուրդին ներ-
կայացուցիչներուն քով. Այսպէս, շատ ան-
գամներ Աստուծոյ կրկին թուով ծառաներ
զրկեց որպէս զի յիշեցնեն հրէական ազ-
գին պետերուն իրենց պարտականութիւն-
ները, բայց չարաչար լիութեան կամ ըս-
պանութեան. Եղիա կ'անարգուի Յեզաբելէն
[Դ. Թագ. ԺԹ. 2], Միքէ՛ բանտ կը դըր-
ուի Աբաթէն [Դ. Թագ. ԻԲ. 24-27], Ե-
ղիսէ սպանալիք կը կրէ Յովթամէ [Դ.
Թագ. 2. 31]. Չաքարիա կը բարկոծուի
Յովթաի հրամանաւ [Բ. Մնաց. ԻԴ. 21].
Երեմիա կը բարկոծուի իր հայրենակիցնե-
րէն. Եւայի կը սողոցուի փայտէ սողոցով մը
պատմուի. որ երկու կէտերն ալ պիտի
... ուր ուրեմն Յովհ. Մկրտիչ կը գլխատ-

ուի Հերովդէսի ձեռամբ. Այսչափ ազդարա-
րութենէ ետքը տակաւին շարունակելով
նոյն ազգին գլխատորներն իրենց հետու-
թեան ու զայնակողի ընծացից մէջ, կը
փութայ Աստուծոյ իր իսկ Միաժին ու ա-
մենասիրելի Որդին զրկելու, յառաջուց զիտ-
նալով հանդերձ Թէ ի՛նչպիսի ընդունելու-
թիւն մը պիտի գտնէ ան:
9. Արդ, զի՛նչ արացէ սէր այգւոյն...:
Այս հարցումով Տէրն մեր կ'ուզէ որ իր հա-
կաւորները որոշեն անոնց տրուելիք
պատիժը, որով՝ կերպով մը իրենք իրենց
պատիժը սահմանած ըլլան [Մատթ. ԻԱ. 40].
— Եկեացէ եւ կորուսցէ. ա՛ս եղաւ Սան-
հէտրիսի անշամոց պատասխանն առ Յի-
սուոս. Երկու մաս կը բովանդակէ սոյն վը-
թագ. 2. 31]. Չաքարիա կը բարկոծուի
Յովթաի հրամանաւ [Բ. Մնաց. ԻԴ. 21].
հաւատարիմ մշակներուն ձեռքէն. երկրորդ
որ յիշեալ մշակներն ալ չարաչար պիտի
պատմուին. որ երկու կէտերն ալ պիտի
տեսնեմք Թէ չուշացան իրականանալու:

11. Ի Տեառնէ եղև այս, և էս
սքանչելի յաչս մեր:

12. Եւ խնդրէին զնա ունել,
և երկեան ի ժողովրդենէ անտի,
զի գիտացին թէ առնոսա ասաց
դուռակն. և թողին զնա և զնա-
յին:

Մանհետրիմի անդամոց մէկ նոր ծուղակը Յիսուսի դէմ. — Աստուծոյ եւ
կայսեր իրաւունքը. — Մեռելոց յարութիւնը:

13. Եւ առաքեն առնա զոմանս
ի Փարիսեցւոց անտի և ի Հերով-
դիանոսաց, զի զնա որոտացեն բա-
նիւ: Մատթ. Իբ. 15: Դուկ. Ի. 20:

14. Եւ նոքա եկեալ հարցանէին
զնա նենգութեամբ և ասէին.
Վա՛րդապետ, գիտեմք զի ճշմա-
րիտ ես, և ո՛չ ինչ փոյթ է քեզ
զուսնքէ զի ո՛չ հայիս յերեսս
մարդկան, այլ ճշմարտութեամբ
զճանապարհն Աստուծոյ ուսուցա-
նես: Արդ՝ ասա՛ մեզ. Արծա՛ն է
հարկս տալ կայսեր՝ թէ ո՛չ. տա-
ցո՞ւք՝ եթէ ո՛չ տացուք:

15. Եւ Յիսուս գիտաց զկեղ-
ծաւորութիւն նոցա. ասէ ցնտա.
Զի՛ փորձէք զիս, կե՛ղծաւորք.
բերե՛ք ինձ դահեկան մի զի տե-
սից:

14. Արծա՞ն է հարկս տալ... Ակնե-
րեւ կը տեսնուի Սանհետրիմի պատուիրակ-
ներուն խորամանկութիւնը: Ներկայացող-
ներն են Փարիսեցիներէն ու Հերովդիա-
նոսներէն մէկ քանին: Առջիններն հռոմէա-
կան պետութեան ոխերիմ թշնամիներն էին,
մինչ վերջիններն անոր ջերմ պաշտպաննե-
րը: Արդ, սոյն պատուիրակներն ա՛յնպէս
մը կը ներկայանան՝ իբր Թէ ծանր վէճ մը
ունեցած ըլլալով իրարու հետ տուրք վճա-
րելու մասին օտար տէրութեան մը՝ ինչպէս
էր Հռովմայեցւոցը, ու չկրնալով միաբա-
նիլ՝ զՅիսուս կ'ուզեն իրաւարար ընտրել:

11. Տիրովմէ կղաւ աս բանը,
և զարմանալի է մեր աչքերուն:

12. Ու կը ջանային բռնել զա-
նի, բայց վախցան ժողովուրդէն,
որովհետեւ գիտցան թէ իրենց հա-
մար ըստ առակը. և զանի
թողուցին ու զնացին:

13. Եւ անոր քով զրկեցին ան
Փարիսեցիներէն ու Հերովդէսի
կուսակիցներէն մէկ քանին՝ որ-
պէս զի իր խօսքովը բռնեն զանի:

14. Եւ անոնք գալով, նեն-
գութեամբ անոր հարցուցին ու ը-
սին. Վա՛րդապետ, գիտեմք որ
դու ճշմարտախօս ես, ու մէկ մը
քու փոյթդ չէ. որովհետեւ մար-
դու մը ակնաւորութիւն չես ըներ,
այլ ճշմարտութեամբ կը սորվեց-
նես Աստուծոյ ճամբան: Ուրեմն
ըսէ՛ մեզի. Հա՞րկ է կայսեր տուրք
վճարել՝ թէ ո՛չ. ասա՛նք թէ չտանք:

15. Եւ Յիսուս գիտնալով ա-
նոց կեղծաւորութիւնն ըստ ա-
նոց. Ինչո՞ւ կը փորձէք զիս,
կե՛ղծաւորներ. դահեկան մը բե-
րեք ինձի որ տեսնեմ:

Իրենց հարցումը երկու մաս կը պարունա-
կէ. 1. Հա՞րկ է, կամ ներեմ՝ է հռովմա-
կան կայսեր տուրք վճարելն: 2. Մեզի՞ որ
Եանվէի ժողովուրդն եմք, Իսրայէլի որդի՞
ղիները, ներեմ՝ է որ կուսպաշտ կայսեր
մը տուրք վճարենք:

Եթէ Յիսուս պատասխանէր Թէ Պէ՛տք է
վճարել, ժողովուրդն իրեն դէմ պիտի գըր-
գոէր: Եթէ պատասխանէր Թէ Ո՛չ, անմի-
ջապէս Հերովդիանոսներէն պիտի ամե-
բաստանէին զինք: Կեսարու առջեւ Թէ Ոտ-
քի կը հանէ ժողովուրդը:

16. Եւ նոքա բերին: Եւ ասէ
ցնտա. Ո՞ր է պատկերս այս կամ
գիր: Եւ նոքա ասեն ցնա. Կայ-
սեր:

17. Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնտա. Երթա՛յք, տո՛ւք զկայ-
սերն՝ Կայսեր, և զԱստուծոյն՝ Աս-
տուծոյ: Եւ զարմացան ընդ նա:
տուծոյ. Եւ զարմացան անոր վը-
րայ:

18. Փան առ նա Սաղուկեցիին
որ ասեն՝ թէ Զիք յարութիւն.
հարցանէին ցնա և ասէին. Մատթ.
Իբ. 23: Դուկ. Ի. 27:

19. Վա՛րդապետ, Մովսէս դըր-
եաց մեզ. Եթէ ուրուք եղբայր
մեռանիցի և թողուցու կին, և
եղբայրը ոչ թողուցու. զի առցէ եղ-
բայր նորա զկին նորա, և յարուս-
ցէ զաւակ եղբոր իւրում: Բ. Օտիւն.
ու զաւակ հանէ իր եղբոր:

20. Ա՛րդ, եղբարք եօթն էին
առ մեզ, առաջինն առ կին՝ և մե-
ռաւ, և ոչ եթող զաւակ:

21. Եւ երկրորդն առ զնոյնն՝
և մեռաւ, և ոչ նա եթող զաւակ:
Նոյնպէս և երրորդն առ զնոյն:
ու զաւակ հանէ իր եղբոր:

22. Եւ եօթներեան իսկ. և ոչ
թողին զաւակ: Յետ ամենեցուն
մեռաւ և կինն:

23. Ա՛րդ՝ ի յարութեանն յոր-
ժամ յառնիցեն, ո՞ր ի նոցանէ
պարտականութիւն ունի հանդէպ իր Մրա-
շին որ զորո՞ւմ է անոր վրայ իր պատկե-
րը: Աս պատասխանով Յիսուս Թէ՛ Փա-
րիսեցւոց դաս մը տուաւ, որովհետեւ ա-
նոնք էին որ կը մերժէին Կեսարու իրա-
ւունքը ճանչնալը, և Թէ Հերովդիանոսաց՝
որոնք անող կը զանուէին Աստուծոյ հաւ-
դէպ ունեցած պարտականութեանց մասին:

17. Տո՛ւք զկայսերն՝ Կայսեր... Յի-
սուսի միտքը շատ բացայայտ է. Աս դրա-
մը, ըսել կ'ուզէ Յիսուս, ո՛ւրիշ կուզա՞յ
պէտք է վերադառնայ, Հրէաստանի
մէջ անոր պաշտօնական ներկայութիւնը ցոյց
կուտայ Թէ՛ Հռոմի պետութիւնը իշխանու-
թիւն ունի Հրէից վրայ. պէտք է ուրեմն
յարգել ատ իշխանութիւնը: Եթէ ուրեմն
Կեսար իրաւունք ունի պահանջելու ինչ որ
իրենն է, Աստուած ա՛լ աւելի իրաւունք
ունի պահանջելու որ մարդ չմոռնայ որչափ

16. Եւ անոնք բերին: Եւ ըսաւ
անոնց. Որո՞ւն է աս պատկերը
կամ գիրը: Եւ անոր ըսին. Կայ-
սերն է:

17. Յիսուս պատասխանեց ու
ըսաւ անոնց. Գնացէ՛ք, Կայսերը՝
Կայսեր տուէ՛ք, և Աստուծոյն՝ Աս-
տուծոյ. Եւ զարմացան անոր վը-
րայ:

18. Անոր քով եկան Սաղուկե-
ցիներն որոնք կ'ըսեն թէ Զկայ
յարութիւն. հարցուցին անոր ու
ըսին.

19. Վա՛րդապետ, Մովսէս մեզ
համար դրած է. Եթէ մէկու մը
եղբայրը մեռնի, և այսպէս ձգէ
կինը ու զաւակ չձգէ. թո՛ղ ա-
նոր եղբայրն առնու անոր կինն
ու զաւակ հանէ իր եղբոր:

20. Ա՛րդ, եօթը եղբայրներ կա-
յին մեր քով, առաջինը կին ա-
ռաւ՝ ու մեռաւ, և չձգեց զաւակ:

21. Եւ երկրորդն առաւ նոյնը՝
ու մեռաւ, և ան ալ չձգեց զա-
ւակ: Նմանապէս երրորդն ալ ա-
ռաւ նոյնը:

22. Եւ եօթն ալ առին զանի,
ու չձգեցին զաւակ: Ամենէն ետ-
քը կինն ալ մեռաւ:

23. Ա՛րդ, յարութեան ատեն
բըր յարութիւն առնուն, անոնցմէ

18. Սաղուկեցւոց մասին, Տե՛ս. Մատթ.
Իբ. 23. Ծանօթ:

ինչիցի կինն. զի եօթնեքեան կա-
լան զնա կին:

24. Պատասխանի ետ Յիսուս և
ասէ ցնոսա. Ո՞չ վասն այդորիկ
խակ մոլորեալ էք. զի ո՛չ գիտէք
զԳիրս՝ և ո՛չ զզօրութիւնն Աս-
տուծոյ:

25. Զի յորժամ ի մեռելոց յա-
րիցեն, ո՛չ արք կանայս առնեն՝
և ո՛չ կանայք արանց լինին. այլ
իրբեւ զճրկտակս իցեն որ յեր-
կինս են:

26. Այլ՝ վասն յարութեան մե-
ռելոց զի յառնեն, ո՛չ իցէ ըն-
թերցեալ ձեր ի Գիրան Մովսէսի
ի մօրենառչն. որպէս ասաց ցնա
Աստուած. Ես եմ, ասէ, Աստուած
Աբրահամու, Աստուած Իսահակայ,
և Աստուած Յակովբայ: Ելից, Գ. 6:
Մատթ. ԻԲ. 32:

27. Եւ ո՛չ է Աստուած մեռե-
լոց՝ այլ կենդանեաց: Եւ ա՛րդ,
Դուք յոյժ մոլորեալ էք:

Ո՞րն է առաջին պատուիրանը.—Մեսիա՝ Դաւթի որդին.—Պետք է
գգուլանալ Դպիրներէն.—Որքեւարի կնոզ լուսման:

28. Եւ մատուցեալ մի ոմն ի
գալիացն՝ լսէր նոցա մինչ վիճէինն.
իրբեւ ետես եթէ բարեօք ետ նո-
ցա զպատասխանին, եհարց ցնա
և ասէ. Ո՞ր պատուիրան է առա-
ջին: Մատթ. ԻԲ. 35:

29. Եւ Յիսուս ասէ ցնա. Ա-
ռաջին քան զամենայն՝ Լո՛ւր Իս-

որո՞ւն պիտի ըլլայ այն կինը. ո-
րովհետեւ եօթն ալ զանի կին առին:

24. Յիսուս պատասխանեց ու
ըսաւ անոնց. Զէ՞ որ ատոր խակ
համար մոլորած էք. զի ո՛չ Գիր-
քը գիտէք դուք, ո՛չ ալ Աստու-
ծոյ զօրութիւնը:

25. Որովհետեւ, մեռելոցմէ երբ
յարութիւն առնուն, ո՛չ այրմար-
դիկ կին կ'առնուն՝ և ո՛չ ալ կին
մարդիկ այրեր. այլ պիտի ըլլան
նման հրեշտակներու որոնք եր-
կինքն են:

26. Իսկ՝ գալով մեռելոց յա-
րութիւն առնելուն, կարգացած
է՞ք Մովսէսի գիրքին մէջ մօրե-
նիին մասին, ինչպէս ըսաւ անոր
Աստուած. Ես եմ, ըսաւ, Աբրա-
համու Աստուածը, Իսահակայ
Աստուածը, և Յակովբայ Աստուա-
ծը:

27. Եւ մեռելներուն Աստուա-
ծը չէ ան՝ այլ կենդանիներունը:
Դուք ուրեմն, չատ մոլորած էք:

28. Ու մօտենալով գալիներէն
մին՝ անոնց մօրիկ կ'ընէր երբ կը
վիճէին. երբ տեսաւ որ լաւ պա-
տասխան մը տուաւ անոնց, անոր
հարցուց ու ըսաւ. Ո՞ր պատուի-
րան առաջին է:

29. Եւ Յիսուս ըսաւ անոր՝
Ամենէն առաջինն է. Լսէ՛ Իս-

25. Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ո՛չ
արք կ'սնայս առնեն. . . : Մարդկային ցեղն
անցնելու ու բարգաւաճելու համար ա-
մուսնութիւնն հաստատուեր է աս աշխարհի
մէջ: Բայց անդի ի աշխարհքն՝ ուր մահը
կարող է նուազել երանելիներուն թիւը,
ա՛լ տեղի չկայ ամուսնութեան: Հո՞նք բնու-
թիւնը պիտի զգենու իր կատարելութիւնը
և սիրտն ամենեւին ազատ ըլլալով կրից
հոսանքէն՝ պիտի հրաժարի աստուածային սի-
րով: Այն ատեն իբր հրեշտակներ պիտի
ըլլան ու պիտի ապրին երանելիներն ալ:

բայէլ, Տէր Աստուած մեր Տէր բայէլ, մեր Տէր Աստուածը՝ մի
մի է: Բ. Օրին. 2. 4:

30. Եւ սիրեցես զՏէր Աստ-
ուած քո յամենայն սրտէ քումմէ, Աստուածդ քու բոլոր սրտովդ,
և յամենայն անձնէ քումմէ և յա-
մենայն մտաց քոց, և յամենայն
զօրութենէ քումմէ: Այս է առա-
ջին պատուիրան:

31. Եւ երկրորդն նման սին.
Սիրեցես զընկեր քո իբրեւ զանձն
քո: Մեծ քան զսոսա այլ պատ-
ուիրան ոչ գոյ: Դևս. ԺԹ. 16: Մատթ.
ԻԲ. 39: Հռոմ. ԺԴ. 9: Դադաս. Ե. 14:
Յակ. Բ. 8:

32. Եւ ասէ ցնա գալիքն. Բար-
եւո՞ք է, Վա՛րդապետ. ճշմարտու-
թեամբ ասացնր՝ թէ մի է Աստ-
ուած, և ո՛չ գոյ այլ բայ ի նմանէ:
ուած, և անկէ վատ չկայ ուրիշ մը:

33. Եւ սիրելն զնա յամենայն
սրտէ, և յամենայն զօրութենէ, և
յամենայն մտաց. Եւ սիրելն զընկերն
իրբեւ զանձն, առաւել է քան զող-
ջակէզս և զզոհս:

34. Եւ տեսեալ Յիսուսի թէ ի-
մաստութեամբ ետ զպատասխա-
նին՝ ասէ ցնա. Չես հեռի յարքա-
յութենէ Աստուծոյ: Եւ ո՛չ ևս ոք
իշխէր ինչ հարցանել ցնա:

35. Պատասխանի ետ Յիսուս և
ասէ, մինչ ուսուցանէր ի տաճա-
րին. Զիարդ ասեն գալիքն՝ եթէ
Բրիստոսն որդի Դաւթի է: Մատթ.
ԻԲ. 42: Դուկ. Ի. 41:

36. Եւ ինքն Դաւիթ Հոգւոյն
Սրբով ասէ. Ասաց Տէր ցՏէր իմ.
Նի՛ստ ընդ աշմէ իմմէ՝ մինչև ե-
ղից զԹշնամիս քո պատուանդան
դիմի քոց: Մատթ. ԺԹ. 1: Մատթ. ԻԲ.
44: Դուկ. Ի. 42:

37. Ա՛րդ, եթէ ինքն իսկ Դա-
ւիթ, զնա Տէր կոչէ, զիարդ իցէ
Դաւիթ՝ Տէր կ'անուանէ զանի,
որդի նորա: Եւ բազում ժողո-
ւինչպէս կրնայ անոր որդին ըլլալ:

32. Եւ գալիքն անոր ըսաւ. Ա-
ղէ՛կ, Վա՛րդապետ. ճշմարտու-
թեամբ ասացնր՝ թէ մէկ է Աստ-
ուած, և անկէ վատ չկայ ուրիշ մը:

33. Եւ զանի բոլոր սրտով սի-
րելն, ու բոլոր զօրութիւնով, ու
բոլոր մտքով. և իր ընկերն ալ
իր անձին պէս սիրելն աւելի է քան
ողջակէզներն ու զոհերը:

34. Եւ Յիսուս տեսնելով որ ի-
մաստութեամբ պատասխան տը-
ւաւ՝ անոր ըսաւ. Հեռու չես Աս-
տուծոյ արքայութենէն: Եւ ո՛չ
մէկը այլեւս կը հարձակէր քան
մը հարցնել անոր:

35. Յիսուս խօսիլ սկսաւ ու ը-
սաւ, երբ կ'ուսուցանէր տաճարին
մէջ. Ինչպէս գալիքները կ'ըսեն
թէ Բրիստոս Դաւթի որդին է:

36. Եւ ինքը Դաւիթ, Սուրբ
Հոգիէն ներշնչուած, կ'ըսէ. Տէրն
ըսաւ իմ Տիրոջս. Նստէ՛ իմ աջ
դիմի մինչև որ քու Թշնամիներդ
պատուանդան ընեն՝ քու ոտքե-
րուդ:

37. Ա՛րդ, թէ որ նոյն ինքն
Դաւիթ՝ Տէր կ'անուանէ զանի,
ինչպէս կրնայ անոր որդին ըլլալ:

վուրդ լսէր նմա քաղցրութեամբ: Ու շատ մը ժողովուրդ ախորժա-
նօք մտիկ կ'ընէր անոր:

38. Եւ ասէր ուսուցանելով ի իր վարդապետութեան իւրում. 2-
գո՛յն լերուք ի դպրաց անտի, որ
կամին ի հանդերձս երեւելիս չըր-
ջել, զնախողջոյնս խնդրել ի հրա-
պարակս: Մատթ. ԻԳ. 5. Դուկ. ԺԱ.
43, Ի. 46:

39. Եւ զնախաթուս ի ժողո-
վուրդս, և զգահազուլսս ընթի-
րիս:

40. Որ ուտեն զտունս այրիաց,
պատճառանօք յերկարեալ դա-
շօթս, զի աւելի եւս դատաստանս
ընկալցին: Մատթ. ԻԳ. 14:

41. Կայր Յիսուս ընդդէմ գտն-
ձանակին, տեսանէր թէ զիսորդ
ժողովուրդն արկանէր սղօխն ի
գանձանակն. և բազում մեծա-
տունք արկին բազում ինչ: Դուկ.
ԻԱ. 1:

42. Եկն այրի մի և արկ երկուս
լուսայս՝ որ է նախարակիս մի:

43. Եւ կոչեցեալ առ ինքն զա-
շակերտան, ասէ ցնոսա. Ամէն ա-
սեմ ձեզ, զի այրին այն սառա-
պեալ շատ արկ քան զամենեո-
եան՝ որ արկին ի գանձանակն:

44. Քանզի ամենեւին յաւե-

38. Ի հանդերձս երեւելիս...: Արեւ-
ելքի թէ Արեւմուտքի մէջ միշտ լայն ըզ-
գեսան ի պատուի էր: Բայց Փարիսեցիք
իրենց վերարկուին անհամեմատ մեծ լայ-
նութիւն ու երկայնութիւն կրտային ու-
պէս զի ասով աւելի յաշողէին իրենց ձգե-
լու ամէնուն ուշադրութիւնը: — Նախ ող-
ջոյնս խնդրել, աստ փառասէրները կը պա-
հանջէին որ իրենց անցած պահուն ամէն
մարդ խորին յարգանքով բարեւէր զիրենք.

38. Ու կ'ըսէր՝ սորվեցնելով
իր վարդապետութեան մէջ. 2-գո-
յնէ՛ք ան Դպիրներէն, որոնք կ'ու-
զեն փառաւոր զգեստներով պտը-
տիլ, ու առաջինն ըլլալով ող-
ջուսուիլ հրապարակներու մէջ:

39. Եւ առաջին ամիսներուն
վրայ նստիլ ժողովատեղեաց մէջ,
և առաջին տեղը ընթրիքներու
մէջ:

40. Որոնք կ'ուտեն որբեւարի-
ներու տունները, պատրուակներով
կ'երկարեն աղօթքներն՝ որպէս զի
աւելի դատաստան մը ընդունին:

41. Յիսուս գանձանակին դի-
մացը կենալով, կը տեսնէր թէ
ի՞նչպէս ստակ կը ձգէր ժողովուր-
դը գանձանակին մէջ. ու շատ մը
հարուստներ շատ բան ձգեցին:

42. Որբեւարի մըն ալ եկաւ ու
ձգեց երկու լուսա՝ որ կ'ընէ մէկ
նաքարակալ:

43. Եւ իր քով կանչելով ա-
շակերտներն, անոնց ըսաւ. Ճըշ-
մարիտ կ'ըսեմ ձեզի թէ ան խեղճ
որբեւարին աւելի ձգեց քան այն
ամէնը որոնք ձգեցին գանձանա-
կին մէջ:

44. Որովհետեւ, ամէնքն իրենց

որ ամօրս օյէրներ իսկ սահմաններ Լինս
41. Ընդդէմ գանձանակին: — Տաճարին
մէջ 13 գանձանակներ կային, ստոնցմէ մի-
ոյն դէմը նստած էր Յիսուս դիտելու հա-
մար: Յիշեալ գանձանակները դրուած էին
ան սիւններուն առջեւ՝ որոց վրայ շինուած
էր կիներուն վերնատունը:

42. Նախարացիքը հոովմէական դրամ
մըն էր շուրջ 1 1/2 սանդիւկ արծողութեամբ:

լորդաց խրեանց արկին. այլ նա աւելորդներէն ձգեցին. իսկ ան-
ի հրաւորութենէ իւրմէ, զամե- իր շքաւորութենէն, ինչ որ ու-
նայն ինչ զոր ունէր՝ արկ դոյլս նէր, որչափ որ իրեն կը մնար ապ-
չափ զկեանս իւր:

րելու համար:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յիսուս կը մարգարեանայ Երուսաղէմայ կործանումը. — Յոյց կուտայ սոյն
աւերիմ՝ ինչպէս ասեալ արարեալս կատարածիմ յառազմեաց ճշմանքը:

1. Եւ յեղանկէն նորա ի սահարէ 1. Ու երբ տաճարէն դուրս կ'ել-
անտի, ասէ ցնա մի յաշակերտացն նէր, իր աշակերտներէն մին անոր
նորա. Վա՛րդապետ, տե՛ս որպի- ըսաւ. Վա՛րդապետ, նայէ՛ ի՞նչ
սի են քարինքս, և ո՛րպիսի շին- քարեր են ասոնք, և ի՞նչ շին-
ուածք: Մատթ. ԻԳ. 1:

2. Պատասխանի ետ նմա Յի- 2. Յիսուս անոր պատասխանեց
սուս և ասէ. Տեսանե՛ս զայդ ա- ու ըսաւ. Կը տեսնե՛ս ատ ամէն-
մենայն շինուածս, ամէն տեսե՛մ շինուածքը, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի
ձեզ՝ եթէ Ո՛չ թողցի այդ քար թէ, Պիտի չմնայ հող քար մը
ի քարի վերայ՝ որ ո՛չ քակեսցի: քարի վրայ՝ որ չքայքայուի:

3. Եւ մինչ նստէր նա ի լերինն 3. Ու մինչ կը նստէր ան՝ Զի-

1. Յեղանկէն նորա ի սահարէ... — Ա- կողմի Տաճարին պարսպաց պատկառելի
ւագ երեքշաբթի օրը կը պատահէին աս տեսարանը բնականօրէն իրեն ձգեց աշա-
բաները, և աստ իրիկունն ալ Յիսուս կը կերտաց ուշադրութիւնը, այնպէս որ չկըր-
ձգէր բողոքը՝ Բեմանայ քաշուելու հա- ցան տեսնը զօպել իրենց ապշութիւնը և
մար, ինչպէս ըրած էր նախընթաց երկու Յիսուսի եւս դիտել տուին ըսելով. Տե՛ս,
իրիկունները. բայց այս անգամուն վերջ- ո՛րպիսի են քարինքս...: Եւ յիշաւ,
նականապէս կը ձգէր Երուսաղէմ ուր պիտի Յովսէփոս [Պատմ. Հր. Ե. 6. 8. Հնունթ,
չնչեցնէր այլեւս իր սիրտիչ ձայնը, Գե- ժե. 11, 3], կը պատմէ թէ կային այնպի-
ղեցիկ կը նկարագրէ Եզեկիէլ մարգարէ սի քարի զանգուածներ որոնց երկայնու-
[ԺԱ. 22] թէ ի՞նչպէս ետնիլ Թողիլը ըրած Թիւն էր 25 կանգուն, բարձրութիւնը 8, և
էր Տաճարը և Երուսաղէմը անոնց անար- լայնութիւնը 12: Ասոր համար էր որ Հռով-
մանութեան համար. «Այն ատեն բերովը- մայեցուց բարձրեց զործիները 15 օր շա-
ները բարձրացուցին իրենց թեւերը և ա- րունակ զանի ուժակոծելէ վերջը հազիւ
նիւններն ալ անոնց հետ, և Իսրայէլի Առ- կրցան մէկ քանի թեւեր կողքեր յառաջ
տուածոյ փառքը կը հանգչէր անոնց վայ. բերել, Յարդ իսկ կը տեսնուին անոր ճիւմ-
ու Տիրոջ փառքը ելաւ քաղաքին մէջէն և նաքարեքէն այնպիսիներ, ինչպէս կը գրէ
կեցաւ ան լերան վրայ որ կը գտնուէր Մ. տը վօկիւէ նշանաւոր Պաղեստինախօսը,
քաղաքին արեւելակողմը»: Այսպէս եղաւ նաև որոնք 7 մէկը 85 հ. մ. երկայնութիւն ու-
Յիսուսի ընծացքը: Երբ կ'իջնէր նա իր ա- նին. մանաւանդ, կ'ըսէ, կայ հատ մը ու-
շակերտաց հետ Կեղրովի հեղեղատը, նոյն րուն երկայնութիւնն է 12 մէկը:

2րթենեաց յանդիման տաճարին, թենեաց լերան վրայ տաճարին հարցանելին ցնա առանձինն՝ Պետրոս, և Յակոբոս, և Յովհաննէս, և Անդրէաս:

4. Ասա՛ մեզ, երբ լինիցի այդ և զինչ նշան է՝ յորժամ կատարելոց լիցէ այդ ամենայն:

5. Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո՛սա. 2դ՝՝՝ կացէք, մի՛ որ զձեզ խաբեացէ: Եփես. Ե. 6: Բ. Թես. Բ. 3:

6. 2ր բազումք եկեացեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ Ես եմ Քրիստոսն. և զբազումս մոլորեցուցին:

7. Այլ յորժամ լսիցէք պատերազմաց՝ մի՛ խռովիցիք, զի պարտ է լինել. բայց չեւ է կատարածն:

8. 2ր յարիցե ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թա-

թենեաց լերան վրայ տաճարին հարցանելին ցնա առանձինն՝ Պետրոս, և Յակոբոս, և Յովհաննէս, և Անդրէաս:

4. Ըսէ՛ մեզի, երբ պիտի ըլլայ ատ բանը. և ի՞նչ նշան պիտի ըլլայ՝ երբ ատ ամենը կատարուի սկիսին:

5. Յիսուս պատասխանեց ուրաւ անոնց. 2դ՝՝՝ եղիք, մէ՛կ մը զձեզ չխաբէ:

6. 2ր շատեր պիտի գան իմ անունովս, ու պիտի ըսեն՝ թէ Ես եմ Քրիստոսը. և շատերը պիտի մոլորեցնեն:

7. Բայց երբ դուք պատերազմներ ու պատերազմներու համբաւը լսէք՝ մի՛ խռովիք, որովհետեւ պէտք է որ ըլլան. բայց զեւ չէ կատարածը:

8. 2ր, ազգ՝ ազգի վրայ պիտի ելլէ, ու թագաւորութիւն թա-

6. Բազումք եկեացեն յանուն իմ. — Ինչ պէս ըսած ենք Ս. Մատթէոսի մեկնութեան մէջ, Յիսուսի սոյն մարգարէութիւնները կը վերաբերին միեւնոյն ատեն Թէ՛ Երուսաղէմի կործանման, և Թէ՛ աշխարհի կատարածին. և որ ժամանակին մօտեցած ըլլալուն առաջին նշանը այն պիտի ըլլայ որ շատ մը սուտ-քրիստոսներ պիտի երեւին, որոնք պիտի խաբեն ժողովուրդը, Յովսէպոս կը պատմէ Թէ, այն սուտ-քրիստոսներէն շատերն իր ժամանակ յաշուեցան ահագին բազմութիւն մը անասպատ տանելու՝ անոնց առջեւ հրաշքներ գործելու պատրուակաւ: Նոյն իսկ, Տաճարին բռնկած միջոցին, վեց հազար հոգի ամէն հասակէ և ամէն դասակարգէ, ներս խռովեցին Տաճարին մէջ սուտ-քրիստոսի մը խօսքերէն խաբուելով, ու հոն չարաչար այրեցան: Աշխարհի կատարածին ատենն ալ, պիտի չպակ-

սին այս կարգի դիւրահաւաններ ու սուտ-քրիստոսներ:

7. Յորժամ լսիցէք պատերազմուս... — Երկրորդ նշանը պիտի ըլլայ՝ մօտ տեղեր կամ հեռուներն ըլլալիք պատերազմները՝ Պատերազմուս կը նշանակէ այնպիսի պատերազմներ որոց ահեղ ձայները մեր ահաւաններով իսկ կը լսենք: Համբաւս պատերազմաց՝ այնպիսի պատերազմներ, որոց լուրը, համբաւը կը հասնի մեր ականջներուն:

8. 2ր յարիցէ ազգ... — Երրորդ նշանը պիտի ըլլայ որ, ազգեր ու պետութիւններ լի նախանձու և ատելութեամբ հանդիպ իրարու, պիտի ջանան ճգնել ու ոչնչացնել իրարու: — Եղիցի շարժումով: Զորքորդ նշանը պիտի ըլլայ ահեղ երկրաշարժեր որ պիտի զրդեն երկրագունդի զանազան կետերը: — Հինգերորդ նշանը պիտի ըլլայ

գաւորութեան վերայ. և եղիցին գաւորութեան վրայ. և տեղ տեղ շարժուանք ի տեղիս տեղիս, սովք երկրաշարժեր պիտի ըլլան, սոսայշայն ամենայն սկիզբն է երթիւններ. բայց ան ամենը տառապանաց սկիզբն է:

9. Եւ զձեզ իսկ մատնեցին յատենս, և ի ժողովուրդս տանջիցիք, և առաջի գաղաւթաց և թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայութիւն նոցա,

10. Եւ ամենայն հեքանոսաց: Բայց նախ պարտ է Աւետարանիս քարոզել:

11. Այլ յորժամ տանիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցէք, և մի՛ դատաւ ամիցէք թէ ու մի՛ մտածէք թէ ի՞նչ պիտի լինի խօսիցիք. այլ որ ինչ տացի խօսիք. հապա ինչ որ ան ժամանակ ձեզի տրուի՝ զայն խօսեցէք. սիցիք. զի ո՛չ դուք էք որ խօսիցիք, այլ Հոգին Սուրբ: Մատթ. 10: 19: Դուք. ԺԳ. 11: ԻՍ. 41:

12. Մատնեցէ եղբայր՝ զեղբայր ի մահ, և հայր զորդի. և յարիցեն որդիք ի վերայ հարց, և սպանանիցին զնոսա:

12. Եղբայր՝ իր եղբայրը պիտի մատնէ մահուան, և հայրն իր որդին. ու որդիք իրենց հայրերուն վրայ պիտի ելնին, ու պիտի սպաննեն զանոնք:

9. Ի վկայութիւն նոցա: — Ասիւք, անոնց առջեւ, ձեզի սովորեցուցած վարդապետութիւններու ճշմարտութեանն ու սրբութեանը վկայելու համար:

10. Եւ ամենայն հեքանոսաց... — Հայրենի թագաւորութեան իմաստն հոս Թեմա մը կը տարբերի Յունականէն ու Լատինականէն: Ըստ Հայ. Թագաւորութեան պիտի ըլլար. Դատաւորներու ու Թագաւորներու նաև բոլոր հեծանաւորներուն առջեւ պիտի վկայէք իմ ուսուցած ճշմարտութեանցս: Ըստ Յոյն և Լատ. Թագաւորութեան առջեւ պիտի վկայէք... թագաւորներու առջեւ պիտի վկայէք... Ու նախ՝ պէտք է որ բոլոր հեծանաւորաց մէջ քարոզուի Աւետարանը:

13. Եւ եղիջիք ասեցեալք յամենեցեանց վասն անուան իմոյ. լաք ամենուն իմ անուանս հաւաքի որ հաճեցեալսն ի սպասո՛ւ նա մար. բայց ով որ մինչ ցվերջ հաճեցէ՛ անիկա պիտի ապրի:

Երուսաղեմայ կործանումին ու ալիսարհիս կատարածին խիստ մտաւարտ նշանները. — Ժողովուրդին խաւնապը. — Բնութեան օրինաց խանգարումը.
— Յորդոր առ ի զգուշութիւն:

14. Եւ յորժամ տեսնիցէք զպղծութիւն աւերածին, զի կայցէ ի տեղում ուր չիցէ արժան — որ ընթեռնուն ի միտ ապցէ —, յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ վախիցեն ի լերինս. Դան. Թ. 27: Մատթ. ԻԴ. 15: Դուկ. ԻԱ. 20:

15. Եւ որ ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ ի տուն, և մի՛ մացէ բառնալ ինչ ի տանէ իւրմէ.

16. Եւ որ յագարակին իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զծործս իւր:

17. Բայց վա՛յ իցէ յդեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ:

18. Յաղօթս կացէք՝ զի մի՛ ձմերանի լինիցի այն:

19. Եղիցին առուքն այնքիկ նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբէք այնպիսիք ի սկզբանէ աւարածոց մինչեւ ցայժմ, և մի՛ այլ լիցի:

20. Եւ եթէ ոչ էր կարճեալ Աստուծոյ զաւուրսն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտ-

14. Զպղծութիւն աւերածին. . . — Տե՛ս, ասոր և յետագայ անցից մեկնութիւնը Մատթ. ԻԴ. 15. . .

17. Բայց վա՛յ իցէ. . . — Անէծք մը չէ որ կ'ընէ Տէրն մեր յղի և ստնտու կիներուն, այլ իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ անոնց սանդէպ. Վայ հոմանիշ է հոս՝ եղձակ, աւա՛ղ բառերուն:

13. Եւ դուք ասելի պիտի ըլլաք ամենուն իմ անուանս հաւաքի որ հաճեցէ՛ անիկա պիտի ապրի:

14. Եւ երբ տեսնէք աւերածին պղծութիւնն, որ պիտի ըլլայ հոն՝ ուր չի վայելեր. — ով որ կը կարգայ թո՛ղ ի միտ առնու —, այն տունն անոնք որ Հրէաստանի մէջն են՝ թո՛ղ լեռները վախճին.

15. Եւ ան որ տանեաց վրայ կը գտնուի՝ թո՛ղ չիջնայ տուն, ու ներս չի մանէ իր տնէն բան մը վերցնելու համար.

16. Եւ ան որ ագարակն է՝ թո՛ղ ետ չգառնայ իր լաթերն առնելու համար:

17. Բայց վա՛յ յղի ու ստնտու կիներուն այն օրերը:

18. Աղօթք ըրէք որ ձմեռ առնեն չըլլան աս բաները:

19. Այնպիսի նեղութիւններ պիտի ըլլան այն օրերն՝ որոց նմանը բնաւ եղած չէ արարածոց սկիզբէն մինչեւ հիմայ, և ուրիշ մըն ալ պիտի չըլլա՛յ:

20. Ու թէ որ Աստուծոյ կարճեցուցած չըլլար այն օրերն իր ընտրեալներուն համար, և ո՛չ մէկ մարմին պիտի ապրէր. բայց

20. Եթէ ոչ էր կարճեալ. . . — 14 հաւմարէն մինչեւ այն համարին վերջը Յիսուսի ըրած գաղաղութիւնները ի մասնաւորի կը վերաբերին Երուսաղեմի կործանման. իսկ 21 համարէն մինչեւ 31 համարը կը վերաբերին ի մասնաւորի աշխարհի կատարածին:

իւրոցն զորս ընտրեալ՝ կարճեաց այն ընտրելոց համար զորս ինք զաւուրսն զայնոսիկ:

21. Յայնժամ եթէ ոք ասիցէ զձեզ եթէ Ահա ասիկ է Քրիստոսն կամ աւանիկ, մի՛ հաւատայցէք: Գաթ. ԻԴ. 23: Դուկ. ԺԵ. 23: ԻԱ. 8:

22. Զի յարիցեն սուս փրիսնոս և սուտ մարդարէք, և տայեն ներ պիտի ելնեն ու սուտ մարդարէներ, և նշաններ ու հրաշքերեցուցանելոյ, եթէ հնար լինի իցէ, և զընտրեալսն:

23. Բայց դուք զգո՛ւշ լերուք, ահա ասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն:

24. Այլ յաւուրսն յայնոսիկ, յետ նեղութեանն այնոսիկ, աւագակն խաւարեացի և լուսին ոչ տայցէ զլոյս իւր: Եսայի, ԺԴ. 10: Եղեկ. ԼԲ. 7: Յովել, Բ. 10:

25. Եւ աստեղք յերկնից թափեացն, և զօրութիւնք յերկնս շարժեացն:

21. Յայնժամ. . . — «Պէտք չէ խնայել թէ՛ Թէոփիլակոսս, է՛ է վերը նկարագրուած աղետներուն շարունակութիւնն ըլլալով պիտի սրտահին ստորեւ գրուած մարգարէութիւններն՝ այլ Թէ Երուսաղեմայ կործանուէն վերջը»։ Այսպէս նաեւ կ'ըմբռնեն բոլոր Ս. Հորքը:

22. Զի յարիցեն սուս փրիսնոս. . . — Նշագետ Երուսաղեմայ կործանուէն առաջ տեսնուած էին այսպիսի անձեր որոնք խաւարած էին ժողովուրդը, նոյնպէս ալ յետագային առաջ պիտի տեսնուին նման սուտ փրիստոսներ՝ որոնք հրաշալի բաներ իսկ պիտի ընեն խաբելու համար ժողովուրդը:

24 եւ 25. — Մեզական խաւարեացի. . . — Յետեւեան սահմանած այն իմաստուն օգնութիւնն որոնցմով կը կառավարուին տիեզերք ֆիզիկայէն, յանկարծ պիտի քակուին ևս ատեն՝ պիտի չկարենայ այլ ևս արեւն ուր Սյրեցեալ զօրներուն բոյսերն ու անա-

իր լոյսով ու ջերմութեամբ ոգեւորել շնչաւոր էակները. աստղերը պիտի շեղին իրենց հետեւած ծիրէն ու պիտի Թափաւին անջրպետին մէջ յո՛ւ պէտ յո՛ւ կամ. անագին ընդհարում մը տեղի պիտի ունենայ և որմէ զոյացած ջերմութենէն պիտի լափին, անշնչանան ու մոխիր դառնան բոլոր էակներն. Տե՛ս նաեւ, Բ. Պետ. 1-13: Յայնժ. Ի. ԻԱ. Ահա՛ այսպէս պիտի ըլլայ, Տեսնենք մարգարէութեան համաձայն աշխարհի կատարածը:

Աստեղագետներու և երկրաբաններու կարծիքն ալ, Թէ և խիստ տարբեր, սակայն զարճեալ կը յանգին Աւետարանի սկզբունքին: Անոնց մէկ բանին հոս կը յիշատակենք:

Ա. Երկրագունդիս բնական ջերմութիւնն հետզհետէ կը նուազի: Այնպիսի երկիրներ, ուր Սյրեցեալ զօրներուն բոյսերն ու անա-

26. Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպով՝ զօրութեամբ և փառօք բազմօք:

27. Եւ յայնժամ առաքեաց զհրեշտակս իւր և ժողովեաց զընտրեալս իւր ի նորից հողմոց, ի ծաղաղ երկրի մինչեւ ի ծագս երկնից: Մատթ. ԻԳ. 31:

28. Բայց դուք ի թղենոյ անտի՝ ուսնի՛ք զառախն, յորժամ տակաւ ոտքն նորա կակղանայ՝ ցեն և տերեւ արձակիցի ի նմա, գիտէք թէ մերձ է ամառն:

29. Նոյնպէս և դուք, յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝ գիտասնի՛ք թէ մերձ է առ դուռն:

30. Ամէն ասեմ ձեզ, թէ ո՛չ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի:

26. Եւ այն ատեն պիտի տեսնեն Որդի մարդոյ եկած ամպերուն մէջ՝ զօրութեամբ ու մեծ փառքով:

27. Եւ այն ատեն պիտի զրկէ իր հրեշտակներն ու պիտի հաւաքէ իր ընտրեալներն երկրիւն զորս կողմերէն, երկրի ծայրերէն մինչեւ երկնից ծայրերը:

28. Բայց դուք թղենիւն սովրեցէք առաւել. երբ ա՛լ կը կակղէ նաւն անոր ճիւղերն ու կը ծլին տերեւները, գիտէք թէ մօտ է ամառը:

29. Նոյնպէս ալ դուք, երբ կը տեսնէք թէ եղան աս ամէնը՝ գիտէ՛ք թէ մօտ է, դրան քով իսկ:

30. Զճմարի՛տ կ'ըսեմ ձեզի թէ պիտի չանցնի աս ազգը մինչեւ որ այս ամէնը կատարուի:

սունները կը վխտային՝ ինչպէս Սիպերիայ, Ֆրանսայ, այժմ բոլորովին ոչնչացած են անոնք ջերմութեան նուազելուն հետեւանք: Պիտի գայ ուրեմն ատեն մը, որ երկրիս բնական ջերմութիւնը բոլորովին նուազելով, այլ ևս անկարելի ըլլայ շնչաւոր էակներու, մանաւանդ մարդու գոյութիւնն, և ան ատեն պիտի ոչնչանայ մարդկային ցեղը:

Բ. Երկիրս չափաւոր թուով մարդ՝ կրնայ սնուցանել, բայց արդէն մէկ կողմէն հողը կ'աղբատանայ, ու բոյսերը կը կորսնցնեն իրենց սնուցիչ յատկութիւններն. ինչպէս փորձով կը տեսնեմք թէ Փոքր-Ասիոյ բերքերն աւելի համեղ ու սնուցիչ են՝ քան Անգղիոյ կամ Ֆրանսայի, մինչ պատմութեանէն քաջ գիտեմք թէ ժամանակաւ այս երկիրներուն մէջ ալ նոյն յատկութիւններն ունէին, և որ հետեւանքով, կեանքը կը կարճըննայ, առողջութիւնները կը խարխլան, և

միւս կողմէն մարդոց թիւը կ'սնդի հետզհետեւ ուստի և ատեն մը պիտի գայ՝ որ կամ մալ գիկ անօթութենէ՝ մեռնին, և կամ զիրոյ յոշոտեն, և աշխարհս վերջանայ:

Գ. Նորանոր փորձերով հաստատուած թէ Արեւն ալ իր բոլոր զրուծեամբ կը դառնայ իրմէ հարեւրաւոր անգամ մեծ եղող ուրիշ արեւի մը կամ մարմնոյ մը շուրջը, և սմէն մէկ երկվայրկեան մէկ քանի հարիւր միլիոն կը մօտենայ ատ Խնդին կեդրոնին՝ Արդ, պիտի գայ վայրկեան մը, որ ծայր տիեան մօտեցած ըլլալով անոր, պիտի քառուի անոր ճողղական զօրութենէն և ինք իր բոլոր արփանեալներն, երկիրս ալ միտսին, կուլ տրուին անկէ:

Դ. Ծանօթ իր մըն է թէ հազարաւոր մլրդակներ կը թափառին անջրպետին մէջ Ծառ կարելի է որ ասոնցմէ մին յանկալ ընդհարի երկրիս ու զանի փշուր փշորնէ, և կամ այլէ տոչորէ:

31. Երկինք և երկիր անցցեն, բանք իմ ոչ անցանիցեն:

32. Այլ վասն աւուրն այնորիկ ժամու՝ ոչ ոք գիտէ, ո՛չ հրեշտակք յերկինս՝ և ո՛չ Որդի, բայց պի միայն:

33. Զգո՛յ՛ եղբուք. սկեցէք կացէք յաղօթս. զի ոչ գիտէք ի՞նչ ժամանակն իցէ: Մատթ. ԻԳ. 42:

34. Որպէս այր մի գնացեալ տար աշխարհ՝ թողուցու զտուն իր, և տայցէ ծառայից իւրոց խանութիւն, և իւրաքանչիւր զործս իւր. և դռնապանին պատուէր տայցէ զի արթուն լինիցի:

35. Ա՛րդ, արթո՛ւն կացե՛ք, զի գիտէք ե՛րբ ա՛յր տանն գայցէ, րեկորեայ՝ եթէ ի մէջ գիշերի՝ թէ ի հաւախօսի՝ եթէ ընդ աւուտս:

36. Գուցէ եկեալ յանկարծակի, տանիցէ զձեզ ի բուն:

37. Բայց զոր ձեզդ ասեմ՝ անեցուն ասեմ. Արթո՛ւն կացէք:

32. Այլ վասն աւուրն, . . . ոչ ոք գիտէ. Եւ ո՛չ Որդի: — Յիսուս իբր մարդ, և սկ մարդկութեան լուսովը չէր գիտեր աշխարհս կատարածին ժամանակը, բայց ի Աստուած-Մարդ կատարելապէս զիր, եւ ու Հայրս մէկ եմք ըսած է Տէրն ինչ որ Հայրը կը գործէ՝ նոյնը ինք կ'ընէ, ինչ որ Հայրը գիտէ՝ նոյնը ինք գիտէ: Բայց ուզեց նա մեզմէ ծածկել նեւն ու ժամը որպէս զի միշտ պատրաստ ենք մենք զմեզ:

34. Որպէս այր մի . . . — Պարբերութեան հաստի առկա մնացած է, բայց զիրքումս

31. Երկինք ու երկիր պիտի անցնին, և պիտի չանցնին իմ խօսքերս:

32. Բայց գալով ան օրուան ու ժամուն՝ մէկ մը չգիտեր, ո՛չ երկնից մէջ հրեշտակներն, ու ո՛չ Որդի, բայց Հայրը միայն:

33. Զգո՛յ՛ եղիք. արթուն կեցէք ու աղօթք ըրէք. որովհետեւ չէք գիտեր թէ ե՛րբ է ժամանակը:

34. Ինչպէս որ մարդ մը հեռու երկիր երթալով, կը թողու իր տունն ու իշխանութիւն կու տայ իր ծառաներուն՝ իւրաքանչիւրին իր աշխատանաց համաձայն. և դռնապանին պատուէր կու տայ որ արթուն մնայ:

35. Ուրեմն արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր ե՛րբ պիտի գայ տանուտէրը, իրիկունը՝ թէ կէս գիշերին՝ թէ հաւախօսին՝ թէ առաւօտեան դէմ:

36. Թերեւս յանկարծ գալով, քնոյ մէջ գտնէ զձեզ:

37. Բայց ինչ որ ձեզի կ'ըսեմ՝ ամենուն կ'ըսեմ. Արթո՛ւն կեցէք:

բունելի է ինչ որ լրութեամբ անցած է: Կրնամք սոյն նախադասութիւնն այսպէս սկզբիլ անգլիական թարգմանութեան հետեւելով՝ «Որդի մարդոյ կը նմանի ան մարդուն որ հեռու երկիր երթալով. . . »:

37. Արթուն կացէ՛ք: — Առաջին դարբու քրիստոնէայք Յիսուսի այս պատուէրը իրենց սրտին մէջ լաւ մը տողորուած պատկեր համար, ստեպ՝ Վիրգիլիոս [Վիճիլանս = Հսկող], Գրիգոր [Գրիգորէ՛օ = Հսկեմ. արթուն մնամ] անունը կ'առնէին, ինչպէս կը տեսնուին գետնադարձներու արձանագրութեանց մէջ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Մանգետրիքի դաւադրութիւնը հանդէպ Յիսուսի.—Բերքանայ մեզ Յիսուսի ընթրելն ու մեծագին իւղով օծուիլը.—Յուդայի վատ ընթացքը:

1. Եւ էր Չատիկն և Բաղարջա-կերֆ յետ երկուց աւուրց. խընդ-րէին Քահանայապետքն և Դպիրք՝ եթէ զիա՛րդ զնա նենգաւ կալ-կալ սպանանիցեն: Մատթ. ԻԶ. 3. Դու՛թեամբ բռնելով սպանեն: Դռնի. ԻԲ. 1.
2. Բայց ասէին թէ Մի՛ ի տօնի աստ, զի մի՛ խառովութիւն լինիցի ի ժողովրդեանն:
3. Եւ մինչ էր ի Բեթանիայ՝ ի ատն Սիրմովի բորոտի բազմաւ, եկն կից մի՛ որ ունէր շիշ իւղոյ նարգեան աղնուի մեծագնոյ. և բեկեալ զշիշն՝ հեղ ի վերայ գըլ-խոյ նորա: Մատթ. ԻԶ. 6. Յովհ. ԺԲ. 1.
4. Եւ աշակերտքն զչարէին և ասէին. Ընդէ՛ր եղև կորուստ իւ-ղոյդ այդորիկ:

1. Չատիկն տօնին Բաղարջակերֆ ալ կ'ը-սէին չրէայք, որովհետեւ, այն Տօնին եօթն օր շարունակ բաղարջ կ'ուտէին անոնք՝ ի յիշատակ իրենց եգիպտոսէն ելնելուն: Չատիկ մասին՝ տե՛ս Մատթ. ԻԶ. 2. Ծա-նօք.:

3. Եկն կից մի: — Աս կինն էր Դազա-րու բոյրը՝ Մարիամ, որու մասին Յիսուս քիչ առաջ ըսած էր. «Մարիամ աղէկ մասն ընտրեց՝ որ պիտի չվերցուի իրմէ»: Դռնի. Ժ. 42.— Եիշ իւղոյ, ըստ Յովնի և Լա-տին Թարգմանութեան՝ այն շիշն աշա-պատէր (ստե մէրմէրի) էր. որու մէջ կը զնէին առ հասարակ անուշահոտ իւղեր: Աս կարգի շիշեր մեծ քանակութեամբ գտնուած են հին գերեզմաններու մէջ: Սիրմովի (փիւ-նիկէ) Թագաւորաց գերեզմաններուն մէջ գտնուածներն եգիպտական ալապատրէ են ու տանձի ձև ունին. բարձրութիւնն է՝

1. Ու երկու օր վերջը, Չա-տիկ ու Բաղարջակերպց օրն էր՝ Քահանայապետք ու Դպիրք կը մտածէին թէ ի՛նչպէս զանի նեն-գութեամբ բռնելով սպանեն:

2. Բայց կ'ըսէին թէ Ո՛չ աս տօնի օրով, որպէս զի խառովու-թիւն չըլլայ ժողովուրդին մէջ:

3. Ու երբ Բեթանիայ՝ Սիրմոն էր, կին մը եկաւ որ նարգեան աղնուի ու մեծարժէք իւղի շիշ մ'ունէր. և շիշը կոտորելով թա-փեց անոր գլխուն վրայ:

4. Եւ աշակերտները կը նեղ-սրտէին ու կ'ըսէին. Ինչո՞ւ կ'որ-սուցաւ այդ իւղը:

Օ մ. 25. բերանին՝ Օ մ. 03. իսկ Թանձրու-թիւննին հազիւ մէկ հարիւրորդամէրը՝ Նարդեան. Նարդոսն անուշահոտ իւղ մըն էր որ կը հանէին այն անունը կրող (Nardostachys jatamansi) տունկին արմատ-ներէն ու տերեւներէն: Այդ տունկին տե-սակները խիստ շատ են, Պլինիոս լատին բնագէտը 12 տեսակ նարդոս կը զանազանէ: Երբ է՛ն յարգին է, կ'ըսէ, հնդկ նար-դոսը, որու լիպրան նոյն ատենները կ'աղ-ժէր 100 դենար [շուրջ 404 դր.]։ Սըլ՝ Ուիլեմ Ժէյմս՝ նշանաւոր արեւելագէտը՝ մասնաւոր ուսումնասիրութենէ մը ետքը՝ գտաւ որ Նարդոսը Մրուանաց [Քէտի օթու] ցեղէն էր՝ զոր սիւնայիդ կը կոչեն Արաբ՝ իսկ Հնդկի՛ք՝ Ժաքարմանի որ ըսել է մաղի պատրոյդ, որովհետեւ այն տունկը կը նը-մանի կուղբի պոչին: Եւ այսպէս, անոր ա-նունը դրաւ Մրուանակաւ Ժաքարմանի

5. Մարթ էր զայդ իւղ վաճա-ռել աւելի քան երեք հարիւր դա-նեկանի, և տալ աղքատաց. և զայրանային նմա յոյժ:

6. Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թո՛ղ տուք դմա՛, զի՛ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա՛յիս:

7. Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս. այլ զիս ո՛չ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք:

8. Դա զոր ունէրդ՝ արար. յա-ռաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան պատանաց:

9. Ամէն ասեմ ձեզ. Ուր և քա-րդեացի Աւետարանս այս ընդ ա-մենայն աշխարհ, և զոր արար դա՛ խօսեցի վասն յիշատակի զորին:

10. Եւ Յուդա Սկարիովտացի, մի յերկոտասանից անտի, գնաց առ Քահանայապետսն զի մատնե-ցէ գնա նոցա: Մատթ. ԻԶ. 14.

11. Նոքա իբրեւ լուան՝ խըն-դացին, և խոստացան տալ նմա արծաթ: Եւ խնդրէր թէ զիա՛րդ պարագով մատնեցէ գնա:

Պատեքի խնդոյից պատրաստութիւնք.—Օրինական ընթրիք.— Հացին ու քինիին Գոյացափոխութիւնք:

12. Եւ յառաջնում աւուր Բա-ղարջակերպցն, յորժամ զՉատիկն շինուին, ասն ցնա աշակերտքն.

(Valeriana jatamansi) եւ զոր կը գոր-ծածեն այժմ բոլոր բուսաբանները:

5. Աւելի քան երեք հարիւր դանեկանի: — Որ ըսել է շուրջ 11 օսմ. ոսկի. Տե՛ս, Cavedoni, Numismat. bibl. էջ 105.— Եւ Տալ աղխաց. «Աղքատափութեան պատրուակին տակ, կ'ըսէ Պօսիւէ, կը դա-

5. Կարելի էր այդ իւղը երեք հարիւր դանեկանէն աւելի ծախել և աղքատներուն տալ. ու սաս-տիկ կը բարկանային անոր դէմ:

6. Եւ Յիսուս ըսաւ անոնց. Թողէ՛ք ատիկա, ինչո՞ւ անհա-գիտ կ'ընէք, զի ինձի հանգէպ բարի գործ մ'ըրաւ ատ:

7. Ամէն ատեն ձեզ հետ կը գտնուին աղքատներն ու երբ ու-զէք՝ կրնաք բարիք ընել անոնց. բայց զիս չունիք ամէն ատեն ձե-զի հետ:

8. Աս իր ունեցածն ըրաւ. ա-ռաջուց խնկեց իմ մարմինս ի նշան պատանքի:

9. Ծշմարի՛տ կ'ըսեմ ձեզի. Ուր որ քարոզուի աս Աւետարանը իո-ւր աշխարհի մէջ,՝ ատոր բրածն ալ պիտի խօսուի ի յիշատակ իրեն

10. Եւ Յուդա Սկարիովտա-ցի, տասներկուքէն մէկը, գնաց առ Քահանայապետներուն որ զանի անոնց մատնէ:

11. Երբ լսեցին անոնք՝ ուրա-խացան, ու խոստացան տալ նմա արծաթ: Ու կը նայէր թէ ի՛նչ յարմար առթիւ զանի մատնէ:

12. Ու Բաղարջակերպց աւա-ջին օրն, երբ Չատիկը կը զեն-ուին, աշակերտներն ըսին անոր.

տապարտեն անոնք ատ կնոջ բարեպաշ-տութիւնն ու զանի անխոհեմ կը հռչակեն: Մտած. Աւետարանի: Վերջին շաբաթ 80 օր:

12. Եւ յառաջնում աւուր Բաղարջա-կերպցն... — Այսինքն Նիսան [Մարտ-Ապրիլ] ամսոյ 14ին որ Հինգշաբթի օր մը կ'իյնար ան տարին.— Յորժամ զՉատիկն

25. Ամէն ասեմ՝ ձեզ՝ թէ ո՛չ
ևս յաւելից ընկել ի բերոյ որթոյ
մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից
զնա նոր յարքայութեան Աստու-
ծոյ :

26. Եւ գոհացեալ՝ ելին ի լեւան
Զիթենեաց :

չի տար որ մենք անձամբ գուշակենք կամ
եզրակացնենք . . . Անգամ մըն ալ ըսենք,
ի՛նչ պարզութիւն, ի՛նչ յատկութիւն, ի՛նչ
կորով աս խօսքերուն մէջ, եթէ ուզած ըլ-
լար նշան մը տալ, կամ պարզ նմանութիւն
մը, կրնար ատ բանը մեզի իմաց տալ . . .
Նմանութիւն մ'ըրած ատենն այնպէս մը
կրցած էր դարձնել իր խօսքերն, որ մէկ մը
չէր կրնար անկէ կասկածիլ. Եւ եւմ դուռը.
Եւ եւմ որքը . . . Բաղդատութիւն կամ
նմանութիւն ըրած ատենն՝ Աւետարանիչը
կրցած էին յաւելուլ. Յիսուս այս առակն
ըսաւ, այս բաղդատութիւնն ըրաւ Հոս ա-
ռանց ընթերցողը պատրաստելու, առանց
իրենց ոճը բարեխառնելու, առանց բա-
ցատրելու, ո՛չ առաջ՝ ո՛չ ետքը, հակիրճ
կերպով մը մեզի կ'ըսեն. Յիսուս ըսաւ. Աս
իմ մարմինս է. Աս իմ արիւնս է. իմ մար-
մինս որ կը բաշխուի, իմ արիւնս որ կը
թափուի . . . Ո՞վ կրնայ այս կերպ լեզու
մը բռնել՝ եթէ ոչ անիկա որ ամէն բանի
կարող է . . . Ո՞ր հոգիդ իմ, հոս կանգ
առ առանց բռն մը արտասանելու . . . Կը
լռեմ, կը հաւատամ, կ'երկրպագեմ, ամէն
ինչ կատարեալ է, ամէն ինչ լմացած է :
Պօսիւէ, Մատթ. Աւես. 230 որ . . .

25. Ոչ եւս յաւելից ընկել . . . Կրկին
առնամք գործածք է հոս Տէրն մեր ընկել
բայը. Նախ՝ իր բնական առումով. Յիսուս
ա՛լ պիտի չի խմէ գինի աս աշխարհի մէջ,
որով կ'ուզէ իմացնել թէ քիչ ատենէն պի-
տի մեռնիլ. Երկրորդ՝ խորհրդական առու-
մով. Յիսուս երկինքը պիտի խմէ գինին
իր Առաքելներուն հետ. որով կը յայտնէ
իր փառաւոր յաղթութիւնն ու երկնից մէջ

25. Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ
ա՛լ պիտի չիմամ որթի աս բեր-
քէն մինչեւ ան օրն՝ երբ նոր պի-
տի խմեմ զայն Աստուծոյ արքա-
յութեան մէջ :

26. Ու գոհանալով՝ ելան Զի-
թենեաց լեռը :

իրենց համար պատրաստած երջանկութիւնը
— Հին և նոր մեկնիչք խնդիր յուզած են որո-
շելու համար թէ, երբ Յիսուս կ'արտասա-
նէր Այս պիտի չիմամ որթի աս քերթեմ
բառերն, ինք ճաշակելէ՞ ետքը տուաւ ա-
շակերտաց ալ որ ճաշակեն՝ եթէ ինք չճա-
շակեց ամենեւին ու սոսկ աշակերտաց տուաւ
ճաշակելու՝ Նշոնաւոր Ս. Հարք՝ առաջին
կարծիքէն են, ինչպէս են, Ս. Յովն. Ոսկեր.
[Մեկն. Մատթ. ճառ 82], Ս. Օգոստ. [Վասն.
Վարդ. Քրիստ. հաւատ. Բ. 3.] Ս. Թովմ.
Ագոստինոսի [Summ. Theolog. III. 9. 81.
ձ. 1.] Ս. Հերոնիմոս ալ չվարանիր ըսելու.
Ինձ [եղաւ] կոչնական եւ կոչուեմ. Ինձ
ճաշակող ու ճաշակուած : Սոյն իմաստով
կը կարդանք նաեւ Հայ. Պատարագի արա-
բողութեանց մէջ, Վերաբերումէն անմիջա-
պէս առաջ եղած աղօթքին մէջ. Վասն զի
դու ես որ կ'ընծայես ու կ'ընծայուիս,
որ կ'ընդունիս [կ'ուտես] ու կուտաս ո՞վ
Քրիստոս Աստուած մեր :

Երկրորդ կարծիքէն եղողներն, որոց թիւը
ցանցառ է, սա հիման վրայ հաստատուած
են որ՝ հակառակ Հրէից ան սովորութեան,
ըստ որում՝ Պասքի ընթերցաց ատեն, նախ
ընտանեաց զուխը կը ճաշակէր գինիին ու
ու ետքը կը բաժնէր միւսերուն, Տէրն մեր
կերպով մը դրժեց աս սովորութեան, և ան
վայրկենէն իսկ մերժեց խմելու, իբր թէ
ըսել ուզէր. Ահա աս վայրկենէն իսկ կը
հրաժարիմ խմելու, և աս կեանքիս մէջ այլ
եւս պիտի չիմամ . . .

26. Եւ գոհացեալ. — Հրէից սովորութիւնն
էր որ, Պասքի գիշերը երկու երգ կ'եր-
գէին, և որոց անունն էր Հաշիշ [Ալեկուբ]

Յիսուս կը նախատես Պետրոսի երրակի ուրացութիւնը. — Յիսուսի
նգնածամբ Գերսեմանի պարտեզին մէջ :

27. Եւ ասէ ցնոսա Յիսուս. 27. Եւ Յիսուս անոնց ըսաւ.
Ամէնքին գայթակղելոց էք յի- Ամէնքդ աս գիշեր պիտի գայ-
նէն յայտ գիշերի. զի գրեալ է թագղիք ինձմէ. զի գրուած է
թէ Հարից զհովիւն՝ և ոչխարքն թէ Պիտի զարնեմ հովիւն՝ ու ոչ-
որուեսցին : Յովն. ԺԶ. 32, 2ա. ԺԳ. 7, խաբները պիտի ցրուին :

28. Այլ յետ յարութեան իմոյ, 28. Բայց իմ յարութեանէս ետ-
առաջագոյն երթայց քան զձեզ քը, ձենէ առաջ Գալիլեա պիտի
Գալիլեա :

29. Պատասխանի եւս Պետրոս 29. Պետրոս պատասխանեց ու
և ասէ ցնա. Թէպէտ և ամենե- ըսաւ անոր. Թէեւ ամէնքն ալ
ին գայթակղեցին, այլ ես ո՛չ : գայթակղին՝ սակայն ես ոչ :

30. Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն 30. Եւ Յիսուս անոր ըսաւ.
ասեմ քեզ, թէ դու իսկ յայտ գիշեր, նոյն իսկ դուն՝ դեռ հաւը
գիշերի մինչեւ հաւու խօսեալ չխօսած, երեք անգամ պիտի ու-
նէ, երիցս ուրացիս զիս :

31. Իսկ Պետրոս առաւել ևս 31. Իսկ Պետրոս ա՛լ աւելի կը
նդէր և ասէր. Եթէ մեռանել պնդէր ու կ'ըսէր. Թէ որ քեզի
ևս հասանիցէ ընդ քեզ, զքեզ հետ մեռնիլ անգամ հարկ ըլլայ,
չ ուրացայց : Նոյնպէս և ամե- քեզ պիտի չուրանամ : Նոյնպէս
քեան ասէին :

32. Գան ի գետոյն՝ որում ա- 32. Այն գիւղը գալով՝ որուն
նուն էր Գերսեմանի, և ասէ ցա- անունը Գերսեմանի էր, իր ա-
շակերտան. Նստարո՛ւք ասո՞ մին- չակերտներուն ըսաւ. Նստեցէ՛ք
իւ ես յաղթիս կացից : Մատթ. ԻԶ. հոս մինչ ես աղօթքի պիտի կե-
2. Դու. ԻԲ. 40, նամ :

33. Եւ առնու ընդ իւր զՊետ- 33. Եւ իր հետ առաւ Պետրոսն
ոս, և զՅակովբոս, և զՅովհան- ու Յակոբոսը և Յովհաննէսը. ու
նա. և սկսաւ տխրել և հոգալ : սկսաւ տրտմիլ և հոգ ընել :

նոյն երգերուն առաջինը կ'սկսէր Աշխուիս
ու կը բաղկանար հետեւեալ Սաղմոս-
ներէն. 112էն մինչեւ 117րորդ Սաղմոսը
որիակեալ. Իսկ երկրորդ երգը, որու ա-
նունը մեծ դրած էին՝ որովհետեւ քան ու
անգամ հոն կրկնուած էր «Զի յաւիտ»
էն է որդրմութիւն նորոս : Պէտք է զիտել
սակայն, որ Ա. Սաղմոսները կը համապա-
ասանական Եբրայականին 111էն մինչեւ
117 երրորդն, այս վերջինն ալ ի միասին
աւելուով. Իսկ երկրորդն էր 135րորդ Սաղ-
մոսն ըստ մեզ, և ըստ Եբր.ին՝ 136րորդը
Հաշիշի ա. երկու Սաղմոսները [111 և
112րորդ ըստ Եբր.] կ'երգուէր զեռ սեղան
չնստած. իսկ ֆաղցած Սաղմոսները՝ զատ-
կական ընթերցէն ետքը. Արդ, ասոնց է որ
կ'ակնարկէ Աւետարանը, երբ կ'ըսէ. Գո-
հանալէ վերջը բաշխեցան Զիթենեաց
լեռը. — Զիթենեաց յետեւ մասին տե՛ս,
Ս. Մատթ. ԻԱ. 1. Ծանօթ :
32. Գերսեմանի. — Տե՛ս Ծանօթ. Մատթ.
ԻԶ. 36,

34. Յայնժամ ասէ ցնոսաւ. Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ. մնացէ՛ք աստ եւ արթո՛ւն կացէ՛ք:

35. Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր. և կայր յաղօթս, զի եթէ հնար ինչ է՝ անցէ ի նմանէ ժամն:

36. Եւ ասէ. Արբա՛, Հա՛յր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է. անցո՛ղ զբաժակս զայս յինչն. բայց ո՛չ որպէս ես կաւմիմ՝ այլ որպէս դու կամիր:

37. Եւ զայ՛ դասնէ զնոսս զի ննջէին, և ասէ ցԳեորոս. Սիմո՛ն, ննջէս. ո՛չ կարացեր ժամ մի արթուն կալ:

38. Արթո՛ւն կացէ՛ք և յաղօ՛թս կացէ՛ք, զի մի՛ մաջիք ի փորձութիւն. ոգիս յօժար է, բայց մարմինս տկար:

39. Եւ դարձեալ չորսու եկաց յաղօթս, և զնոյն բանս ասաց:

40. Դարձաւ միւսանգամ անդրէն, և եզիտ ցնոսա ի քուն [բանդի էին աչք նոցա ծանրացեալ], և ո՛չ գիտէին թէ զի՛նչ պատասխանի տայցեն նմա:

36. Բայց ո՛չ որպէս ես կաւմիմ. . . — Իբր կատարեալ մարդ՝ հետեւաբար իբր մարդկային բնութեամբ ու կամքով օժտուած էակ, կը սարսի Փրկիչը տեսնելով իր կրեւիք անհեղինակ տանջանքները. բայց իբր կատարեալ Աստուած՝ հանդիման կ'ուզէ ընդգրկել զայնս. կարծես կատարեալ պատեւրազմ մըն է որ կը մղուի մարդկային բնութեան ու աստուածային բնութեան միջեւ. ինչպէս քիչ վերջը ինք իսկ պիտի խոստովանի ըսելով. Հոգիս՝ [իր աստուածային բնութիւնը] յօժար է կրելու ամէն չարչաւքանք, բայց մարմինս [մարդկային բնութեանը] տկար:

34. Այն ատեն ըսաւ անոն իմ հոգիս մեռնելու աստիճանը. հոս կեցէ՛ք և արթո՛ւն կղէ՛ք:

35. Ու քիչ մը յառաջ երթալով, իր երեսներուն վրայ դնալով, ու կ'աղօթէր որ, երկարելի էր, հեռանար իրմէ ժամը:

36. Ու ըսաւ. Արբա՛, Հա՛յր, ամէն բան կարելի է քեզի. հնարաւոր ինձմէ աս բաժակը. սակայն չէ՛ թէ ինչպէս ես կ'ուզեմ հաղա ինչպէս որ դուն կ'ուզես:

37. Ու գալով զանոնք քնցած դասաւ, և ըսաւ Պետրոս Սիմոն, կը քնանա՞ս. չի կրցած ժամ մը արթուն մնալ:

38. Արթո՛ւն կեցէ՛ք ու աղօթէ՛ք, որ չմոռնէք փորձութեան մէջ. ոգիս յօժար է, բայց մարմինս տկար:

39. Ու կրկին զնաց աղօթեալ, և նոյն խօսքերն ըսաւ:

40. Նորէն վերադարձաւ քնոյ մէջ գտաւ զանոնք [որոնք հետեւ ծանրացած էին անոնց քնքերը], ու չէին գիտեր թէ ի պատասխան տան անոր:

Թիւնը] տկար. — Քրիստոս Թեպէտ կատարեալ Աստուած ու կատարեալ մարդ էր, սինքն՝ իբր կատարեալ Աստուած, զոյրթիւնը, նոյն բնութիւնը, նոյն էութիւնը, ու նոյն կատարելութիւններն ունէր զորս իր երկնաւոր Հայրը. և իբր մարդ՝ կատարեալ մարդկային բնութիւն ունէր, այսինքն, մարմին, կարողութիւն մտաւորական, և ենթարկուած էր հիւանդութեան, քաւարի, ևն. ևն., բայց սոյն երկու բնութիւններն այնպիսի կերպիւ միացեր ի Յիսուս Քրիստոս, որ մէկ անձ, մէկ անձն էր կազմէին:

41. Դայ երրորդ անգամ, և է ցնոսա. Ննջեցէ՛ք այսուհետ և հանգերո՛ւք, զի հասեալ ատկից վերջը ու հանգեցէ՛ք, զի վախճան. եկն ժամ՝ և ահա հասած է վախճանը. եկաւ ժամը անի Որդի մարդոյ ի ձեռս մեռորաց:

42. Օ՛ն, արի՛ք գնացո՛ւք. անաւասիկ մերձեցաւ որ մատուցն է զիս:

41. Երրորդ անգամ մըն ալ է ցնոսա. եկաւ ու ըսաւ անոնց. Քնացէ՛ք ու հանգերո՛ւք, զի հասեալ ատկից վերջը ու հանգեցէ՛ք, զի վախճանը. եկաւ ժամը և ահա Որդի մարդոյ կը մատուցայ:

42. Օ՛ն, ելէ՛ք երթա՛նք. զի անաւասիկ մերձեցաւ որ մատուցն է զիս:

սուս կը ձերբակալուի Յուդայի մէկ Եղանիք վրայ. — Երկու միզադէպեր. — Յիսուս կը ներկայացուի Սանհեդրինի առջեւ որ գումարուած էր Կայիափայի Գալաթառուքեան ներքեւ:

43. Եւ մինչդեռ նա զայն խօսէր, Յուդա Սկարիփտացի՝ յերկոստասանից անտի, և ընդ աւարտս սուսերօք և բրօք՝ Բահանայապետիցն և ի Դպրաց Մարտի: Մատթ. ԻԶ. 47, Դուք. ԻԲ. Յովհ. ԺԸ. 3:

44. Տուեալ էր նշան մատնելին՝ ասէր. Ընդ որում ես համարուից՝ նա է. կալլի՛ք զնա և լի՛ք զգուշութեամբ:

45. Եւ մատուցեալ վաղվա՝ կի՛ ասէ ցնա. Ռաբբի, Ռաբբի և համբուրեաց զնա:

46. Եւ նոքա արկին ի նա ձեռս՝ լալան զնա:

43. Ու մինչ նա այս բանը կը խօսէր, Յուդա Սկարիփտացի՝ տասներկուքէն մին, եկաւ և աւարտս սուսերով ու բիրերով զինուած ամբոխ մը՝ շրկուած Բահանայապետներէն, Դպիրներէն ու Մարտիներէն:

44. Մատնիչը նշան մը տուած էր՝ ըսելով. Զով որ ես պիտի համարեմ՝ ան է. բռնեցէ՛ք զանի ու տարէ՛ք զգուշութեամբ:

45. Եւ իսկոյն մօտենալով՝ ասէր ըսաւ. Վա՛րդապետ, Վա՛րդապետ. և զանի համբուրեց:

46. Եւ անոնք ձեռք զարկին անոր՝ ու զանի բռնեցին:

4. Տարջի՛ք զգուշութեամբ. — Յուդա կը հնար Յիսուսի զօրութիւնը, կը փորձարար մի՛ գուցէ խոյս տար Սանհեդրինի մէջ մարդոց ձեռքէն, ինչպէս երբեմն էր, երբ ժողովուրդն ուզած էր Խաւարները պատրաստ էին դիմադրելու երբեք Յիսուս Թոյլ տար. ուստի կը յուշէր Յուդայ որպէս զի հսկողութեան բռնեմ միշտ զանի. Տարջի՛ք զգուշութեամբ:

